

Լիալիոնսա

Փրկության
աշխատանքի
միասնությունը, էջ 14

Ի՞նչ ես սովորեցի
դեպրեսիայից, էջ 26

Համեստության 3
օրհնությունները, էջ 36

5 եղանակ, որոնցով
երիտասարդները կատարում
են ընտանեկան պատմության
աշխատանքը, էջ 58



«Առաքինի կին ո՞վ
կարող է գտնել.
Նորա գինը ավելի է
քան գոհարները»:

Առակաց 31.10



ՈՒՂԵՐՁՆԵՐ

- 4 Առաջին Նախագահության Ուղերձ: Հավատքով ասված աղոթք**
Նախագահ Հենրի Բ. Այրիսգ
- 7 Այցելող Ուսուցիչների Ուղերձ: Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Կենդանի հացը**

ԸՆՏՐՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

- 14 Միսիոներական աշխատանք, ընտանեկան պատմություն և տաճարային աշխատանք**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Ավետարանը քարոզելը և մեր մահացածներին գտնելը կողք-կողքի կատարվող աշխատանքներ են:

ԿԱԶՄԻ ՎՐԱ

Արջևում, Լուսանկարը՝ Լեւի Նիլսոնի:
Ներքին կազմ, Լուսանկարը՝ Մեթյու Ռեյլի:

- 20 Տունը՝ սովորելու հիմնական վայր**
Տանը սովորած դասերը մեզ հետ են մնում ամբողջ կյանքի ընթացքում և հավերժության մեջ:
- 26 Ջրերի գազաթների վրայով Ջոն Վորներ**
Թեև ես ինձ զգում էի ծածկվող դեպրեսիայի և անհանստության ալիքներով, Աստված ինձ ջրի երեսին էր պահում և թույլ տալիս շարժվել դեպի խոտացված երկիրը:
- 28 Ռահվիրաներ ամեն երկրում: Դարձը և փոփոխությունը Չիլիում**
Նեստոր Կուրբելլո
Այսօր 30 չիլիացիներից զրեթե մեկը Եկեղեցու անդամ է:
- 36 Համեստություն ընտրելու քաջություն**
Քերոլ Ֆ. Մակքոնկի
Որո՞նք են համեստության վարդապետություններն ու օրհնությունները:

ԲԱԺԻՆՆԵՐ

- 8 Ծառայել Եկեղեցում: Շնորհակալություն, Եղբայր Ջեյ**
Քրիստին Փուրսել
- 9 Հին կտակարանի մարգարեներ: Երեմիա**
- 10 Մենք խոսում ենք Քրիստոսի մասին: Նեֆրիտե կաղամբը**
Էլեն Ս. Ջենսեն
- 12 Մեր տները, մեր ընտանիքները: Լիզոչկայի սիրտը**
Մարինա Պետրովա
- 40 Վերջին Օրերի Սրբերի ձայները**
- 80 Միևն ուր հանդիպում: Խաբկանքներ**
Երեց Մ. Ռասսել Բալլարդ
Մատանան արհեստական հրապուրանքներ է օգտագործում, ինչպես ձկնորսը, մեզ որսալու համար:



44

44 Պաշտպանելով այն, ինչին մենք հավատում ենք

Երիտասարդ չափահասները կիսովս են նրանով, թե ինչպես են համարձակորեն պաշտպանել իրենց համոզմունքները:

48 Ավետարանն իմ կյանքում: Իմ միահյուսված վկայությունը

Այվի Նոչե
Մորմոնի Գրքի մասին վկայություն չունենալը ստիպեց ինձ հարցականի տակ դնել Եկե-դեցու համոզման իմ հավատքը:



Տեսե՛ք, թե կարող եք գտնել այդ համարում թաքնված Լիստոնան: Ո՞րն է հարմար ժամանակը ծառայության համար:



58

50 Ընտրության ազատություն, թե՛ բարոյական ազատություն

Մայքլ Ռ. Մորիս
Ընկերս զրկեց իրեն միախոնքական ծառայությունից: Ես ազա՞ւտ կլինեմ արդյո՞ք ընտրելու իմ միախոնք:

52 Հարցեր և պատասխաններ

54 Ինչպե՞ս տալ հարցեր, որոնք կարևոր են

Դեյվիդ Ա. Եղվարդս
Մոլորեք տալ այնպիսի հարցեր, որոնք կօգնեն ուրիշներին ավելի լավ սովորել ավետարանը:

57 Ինչպե՞ս գտնել ուժ և հաջողություն

Երեց Ջեֆրի Ռ. Շոլլանդ
Մենք կարող ենք ունենալ ապահովություն, հաջողություն և երջանկություն, եթե հետևենք Հիսուս Քրիստոսին:

58 Ընտանեկան պատմություն. ես անում եմ դա

Այս երիտասարդները անսպասելի օրհնություններ են ունեցել, կատարելով ընտանեկան պատմության աշխատանքը:

61 Պաստառ. Հայտնաբերելով նրանց, հայտնաբերեք ձեզ

62 Հակադրություն իմ միսիային

Ալեսինդր դե Սոուզա
64 Ավելի շատ բան իմանալով, թե ինչ է սպասվում
Կատրին Ափելսթեթ-Աանենսեն
Լիաժամկետ միախոնքների կյանքը միանգամայն այլ է: Երիտասարդները Օսլոյից, Նորվեգիա, մենք օր պատրաստվում էին փոփոխությունը:



78

66 Ծառայելով այժմ՝ հետագայում ծառայելու համար

Միչ Բարբոսա
Ինչո՞ւ Մորմոնը որոշեց օգնել մաքրել եկեղեցին, իր ընկերների հետ ֆուտբոլ խաղալու փոխարեն:

68 Մաթիլդը պատաստվում է Երիտասարդ Կանանց խմբի համար

Ջենն Ուիլքս

70 Երաժշտություն Պահն է շողալու

Յան Փիլբորո և Ջենիս Զափ Փերի

71 Հատուկ վկա: Ինչպե՞ս ես կարող եմ օգնել ընտանեկան պատմության աշխատանքում:

Երեց Զվենթին Լ. Զուք

72 Տուն բերե՛ք Երեխաների խմբի դասը: «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» ուղերձը եկել է Աստծուց իմ ընտանիքին օգնելու համար

Երին Սանդերսոն և Ջին Բիլզհեմ

74 Ընկերներ ողջ աշխարհում: Ես Բարբարան եմ Չիլիից

Էմի Ջեյն Լիվիթ

76 Մեր եղբ

77 Վերև նայեք

Երեց Ադրիան Օջոա

78 Փոքր երեխաների համար: Ընտանեկան մի թիմ

Շերելի Հարդի

Հիսուս Քրիստոսի Վեցերին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Մտաքին Նախագահություն. Թոմաս Ա. Մոնտո, Շերիլ Բ. Այրիկ, Դիտեր Ֆ. Ուլտրոֆ

Տասներկու Մտաքյալների Քննություն. Բոլո Բ. Փաքեր, Լ. Թոմ Փերի, Ռասսել Մ. Նեյտոն, Դավիդ Շ. Օնգս, Մ. Ռասսել Բալարո, Ռիչարդ Գ. Սքոթ, Ռոբերտ Դ. Շելլ, Ջեֆրի Ռ. Շուլլան, Դեյվիդ Ա. Բեդլար, Քվենթին Լ. Զոգ, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսոն

Խմբագիր. Զրեյա Ա. Զարդոն

Խորհրդատուներ. Մերվին Բ. Առնոլդ, Քրիստոֆեր Գոլդեն, Լարի Ռ. Լորենս, Ջեյմս Բ. Մարտին, Ջոզեֆ Վ. Միստաի

Գլխավոր տնօրեն. Դեյվիդ Տ. Ուորներ
Ընտանիքների և անդամների աջակցման տնօրեն. Կինսենյա Ա. Վոգս

Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Այան Ռ. Լոյբերգ
Գործարար ղեկավար. Գարթ Զենտ

Գլխավոր խմբագիր. Ռ. Վալ Ջոնսոն

Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Զար
Գրողներ և խմբագրողներ. Բրիթանի Բիթլ, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Եդվարդս, Մեթյու Դ. Ֆիլոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Շ. Գարթ, Լառեն Թորթեր Գանթ, Միկոլի Էն Լիվիթ, Մայքլ Ռ. Մորիս, Մայի Ջոնսոն Օրեգոն, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Դոլ Վանդերբերգ, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսոն
Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն

Չևավորում. Ջանեթ Էնդրյու, Ֆեյ Դ. Անդրյու, Մենդի Մ. Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլո, Նեյթ Ջինս, Ջուլիան Հինգլի, Էրիկ Դ. Ջոնսոն, Մյուլան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մուլ, Մարք Վ. Ռոբիսոն, Բրեդ Թիլդ, Կ. Նիկոլ Վոլենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Զոլե Նեբերե Օւ

Հրատարակչության տնօրեն. Ջեն Էն Փիթերս
Հրատարակում. Ջեյմս Ա. Բենթ, Ջոնի Բորդուրի Բրիջ, Ջոնի Բորդեր, Բրայլեն Վ. Գիլի, Դենիզ Քրոքի, Գիննի Ջ. Նիլսոն, Գելլ Թեյլ Դաֆերթի

Նախատպագրություն. Ջեֆ Լ. Մարթին

Տպագրության տնօրեն. Զրեյա Կ. Մեյվիկ

Քաշիման տնօրեն. Սթեֆեն Ռ. Քրիստենսեն

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկատվություն համար այցելեք store.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխիճյուղի ղեկավարին:

Չեռագրերը և հարցերը ներկայացրեք webmaster@liahona.lds.org; Է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liuhona*, Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիլերեն, թաիլ, թայերեն, թելուգու, թուրքերեն, չեխերեն, իսպաներեն, իսլամերեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, լուրվաթերեն, կամբոջերեն, կորիեացի, կորերեն, հայերեն, հայերեն, հինգի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալալագո, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռուսներեն, ռումներեն, սամոյերեն, սինհալ, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քերական, ֆիններեն, ֆիլիպինյան ֆիլիպինյան լեզուներով: (Հրատարակչության համախաղանությունը տարբերվում է ըստ լեզուների):

© 2014 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Լիահոնայի տեքստը և տեսողական նյութերը կարող են բազմապիսի եկեղեցում կամ տանը առանձին, ոչ-առևտրային օգտագործման նպատակով: Տեսողական նյութերը չեն կարող բազմապիսի, եթե սեփականության հատուկ նշում է արված: Չեղիականային իրավունքի վերաբերյալ հարցերը ուղղեք հետևյալ հասցեով. Intellectual Property Office, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150, USA; կամ Է-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:

October 2014 Vol. 15 No. 3. *LIUHONA* (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is \$4.00 per year; Canada, \$4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 707.4.12.5). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Մտքեր ընտանեկան երեկոյի համար

Այս համարը պարունակում է հոդվածներ և միջոցառումներ, որոնք կարող են օգտագործվել ընտանեկան երեկոյի համար: Սիա երկու օրինակ:



«Ընտանեկան պատմություն. Ես անում եմ դա», էջ 58. Կազմակերպել գրառումներ կատարելու միջոցառում: Խրախուսեք ընտանիքի անդամներին գրի առնել որևէ բան իրենց կյանքի վերաբերյալ՝ հիշողություններ անցյալից կամ մի բան, որ պատահել է նրանց հետ այդ օրը: Օգնեք ձեր ընտանիքին հասկանալ, որ կան օրագիր կազմելու տարբեր եղանակներ: Նրանք կարող են գրել, մեքենագրել կամ նկարել իրենց օրագրի գրառումները, կամ նրանք կարող են նույնիսկ ձայնագրել իրենց՝ պատմելով պատմություն ձայնագրելով այն ձայնագրող սարքի միջոցով: Խրախուսեք ձեր ընտանիքին շարունակել

հաճախակի գրառումներ կատարել իրենց օրագրերում:

«Ավելի շատ բան իմանալով, թե ինչ է սպասվում», էջ 64. Խորհեք միսիայի նախապատրաստության միջոցառում անցկացնելու մասին, ինչպես արեց մի ծուխ Նորվեգիայում: Դուք կարող եք ուսուցանել նույն բաները, ինչ նրանք ուսուցանեցին, օրինակ, թե ինչպես սկսել ավետարանի մասին զրույցներ կամ ինչպես արդյունք սպիտակ վերնա-շապիկը, կամ դուք կարող եք կենտրոնանալ այլ հմտությունների վրա, որոնք, ձեր կարծիքով, կարող են օգտակար լինել ձեր ընտանիքի անդամների համար միսիայի ժամանակ:

ՁԵՐ ԼԵԶՎՈՎ

Լիահոնան և Եկեղեցու այլ նյութերը տարբեր լեզուներով մատչելի են languages.lds.org կայքում:

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Համարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:

- Աղոթք, 4, 40
- Դեպրեսիա, 26, 42
- Եկեղեցու պատմություն, 28
- Երեմիա, 9
- Երիտասարդ Կանայք, 68
- Ընտանեկան պատմություն, 14, 58, 71
- Ընտանիք, 12, 20, 61, 72, 78
- Ընտրություն, 50
- Թուլություն, 10

- Ծառայություն, 8, 66
- Ծոմապահություն, 4
- Կոչումներ, 8
- Համեստություն, 36
- Հավատք, 4, 26
- Հիսուս Քրիստոս, 7, 57
- Միսիոներական աշխատանք, 14, 28, 62, 64
- Մորմոնի Գիրք, 48
- Շնորհ, 10
- Ուսուցանել, 20, 36, 54
- Չիլի, 28, 74

- Սեր, 8, 41
- Վկայություն, 48
- Տաճարային աշխատանք, 14, 58
- Փորձությունը հաղթահարելը, 43, 44, 52, 80
- Փորձություններ, 12, 26, 62
- Փրկության աշխատանք, 14, 20, 54, 58, 62, 64
- Քավություն, 10, 80



**Նախագահ
Հենրի Բ. Այրիկյան**

Առաջին
Նախագահության
Առաջին
Խորհրդական

ՀԱՎԱՏՔԻՈՎ ԱՍԿԱԾ ԱՂՈՐԹՔ

Աղոթքն ավելին է, քան բառերը, որոնք մենք ասում ենք Աստծուն: Այն երկկողմանի շփում է Աստծո և նրա զավակների միջև:

Երբ աղոթքն ասվում է այնպես, ինչպես պետք է ասվի, մենք արտահայտում ենք մեր սրտի զգացումները պարզ բառերով: Երկնային Հայրը սովորաբար պատասխանում է մտքեր տալով մեզ, որոնք ուղեկցվում են զգացմունքներով: Նա միշտ լսում է մեր հղած անկեղծ աղոթքը, երբ մենք աղոթում ենք Նրան հնազանդվելու վճռականությամբ՝ ինչպիսին էլ որ լինի Նրա պատասխանը և երբ էլ որ այն տրվի:

Տերը տալիս է այս խոստումը բոլոր նրանց, ովքեր կարդում են Մորմոնի Գիրքը և աղոթում դրա մասին:

«Եվ երբ դուք ստանաք այս բաները, ես կկամենայի հորդորել ձեզ, որ դուք հարցնեք Աստծուն՝ Հավերժական Հորը, Քրիստոսի անունով, թե արդյոք այս բաները ճիշտ չեն. և եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ:

Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորմոնի 10.4–5):

Այդ խոստումն իրական է: Միլիոնավոր մարդիկ փորձել և հաստատել են այդ հրաշալի խոստումն աղոթքի վերաբերյալ, ստանալով օրհնություն, որը լցրել է նրանց կյանքն ուրախությամբ և հարատև երջանկությամբ: Այդ խոստումը վերաբերվում է մեր վերաբերյալ

Աստծո մտադրությունը և կամքն իմանալու մեր բոլոր աղոթքներին: Մենք կարող ենք կիրառել այն, երբ խորհուրդ ենք ստանում Աստծո ծառայից, ով կանչված է մեզ ուղղություն ցույց տալու: Օրինակ, մենք կարող ենք ապավինել դրան, երբ լսում ենք զերագույն համաժողովի քարոզները: Մենք կարող ենք կիրառել այն, երբ մենք ուսուցանվում ենք ապրող մարգարեի միջոցով Աստծուց կանչված խոնարհ միսիոներների կողմից: Այն նաև վերաբերվում է խորհրդին, որը մենք ստանում ենք մեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի կողմից:

Կան հասարակ կանոններ, որպեսզի աղոթքները գործեն մեր կյանքում: Ճշմարտությունն իմանալու համար մենք պետք է հարցնենք՝ աղոթելով Հորը Հիսուս Քրիստոսի անունով: Մենք պետք է հարցնենք անկեղծ սրտով, որը նշանակում է, որ մենք պետք է ունենանք ազնիվ միտում՝ անելու այն, ինչ էլ Աստծո պատասխանը պահանջի մեզանից: Եվ մեր անկեղծ միտումը պետք է բխի առ Հիսուս Քրիստոսն ունեցած մեր հավատքից:

Լսողը, ով կարդում է Մորմոնի Գիրքը նախքան մկրտվելը և հաստատվելը, կարող է ստանալ և հավաստիացում, որ գիրքը ճշմարիտ է, և վկայություն, որ Ջոզեֆ Սմիթը թարգմանել է այն Աստծո զորությամբ: Որպես Եկեղեցու անդամ հաստատվելուց հետո, մենք կարող ենք ունենալ Սուրբ Հոգին որպես մեր զուգրնկեր՝ հաստատելու այլ ճշմարտություններ: Ապա, երբ էլ որ մենք հավատքով աղոթենք, մենք կարող ենք ակնկալել, որ Սուրբ Հոգին կվկայի մեզ, որ Հիսուսը



Քրիստոսն է, որ Հայր Աստվածն ապրում է և որ Նրանք սիրում են մեզ և Երկնային Հոր բոլոր զավակներին:

Դա է պատճառներից մեկը, որ Մորմոնի Գրքում կա խոստում, որ մենք մեր սրտերում գթություն կունենանք, երբ Սուրբ Հոգին կվկայի մեզ, որ Հիսուսը Քրիստոսն է. «Եթե մարդ հեզ է ու սրտով խոնարհ, և խոստովանում է Սուրբ Հոգու զորությամբ, որ Հիսուսը Քրիստոսն է, նա ամպայման պետք է ունենա

գթություն» (Մորմոնի 7:44):

Ամեն ծոմապահության կիրակի հոգևորապես աճելու մեծ հնարավորություն կա: Ծոմապահության կիրակին կարող է օգնել մեզ ունենալ Ալմայի և Մոսիայի որդիների փորձառությունները, ովքեր աղոթեցին և ծոմ պահեցին, որպեսզի իմանային հավերժական ճշմարտությունը, որպեսզի կարողանային ուսուցանել լամանացիներին զորությամբ, իշխանությամբ և սիրով (տես Ալմա 17:3, 9):

Ծոմապահության կիրակի օրը մենք միավորում ենք աղոթքն ու ծոմը: Աղքատներին օրհնելու համար մենք եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին տալիս ենք առատ ծոմապահության նվիրատվություն, որը կազմում է առնվազն մեր երկու ճաշի գումարը: Մեր մտքերը և աղոթքները ուղղվում են դեպի Փրկիչը և նրանց, ում Նա ցանկանում է, որ մենք ծառայենք՝ անդրադառնալով նրանց հոգևոր և նյութական կարիքներին:

Մեր աղոթքները և ցանկություններն, այդպիսով, նմանվում են Փրկչի աղոթքներին և ցանկություններին, երբ մենք ծոմ ենք պահում՝ դառնալու ավելի հեզ, ուսուցանվող և սիրող: Եվ ինչպես Նա արեց, մենք աղոթում ենք, որպեսզի իմանանք Հոր կամքը մեզ համար և կատարենք այն: ■

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐԶԻՑ

Նախագահ Այրինգն ուսուցանում է, որ աղոթքը և ծոմապահությունը կարող են օգնել մեզ «իմանալ հավերժական ճշմարտությունը»: Խորհեք, թե ինչպես կարող եք ամրացնել նրանց վկայությունները, ում այցելում եք, և դաս պատրաստեք համապատասխան թեմայով: Օրինակ, եթե անձը, ում այցելում եք, կորցրել է մոտ ընկերոջը կամ ընտանիքի անդամին, խորհեք հավերժական ընտանիքների և մահից հետո կյանքի մասին: Դուք կարող եք առաջարկել ծոմ պահել նրանց հետ, ում այցելում եք, որպեսզի օգնեք նրանց վկայություն ձեռք բերել այդ սկզբունքի մասին:

Նախապատրաստվեք նախքան աղոթելը

Նախագահ Այրինգը մեզ հիշեցնում է, որ աղոթքը «երկկողմանի հաղորդակցություն է Աստծո և Նրա զավակների միջև»: Մեր աղոթքների նախապատրաստվելուն ժամանակ տրամադրելը կարող է հնարավոր դարձնել այդ երկկողմանի հաղորդակցությունը: Դուք կարող եք օգտագործել ձեր օրագիրը՝ ամեն օր մի քանի բան տրամադրելով աղոթքի նախապատրաստությանը: Դուք կարող եք կազմել օրհնությունների ցանկ, որոնց համար ցանկանում եք շնորհակալություն հայտնել Երկնային Հորը, մարդկանց ցանկ, ովքեր ունեն ձեր աղոթքների կարիքը, և հարցերի ցանկ, որոնց պատասխանների



կարիքն ունեք: Ապա հրավիրեք Հոգին, երգելով մի օրհներգ կամ կարդալով սուրբ գրությունների մի քանի հատվածներ: Երբ դուք աղոթեք, ուշադրություն դարձրեք, թե ինչ է Սուրբ Հոգին առաջնորդում ձեզ ասելու, և ուշադրություն դարձրեք ձեր զգացումներին և մտքերին (տես ՎեՌԻ 8.2-3): Խորհեք ձեր փորձառությունները ձեր օրագրում գրելու և ձեր ստացած պատասխանները վերանայելու մասին: Դուք կարող եք նաև օգտագործել *Ուսուցանիր Իմ Ավետարանը*. Ուղեցույց միսիոներական ծառայության համար ձեռնարկի էջեր 95-97-ում գտնվող վարժությունները, որոնք կօգնեն ձեզ գնահատել ձեր աղոթքները և սովորել ճանաչել Սուրբ Հոգին:


ԵՐԵՄԱՆԵՐ

Աղոթքի բրդում

Ինչպե՞ս եք դուք իմանում, թե ինչ ասել, երբ աղոթում եք: Դուք կարող եք սկսել ձեր աղոթքներն՝ ասելով. «Սիրելի Երկնային Հայր», և ավարտել դրանք՝ ասելով «Հիսուս Քրիստոսի անունով, ամեն»: Թե ինչ կասեք աղոթքի ընթացքում, ձեր ընտրությունն է, ճիշտ ինչպես ընտրում եք, թե ինչ դնել բրդուճի մեջ:

Ընտրեք այն, ինչն ուզում եք լինի ձեր բրդուճի մեջ: Դրանց կողքին գրեք այն բաները, ինչի համար ուզում եք աղոթել: Դուք կարող եք «շնորհակալություն» հայտնել օրհնությունների համար, պատմել ձեր մտահոգությունների մասին, խնդրել օրհնություններ կամ աղոթել հարցերի շուրջ:

Դուք կարող եք կտրել-հանել այս բրդուճը կամ պատրաստել մեկ ուրիշը: Փակցրեք այն ձեր տանը, որ օգնի ձեզ հիշել բաները, որոնք կարող եք ասել ձեր աղոթքներում:



Սիրելի Երկնային Հայր

Հիսուս Քրիստոսի անունով, ամեն:

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կօնկրդվեք: Ինչպե՞ս կարող է Փրկչի կյանքի ու առաքելության մասին հասկացողությունը մեծացնել ձեր հավատքը Նրա նկատմամբ և օրհնել նրանց, ում մասին հոգ էք տանում այցելությանը ուսուցանման միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Կենդանի հացը

Սա Այցելող Ուսուցիչների Ուղերձների այն շարքից է, որը նվիրված է Փրկչի առաքելության տարբեր ոլորտներին:

Հիսուսն ասել է. «Ես եմ կենդանի հացն, որ երկնքիցն է իջել: Եթե մեկն այս հացիցն ուտե, յաւիտեան կապրի» (Հավիաննես Զ.51): «Հիսուսն ուսուցանում է մեզ՝ Իր աշակերտներին, որ մենք պետք է դիմենք Աստծուն ամեն օր հացի՝ օգնության և սննդի համար, որի կարիքը մենք ունենք հենց այդ օրը», - ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը: «Տիրոջ հրավերը . . . խոսում է սիրող Աստծո մասին, ով տեղյակ է Իր զավակների նույնիսկ փոքր, ամենօրյա կարիքների մասին և ցանկանում է աջակցել նրանց՝ մեկ առ մեկ: Նա ասում է, որ մենք կարող ենք այդ Էակին խնդրել հավատքով, «որ ամենին տալիս է առատութեամբ եւ չէ նախատում, եւ կտրուի նորան» (Հակոբոս Ա.5):¹ Երբ մենք



հասկանանք, որ Հիսուս Քրիստոսը կհոգա մեր կարիքները, մենք կդառնանք դեպի Նա մեր հոգևոր սննդի համար:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդը հրավիրում է մեզ «միանալ Քրիստոսի առաջին հետևորդներին, ովքեր նույնպես ցանկանում էին ճաշակել կյանքի հացը, նրանց, ովքեր հետ *չգնացին*, այլ եկան Նրա մոտ, մնացին Նրա հետ և ովքեր հասկացան, որ ապահովության և փրկության համար չկար մեկ ուրիշը, ում մոտ նրանք երբևէ կարող էին գնալ»:²

Լրացուցիչ սուրբ գրություններ

Հովիաննես Զ.32–35, Ալմա 5.34, 3 Նեփի 20.3–8

ՀՂՈՒՄՆԵՐ

1. D. Todd Christofferson, "Recognizing God's Hand in Our Daily Blessings," *Liahona*, Jan. 2012, 25.
2. Jeffrey R. Holland, "He Hath Filled the Hungry with Good Things," *Liahona*, Jan. 1998, 76.

Խորհեք այս մասին

Երբ մենք գալիս ենք դեպի Քրիստոսը, ինչպե՞ս է Նա սնուցում մեզ:

Հավատք,
Ընտանիք,
Սփոփանք



Սուրբ գրություններից

Հիսուս Քրիստոսն ուսուցանում էր 4000-ից ավելի մարդկանց մի բազմության: Երեք օր անց Նա ասաց Իր աշակերտներին. «Խեղճս է գալիս այդ ժողովրդի վերայ. որովհետեւ բան չունին որ ուտեն:

Եւ եթե նորանց սոված արձակեմ իրանց տները, կթուլանան ճանապարհին. . .

Նորա աշակերտները պատասխանեցին նորան. Ո՞ր տեղից կարող է մեկը հացով կշտացնել դորանց այստեղ՝ անապատում:

Եւ [Հիսուսը] նորանց հարցրեց՝ Քանի հաց ունիք: Եւ նորանք ասեցին՝ Եօթը»:

Ապա, Քրիստոսը «եօթը հացը առաւ, գոհացաւ, կտրեց, եւ իր աշակերտներին եր տալիս, որ գցեն . . . ժողովրդի առաջին:

Մի քիչ փոքր ձուկեր էլ ունեին. Եւ Նա օրհնեց ու ասեց որ նորանց էլ գցեն:

Կերան եւ կշտացան. Եւ կտորների աւելացածը եօթը զամբիւղ վեր առան:» (Տես Մարկոս Ը.1–9:)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ԵՐԲԱՅՐ ԶԵՅ

Քրիստին Փուրսել

Որքան երախտապարտ եմ ես ողջ եկեղեցում գտնվող անհամար անկեղծ ծառաների հոգու, նվիրվածության, նախապատրաստությունների և սիրո համար:



«Կաղը կիրակի է», - ես ասացի իմ հնգամյա դստերը, երբ նա նստեց իմ գրկում: Ժպիտ հայտնվեց նրա դեմքին:

«Օհ, ինչ լավ է», - ասաց նա: «Ուրեմն ես կտեսնեմ Եղբայր Զեյն»:

Երախտագիտությունը լցրեց իմ սիրտը: Որքան երախտապարտ ես զգացի Երեխաների Խմբի սիրող, հոգատար ուսուցչի համար, ով տեղափոխությունից հետո հեշտացրել էր մեր անցումը նոր ծով: Թողնելը մեր տունը ԱՄՆ-ի միջին արևմուտքում և տեղափոխվելը 1350 մղոն (2173 կմ) հեռու ցնցումային էր ողջ ընտանիքի համար, հատկապես մեր նախադպրոցական դստեր Սյուզնի համար: Էությամբ լինելով ամաչկոտ՝ նա վախենում էր նոր իրավիճակներից և երկյուղած էր, երբ առաջին շաբաթը պիտի հաճախեինք եկեղեցի նոր ծխում:

Եղբայր Զեյն՝ բարեհամբույր, իր գործին նվիրված մի մարդ, տեղին օգտագործած հումորով լավ ազդեցություն գործեց և արժանացավ Սյուզնի վստահությանը: Այդ առաջին կիրակին նա կռացավ, բռնեց նրա ձեռքը, նայեց նրա աչքերի մեջ և ասաց. «Եկ, սիրելիս: Դու ուրախ ժամանակ կանցկացնես մեր դասարանում»:

Մինչ շաբաթներն անցնում էին, Սյուզնը կիրակի օրվան ավելի շատ էր սպասում, քան շաբաթվա ցանկացած մեկ այլ օրվա: Հենց որ մենք հասնում էինք եկեղեցի, նա բազմության մեջ փնտրում էր իր ուսուցչին:

Ողջունելիս նա ժպտում էր:

Տարիներ շարունակ Եղբայր Զեյն փոքրիկ նվերներով հիշում էր յուրաքանչյուր ուսանողի՝ տոների և ծննդյան օրերի առթիվ: Երբ եկավ Սյուզնի ծնունդը, ամենակարևոր հյուրը, ում նա ցանկացավ հրավիրել իր տոնին, Եղբայր Զեյն էր:

Արդյո՞ք նա պատկերացնում էր, թե ինչպիսի ազդեցություն էր թողնում մեր փոքրիկ աղջկա կյանքում: Կարո՞ղ էր նա երբևէ գուշակել, թե որքան էին նրա խոսքերն ու արարքները տպավորվում Երեխաների Խմբի նրա հնգամյա աշակերտների մեջ: Հնարավո՞ր էր, որ նա իմանար, թե ինչքան կարևոր էր ինձ համար որպես մայր, որ նա իմ աղջկա կյանքի մի մասն էր կազմում:

Հետագայում Սյուզնը Եղբայր Էդվարդսի դասարանի առաջադեմ աշակերտներից էր, և Երեխաների Խմբի նրա հրաշալի փորձառությունը շարունակվում էր: Որքան երախտապարտ եմ ես բոլոր բարեխիղճ, լավ պատրաստված, խոնարհ տղամարդկանց և կանանց համար, ովքեր դրական ազդեցություն են ունեցել Սյուզնի կյանքում:

Մեր ողջ ընտանիքն օրհնված է եղել իրենց գործին նվիրված անձնավորություններով, ովքեր ծառայել են մեզ հոգևոր զարգացման մեր ճանապարհին: Ես հիշում եմ սկաուտների բացառիկ ուսուցչին, քահանաների քվորումի համբերատար խորհրդատուին,

Մեմփիսիայի համբերատար ուսուցչին, Երիտասարդ Կանանց արտակարգ նախագահությանը և հոգատար եպիսկոպոսին:

Ես գիտեմ, որ մենք միակ ընտանիքը չենք, որ այսքան օրհնված ենք եղել: «Եղբայր Զեյն» ներկայացնում է շատերին, քանի որ կան նվիրված շատ եղբայրներ և քույրեր, ում ծառայությունը ազդեցություն է ունեցել ընտանիքների կյանքում, ճիշտ ինչպես մեր դեպքում: Որքան երախտապարտ եմք մենք նրանց հոգու, նվիրվածության, նախապատրաստությունների և սիրո համար:

Շնորհակալություն ողջ եկեղեցում գտնվող անհամար անկեղծ ծառաների համար, ովքեր աջակցել են մեր ընտանիքին: ■

Հեղինակն ապրում է Նեյսադայում, ԱՄՆ:



**ԶԳՏԵՔ
ՓՈԽԵԼ
ԿՅԱՆՔԵՐ**

«Թող որ մենք կենտրոնանանք հասարակ եղանակների վրա, որոնցով կարող ենք ծառայել Աստծո թագավորությունում, միշտ ձգտելով փոխել կյանքեր, ներառյալ մեր սեփականը»:

Երեց Մ. Ռասսել Բալլարդ՝ Տասներկու Առաքյալների Քվորումից, «Օ, եղեք իմաստուն», *Լիսինա*, նոյեմբեր 2006, 20:

ԵՐԵՄԻԱ

«Երեմիան ապրում էր դժվարին ժամանակներում և բարդ վայրում, սակայն Տերը թույլ տվեց նրան տեսնելու «հույսի ժամանակաշրջան Իսրայելի վերջին օրերի հավաքման ընթացքում»»:¹

Լինդա Բ. Բրոքլեն, Սփոփող Միության գերագույն նախագահ

Ես Քեդեկիայի որդին եմ, ով քահանա է Անաթովթում, որը գտնվում է Երուսաղեմի մոտ: Իմ երիտասարդության տարիներին «Տիրոջ խօսքն եղաւ ինձ ասելով:

Քեզ որովայնում չստեղծած՝ ես քեզ գիտեի, եւ արգանդից դեռ դու դուրս չեկած ես քեզ սրբեցի, ես քեզ ազգերի մարգարէ եմ դրել»:

Ես անպատրաստ զգացի այս կոչմանը և ասացի. «Միա ես խօսել չգիտեմ, որովհետեւ ես մանուկ եմ»:

Տերն ասաց. «Մի ասիր թէ ես մանուկ եմ, այլ ուր որ քեզ ուղարկեմ՝ զնա. եւ ամեն ինչ որ քեզ պատուիրեմ՝ խօսիր»:

Մի վախճանար նորանց երեսիցը, որովհետեւ ես քեզ հետ եմ որ քեզ ազատեմ: Ապա Տերը «դպավ իմ բերանին» և խոսքեր դրեց դրա մեջ:²

Ես մարգարեացա Երուսաղեմում 40 տարի՝ Ք.ա. 626-586թթ., Հովսիայի, Հովակիմի և Մեդեկիայի թագավորության ընթացքում:³ Ես Մորմոնի Գրքի մարգարե Լեքիի ժամանակակիցն եմ եղել: Մենք երկուսս էլ մեղադրել ենք Երուսաղեմի մարդկանց ամբարշտության համար և մարգարեացել այդ մեծ քաղաքի կործանման մասին:⁴

Տերը պատվիրեց ինձ գրի առնել իմ մարգարեությունները «մի

տոմսի»⁵ վրա: Երբ Հովակիմ թագավորը լսեց մարգարեությունները, նա այրեց տոմսը: Տերը պատվիրեց ինձ մարգարեությունները կրկին գրել և շատ ավելին ավելացնել դրանց վրա:⁶

Ես շարունակ հանդիպում էի հակառակությունների, երբ քարոզում էի Տիրոջ խոսքը: Փաստոր՝ իշխանավոր վերակացուի որդին, զարկեց ինձ և դրեց կոճղում: Ամբոխը ցանկանում էր սպանել ինձ իմ քարոզելու համար: Ես ժողովրդականություն չվայելող մարգարե էի, ում հաճախ նետում էին

զնդաններն ու բանտերը: Ես ապրել եմ իսկապես մեծ ամբարշտության ժամանակաշրջանում:⁷

Սակայն, անկախ այն բանից, որ ես ապրում էի դժվարությունների մեջ, Տերը թույլ տվեց ինձ նախապես տեսնել, որ իսրայելացիները կհավաքվեն վերջին օրը, որ Տերը կգրի Իր օրենքը «նրանց սրտերում» և որ Նա Միտն կբերի «քաղաքից մեկին, եւ ազգատոհմից՝ երկուսին»:⁸

Երբ ես շարունակեցի քարոզել Տիրոջ խոսքը, նույնիսկ երբ դժվար էր դա անել, ես սովորեցի, որ ավետարանի հանդեպ ներքին նվիրվածությունը խաղաղություն է բերում: Երբ մենք անձնական շփում ենք զարգացնում Տիրոջ հետ, մենք բոլորս էլ կարող ենք հույս ունենալ փորձությունների և դժվարությունների մեջ: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Լինդա Բ. Բրոքլեն, «Արդյո՞ք մեր սրտերում գրված է հավատքն առ Հիսուս Քրիստոսի Քավությունը», *Լիսինուս*, նոյ. 2012, 111:
2. Տես Երեմիա Ա.1-9:
3. Տես Մուրբ Գրքերի Ուղեցույց, «Երեմիա», scriptures.lds.org:
4. Տես Երեմիա 2, 1 Նեփի 1.13, 18-20:
5. Երեմիա ԼԶ.2:
6. Տես Երեմիա ԼԶ.23-32:
7. Տես Երեմիա Ի.2, ԻԶ.8, ԼԸ.6:
8. Երեմիա ԼԱ 33, Գ.14:



ՆՖՐԻՏԵ ԿԱՂԱՄԲԸ

Էլեն Ս. Զենսեն

Միսիայի ժամանակ թայվանում իմ զուգընկերը և ես նախապատրաստության մի օր մի փոքր ժամանակ անցկացրեցինք Թայվեյի Ազգային Թանգարանի Պալատում: Հիմնական գրավիչ իրը արվեստի մի գործ էր, որը կոչվում էր Նեֆրիտե կաղամբ: Շատերն էին հիանում դրանով, սակայն, այն ամենն, ինչ ես տեսա, նեֆրիտից քանդակված մի կաղամբ էր: Այն իհարկե գեղեցիկ էր, սակայն կար մի բան, ինչը ես թերևս չէի նկատում:

Երբ մենք ավարտեցինք թանգարանի դիտումը, ես հարցրեցի իմ զուգընկերոջը. «Ի՞նչ կարծիք ունես Նեֆրիտե կաղամբի մասին»:

«Ինձ դուր եկավ արվեստի այդ գործը»:

«Ինչո՞ւ», - հարցրեցի ես: «Այն պարզապես կաղամբ է»:

«Դու կատակո՞ւմ ես: Նեֆրիտե կաղամբը իմ կյանքի փոխաբերությունն է», - բացատրեց նա:

«Կաղա՞մբը»:

«Այո: Դու չգիտե՞ս պատմությունը»:

«Հավանաբար, ոչ»:

Նա պատմեց ինձ պատմությունը: Եվ նա ճիշտ էր: Այն դարձավ իմ միսիայի և իմ կյանքի փոխաբերությունը:

Որպեսզի նեֆրիտե քանդակն ունենա մեծ արժեք, նեֆրիտը պետք է ունենա մեկ ամբողջական գույն: Կատարյալ նեֆրիտից կատարված քանդակները վաճառվում են բարձր գնով, քանի որ գրեթե անհնարին է գտնել կատարյալ նեֆրիտ: Նեֆրիտե կաղամբի մի կողմը կանաչ

է և մյուս կողմը սպիտակ, և այն ունի ճաքեր ու ճեղքեր: Ոչ մի հմուտ քանդակագործ ժամանակ չէր վատնի նեֆրիտի այսպիսի մի կտորի վրա, մինչև որ եկավ մեկը, ում չինացիները կոչում են վարպետ քանդակագործ:

Եթե այս նեֆրիտը կարողանար խոսել, պատկերացնում եմ այն գրույցը, որը նա կունենար այս նոր քանդակագործի հետ: Ես պատկերացնում եմ քանդակագործին՝ նեֆրիտի այս կտորը վերցնելիս:

«Ի՞նչ եք կամենում», - կհարցներ նեֆրիտը:

«Ես փնտրում եմ նեֆրիտ՝ քանդակելու համար», - կասեր քանդակագործը:


«Ուրեմն գտեք մեկ այլ կտոր: Ես արժեք չունեմ: Ես ունեմ երկու այնքան միախառնված տարբեր գույներ, որ դուք երբեք չեք կարողանա բաժանել դրանք: Ես ունեմ ճաքեր

և ճեղքեր իմ մեջ: Ես երբեք որևէ արժեք չեմ ունենա: Մի վատնեք ձեր ժամանակը»:

«Օհ, դու, անմիտ փոքրիկ նեֆրիտ: Վստահիր ինձ: Ես վարպետ քանդակագործ եմ: Ես քեզանից մի գլուխգործոց կստեղծեմ»:

Նեֆրիտե կաղամբը հրաշալի է նրանով, որ այս անհայտ վարպետ քանդակագործը օգտագործել է նեֆրիտի թերությունները՝ երկու գույները, ճաքերը, ճեղքերը, որպեսզի կաղամբը դարձնի ավելի բնական: Անթափանցիկ սպիտակ մասը դարձել էր կաղամբի ցողունը, և ճաքերն ու ճեղքերը կենդանի տեսք էին հաղորդել տերևներին: Եթե չլինեին այս նեֆրիտի «թերությունները», այն կարող է այդքան իրական տեսք չունենալ:

Արվեստի այս գործն իր գեղեցկության շնորհիվ որպես պարզև տրվել էր Չինաստանի



ՏԵՐԸ ՄՐՏԻՆ Է ՆԱՅՈՒՄ

«Մեր այս աշխարհում, հաճախ բարոյականությունը, կարծես, թե երկրորդական տեղ է մղվել գեղեցկությունից և հմայքից հետո: Սակայն արձագանքում է շատ վաղուց Տիրոջ կողմից Սամուելին տրված խորհուրդը. «Այն չէ բանը, որ տեսնում է մարդը. որովհետև մարդը տեսնում է աչքի առաջինը, բայց Տերը սրտին է նայում» (Ա Թագավորաց ԺԶ.7):

President Thomas S. Monson, "Canaries with Gray on Their Wings," *Liahona*, June 2010, 4.



ԻՆՉՊԵՍ ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԻՆՉ ՏԵՍՆԵԼ ԱՅՆՊԻՍԻՆ, ԻՆՉՊԻՍԻՆ ՏԵՐՆ Է ԻՆՉ ՏԵՍՆՈՒՄ:

Դժվար է մեզ տեսնել այն-
պիսին, ինչպիսին Տերն է մեզ
տեսնում: Նա մեզ տեսնում
է որպես Աստծո զավակներ,
ովքեր ունեն մեծ ներուժ և մեծ
արժեք: Սակայն, մենք երբեմն
կենտրոնանում ենք մեր թույլու-
թյունների վրա: Մեր Երկնային
Հայրը մեզ չի ստեղծել, որ մենք
ապրենք մեր թույլություննե-
րով, այլ որ դառնանք գեղե-
ցիկ գլուխգործոցներ: Հիսուս
Քրիստոսի ավետարանի և
Նրա Քավության միջոցով մենք
կարող ենք հաղթահարել մեր
թույլությունները:

Խորհեք հետևյալ սուրբ
գրությունները կարդալու
մասին, որպեսզի սովորեք, թե
ինչպես է Տերն օգտագործում
անկատար մարդկանց՝ Իր
գործը կատարելու համար:
Ելից Դ.10-12, Երեմիա Ա.4-10,
1 Նեփի 4.1-6, Ալմա 26.12,
Վարդապետություն և Ուխտեր
35.17-18:

Թագավորական ընտանիքներից
մեկին և զարդարել էր գեղեցիկ
ասիական պալատների սրահները,
մինչև որ, ի վերջո, իր տեղն էր գտել
Թայվանի թանգարանում:

Այն ինձ հիշեցնում է Եթեր 12.27-ը.
«Եթե մարդիկ զան ինձ մոտ, ես
նրանց ցույց կտամ իրենց թույլու-
թյունը: . . . Իմ շնորհը բավարար է
բոլոր մարդկանց համար, ովքեր
իրենց խոնարհեցնում են իմ առջև.
քանզի, եթե նրանք խոնարհեցնեն
իրենց իմ առջև, և հավատք ունե-
նան ինձանում, այն ժամանակ,
նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ
ուժեղ»:

Նեֆրիտե կաղամբը տեսնելուց
հետո այս սուրբ գրությունը սկսեցի
տեսնել նոր լույսի ներքո: Մենք
բոլորս էլ նման ենք նեֆրիտի
այս կտորին, բացառությամբ այն

բանից, որ մենք դեռևս գտնվում
ենք հղկվելու գործընթացում: Մենք
պետք է վստահենք վարպետ քան-
դակագործին՝ Հիսուս Քրիստոսին,
ով կվերցնի մեր թույլությունները
և կդարձնի դրանք ուժեղ կողմեր:
Մենք, մեր անկատար տեսքով,
երբեմն կենտրոնանում ենք մեր
թերությունների վրա և հետո
հուսահատվում, քանի որ մենք
մտածում ենք, որ երբեք արժեք
չենք ունենա: Սակայն, մեր Փրկիչը՝
Հիսուս Քրիստոսը, տեսնում է մեզ
այնպիսին, ինչպիսին մենք կարող
ենք դառնալ: Երբ մենք թույլ ենք
տալիս, որ Նրա Քավությունը գործի
մեր կյանքում, Նա հղկում է մեզ,
դարձնելով գլուխգործոցներ, ով-
քեր մի օր կապրեն թագավորների
Թագավորի հետ: ■

Հեղինակն ապրում է Յոնսայթ, ԱՄՆ:

ԼԻԶՈԶԿԱՅԻ ՄԻՐՏԸ

Մարինա Պետրովա

Իմ ամուսինը և ես միացել ենք Եկեղեցուն Ռուսաստանում 1995թ. և կնքվել ենք հաջորդ տարի Ստոկհոլմ Շվեդիա Տաճարում: Մեր երկու երիտասարդ աղջիկները նույնպես կնքվեցին մեզ հետ: Երկու տարի անց մենք օրհնվեցինք, ունենալով ևս մեկ աղջիկ: Մեր ընտանիքում ծնվեց Լիզոչկան: Մեր կյանքում ամեն ինչ լավ էր ընթանում: Բոլորս էլ երջանիկ էինք: Մական ծնունդից երկու օր անց մեր փոքրիկը սկսեց խնդիրներ ունենալ ուտելու հետ կապված: Մեկ ամսվա ընթացքում նա ավելացել էր ընդամենը 300 գրամով:

Մանկական բժշկական կենտրոնի աշխատողներն ասացին մեզ, որ ավելի հաճախակի կերակրենք նրան: Ես տեսնում էի, որ նա ուզում էր ուտել, սակայն չէր կարողանում: Ի վերջո, ամուսինս տարավ նրան քաղաքի հիվանդանոցը: Բժիշկն անմիջապես տվեց մեզ ախտորոշումը՝ ի ծնե սրտի արատ: Սրտի փականներից մեկը չէր աշխատում և դեպի նրա թոքերը մղվող սակավ արյունը դժվարացնում էր նրա համար շնչելը կամ ուտելը:

Նա ուներ վիրահատության կարիք, սակայն Ռուսաստանում այս վիրահատությունը տանող ամենափոքր երեխաները երկու տարեկան էին: Մեր դուստրն ընդամենը մեկ ամսական էր: Բժիշկը նշանակեց բուժում և ասաց, որ հետագայում, երբ նա ավելի մեծ կլինի, նրանք կկատարեն վիրահատություն:

Մեկ ամիս անց Լիզոչկայի առողջական վիճակը չափազանց վատացավ, և մենք նրան արագ հիվանդանոց հասցրեցինք: Մինչ մեքենայով տեղ կհասնեինք, ես

գրկել էի նրան: Նա այնպես էր նայում ինձ, կարծես, օգնություն էր խնդրում: Եթե ես Եկեղեցու անդամ չլինեի, չզիտեմ, թե ինչ կանեի: Սակայն իմ ամուսինն ու ես ապավինում էինք Տիրոջը և հաստատապես հավատում էինք, որ ամեն բան լավ էր լինելու: Ես փորձում էի հանգստացնել նրան, ասելով. «Ոչ մի բանից մի վախեցիր, իմ փոքրիկ: Աստված սիրում է մեզ: Նա կօգնի մեզ, և ամեն բան լավ կլինի»:

Վերջապես մենք տեղ հասանք: Նրան ամուր կրծքիս սեղմած՝ ես վազեցի ընդունարան: Լիզոչկայի աչքերը սկսեցին փակվել: Նա հագիվ էր շնչում: Գրեթե անկարող լինելով խոսել՝ ես պատմեցի բժշկին իմ երեխայի մասին, և բժշկական անձնակազմը տարավ նրան ինտենսիվ թերապիայի բաժանմունք: Բժիշկն ասաց, որ նրա թոքերը սկսում էին ուռչել, և նրանք նրա համար միացրեցին արհեստական շնչառության մեքենան:

Հաջորդ օրը մենք խոսեցինք սրտի վիրահատության բաժանմունքի գլխավոր բժշկի հետ: Նա ասաց. «Ես արել եմ նման վիրահատություններ, սակայն վիրահատել եմ միայն ավելի մեծ երեխաների: Քանի՞ ամսական է նա հիմա»:

«Երկու ամսական», - ասացինք մենք նրան:

«Նա արդեն իսկ բավականին ցավ է զգում: Նա շատ փոքր է, և նրա թոքերի ուռչելը վիճակն ավելի է բարդացնում, սակայն մենք չպետք է ավելի հետաձգենք սա: Ես երբեք չեմ արել այսպիսի վիրահատություն փոքր երեխայի համար: Ես կփորձեմ անել այն ամենը, ինչ կարող եմ: Դուք պետք

է գնեք արհեստական երկակի փական, սակայն այն շատ թանկ արժե, մոտավորապես 2100 դոլար: Վիրահատությունը տեղի կունենա չորս օրից»:

Ի՞նչ պետք է մենք անեինք: Ոչ մենք, ոչ էլ մեր ծանոթներից որևէ մեկն ուներ այդքան գումար: Այնուամենայնիվ, մեր իրավիճակի վրա սկսեցին ուշադրություն դարձնել ուրիշները, և նրանց առատաձեռնության և Տիրոջ ողորմության շնորհիվ մենք կարողացանք ապահովել այդ գումարը: Ամուսինս գնեց այն փականը, որը մեզ պետք էր մեր երեխայի կյանքը փրկելու համար:

Ոչ միայն մեր ճյուղի բոլոր եղբայրներն ու քույրերն էին աղոթում և ծոմ պահում մեր փոքրիկ աղջկա համար, այլ նաև միսիոներները և շատ Վերջին Օրերի Սրբեր ողջ քաղաքով մեկ: Մենք զգում էինք նրանց աջակցությունը: Վիրահատության օրը միջանցքում նստած՝ մենք զգացինք Սուրբ Հոգու ներկայությունը և մեր եղբայրների և քույրերի աղոթքները: Մենք գիտեինք, որ նրանք մեր կողքին էին: Եվ Աստված մեզ հետ էր՝ առաջնորդելով վիրաբույժներին: Նա մեզ չէր թողնի, և ամեն բան լավ կլիներ:

Երբ վիրաբույժը վիրահատությունից հետո դուրս եկավ, նա, որոշ չափով շփոթված, ասաց մեզ. «Ամեն բան լավ ստացվեց: Մենք տեղադրեցինք փականը: Ես չզիտեմ, թե ինչպես, սակայն դա հաջողվեց»: Մական մենք գիտեինք, թե ինչպես դա հաջողվեց: Երկնային Հայրը օրհնեց նրան:

Լիզոչկան ևս երեք օր մնաց հիվանդանոցում, մինչ նրա սրտի



**ԵՐԲ ԹՎՈՒՄ Է,
ԹԵ ԱՂՈԹՔՆԵՐԸ
ՄՆՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՑ
ՊԱՏԱՍԽԱՆԻ**

«Շատ դժվար է, երբ անկեղծ աղոթքը մի բանի մասին, ինչը դուք շատ եք փափագում, չի պատասխանվում այնպես, ինչպես դուք եք ցանկանում: Դժվար է հասկանալ, թե ինչու խորը և անկեղծ հավատքի գործադրումը հնազանդ կյանքում չի պարզևատրվում ցանկալի արդյունքով: Փրկիչն ուսուցանել է. «Ինչ որ խնդրեք Հորը՝ իմ անունով, կտրվի ձեզ, այն, ինչը նպատակահարմար է ձեզ համար»:
[ՎԱՌԻ 88.64, շեշտադրումն ավելացված է:] Երբեմն դժվար է հասկանալ, թե ինչն է լավագույնը կամ նպատակահարմարը ձեզ համար ժամանակի ընթացքում: Ձեր կյանքն ավելի հեշտ կլինի, երբ դուք ընդունեք, որ այն, ինչ Աստված անում է ձեր կյանքում, ձեր հավերժական բարիքի համար է»:

Երեց Ռիչարդ Գ. Սքոթ, Տասներկու Սոաքայների Զվորումից, «Օգտագործել աղոթքի մեծագույն պարզևը», Լիախոնա, մայիս 2007, 9:

և թոքերի ուռչածությունն անցավ: Բժիշկները վիրահատության ժամանակ մեծ բացվածք էին արել և մի բանի օր անց նրանք նորից մի փոքրիկ վիրահատություն կատարեցին՝ նրա կրծքավանդակի և օրգանների բացվածքը փակելու համար: Բժիշկներից գրեթե ոչ մեկը չէր ակնկալում, որ նա կապրեր: Մակայն, մենք հավատում էինք Հիսուս Քրիստոսին և Նրա զորությանը, և մենք հավատում էինք, որ եթե Նրա կամքը լիներ, նա կապարհավեր:

Միայն Աստված կարող էր մեզ վերադարձնել մեր Լիզբեյկային: Օր օրի նա դեպի լավն էր գնում: Եվս մեկ ամիս նա մնաց հիվանդանոցում, և այժմ նա տանն է՝ մեզ հետ միասին:

Աստված հրաշքների Աստված է: Նա լսում է մեր աղոթքները, և մեր դժվարին պահերին Նա հոգում է մեզ համար: Փորձություններն ամրացնում են մեր հավատքը և սովորեցնում են մեզ հավատալ, հուսալ և սիրել: ■

Հեղինակն այժմ սպորում է Բելգիայում:



Երեց
Դեյվիդ Ա. Բեդևար
Տասներկու
Առաքյալների
Քվորումից

Միսիոներական աշխատանք, ընտանեկան պատմություն և տաճարային աշխատանք



1837թ. ապրիլի 6-ին Կիրթլանդի Տաճարում տեղի ունեցած հանդիսավոր հավաքի ժամանակ Մարգարե Զոգեֆ Սմիթն ասել է. «Այն ամենից հետո, ինչ ասվել է, ամենամեծ և ամենակարևոր պարտականությունը Ավետարանը քարոզելն է»:¹

Գրեթե յոթ տարի անց, 1844թ. ապրիլի 7-ին նա հայտարարեց. «Այս աշխարհում ամենամեծ պարտավորությունը, որ Աստված դրել է մեզ վրա, մեր մահացածներին փնտրելն է: Առաքյալն ասում է. «Նրանք առանց մեզ չկատարուին» [տես Եբրայեցիս ԺԱ.40]; քանզի անհրաժեշտ է, որ կնքման զորությունը լինի մեր ձեռքերում՝ կնքելու մեր երեխաներին և մեր մահացածներին ժամանակների լրության տնտեսության համար. տնտեսություն, երբ պետք է իրականանան նախքան աշխարհի ստեղծումը մարդու փրկության վերաբերյալ Հիսուս Քրիստոսի տված խոստումները»:²

Որոշ մարդիկ կգարմանան, թե ինչպես կարող են ավետարանը քարոզելը և մեր մահացածներին փնտրելը երկուսն էլ միաժամանակ լինել ամենամեծ պարտավորություններն ու պարտականությունները, որոնք Աստված դրել է Իր զավակների վրա: Ես

*Ավետարանը քարոզելը
և մեր մահացածներին
փնտրելը մի մեծ աշխա-
տանքի իրար լրացնող
մասեր են. սիրո աշխա-
տանքի, որի նպատակն է
փոխել, դարձնել և մաքրա-
գործել ճշմարտությունն
անկեղծորեն փնտրողների
սրտերը:*



ուզում եմ առաջարկել այն միտքը, որ այս ուսմունքներն ընդգծում են վերջին օրերի փրկության աշխատանքի միասնականությունը և մեկ լինելու գաղափարը: Միսիոներական աշխատանքը, ընտանեկան պատմությունը և տաճարային աշխատանքը մեկ մեծ աշխատանքի իրար լրացնող և իրար հետ կապված մասեր են «Ժամանակների լրութեան տնտեսութեան համար, որ ամեն բան բովանդակուի Քրիստոսումը, ինչ որ երկնքումն է՝ եւ ինչ որ երկրումը, նորանում» (Եփեսացիս Ա.10):

Ես աղոթում եմ, որ Սուրբ Հոգու զորությունը աջակցի ձեզ և ինձ, մինչ մենք միասին կյտրիենք վերջին օրերի փրկության հրաշալի աշխատանքի մասին:

Սրտերը և քահանայության արարողությունները

Ավետարանը քարոզելը և մեր մահացածներին փնտրելը Աստծո կողմից

նշանակված երկու պարտականություններ են, որոնք կապված են մեր սրտերի և քահանայության արարողությունների հետ: Տիրոջ աշխատանքի էությունը կայանում է նրանում, որ փոխի, շրջի և մաքրագործի սրտերը ուխտերի և արարողությունների միջոցով՝ կատարված համապատասխան քահանայության իշխանության կողմից:

Կանոնիկ զրքերում *սիրտ* բառն օգտագործվել է ավելի քան 1000 անգամ և խորհրդանշում է անհատի ներքին զգացմունքները: Այսպիսով, մեր սրտերը՝ մեր ցանկությունների, սիրո, նպատակների, դրդապատճառների և վերաբերմունքի համագումարը, սահմանում են, թե ով ենք մենք, և որոշում, թե ինչ մենք կդառնանք:

Միսիոներական աշխատանքի հետ կապված Տիրոջ նպատակն է հրավիրել բոլորին գալ դեպի Քրիստոսը, ստանալ վերականգնված ավետարանի օրինությունները և համբերել մինչև վերջ՝ առ



Պարզապես ինչ-որ բան անելով և պարտավորվածությունից ելնելով ավետարանի պահանջները կատարելով չէ, որ մենք անպայման ընդունում ենք Նրա պատկերը մեր դեմքին կամ զգում հզոր փոփոխություն մեր սրտում:

Քրիստոսն ունեցած հավատքի միջոցով:³ Մենք չենք կիսվում ավետարանով պարզապես վերջին օրերի Եկեղեցու անդամների թիվը և ուժն ավելացնելու համար: Այլ մենք ձգտում ենք կատարել Աստծո կողմից նշված պարտականությունը՝ հայտարարելով Հոր երջանկության ծրագրի իրականության մասին, Նրա Միաձին Որդու՝ Հիսուս Քրիստոսի աստվածայնության մասին և Փրկչի քաղաքացիության գործող ուժի մասին: Բոլորին հրավիրելը, որ «գան Քրիստոսի մոտ» (տես Մորոնի 10.30–33), սրտի «հզոր փոփոխություն» ունենալը (տես Ալվա 5.12–14) և փրկության արարողություններն այն անձանց առաջարկելը, ովքեր մահկանացու կյանքում չեն գտնվել ուխտի մեջ, ավետարանը քարոզելու հիմնական նպատակներն են:

Ապրողների և մահացածների վեհացումը հնարավոր դարձնելու մեջ է տաճարներ կառուցելու և մահացածների համար ծեսեր կատարելու Տիրոջ նպատակը: Սուրբ տաճարներում մենք չենք երկրպագում միայն անձնական կամ ընտանեկան հիշարժան փորձառություն ունենալու համար: Այլ մենք փորձում ենք կատարել Աստծո կողմից տրված պարտականությունը՝ առաջարկելու փրկության և վեհացման արարողությունները ողջ մարդկության ընտանիքին: Չավակների սրտերում հայրերին՝ հենց Աբրահամին, Իսահակին և Հակոբին տրված խոստումները սերմանելը, Չավակների սրտերն իրենց իսկ հայրերին դարձնելը և ընտանեկան պատմության որոնումներ ու տաճարում մահացածների համար արարողություններ կատարելը աշխատանքներ են, որոնք օրհնում են հոգևոր աշխարհում գտնվող անհատներին, ովքեր դեռևս ուխտի մեջ չէին:

Քահանայության արարողությունները հարթում են աստվածայնության գործության ուղին:

«Եվ այս մեծագույն քահանայությունը սպասավորում է ավետարանը և կրում է արքայության խորհուրդների բանալիները, այսինքն՝ Աստծո գիտության բանալիները:

Հետևաբար, նրա արարողություններում է բացահայտվում աստվածայնության գործությունը:

Եվ առանց նրա արարողությունների և քահանայության իշխանության, աստվածայնության գործությունը չի բացահայտվում մարդկանց՝ մարմնում» (ՎեՌՆ 84.19–21):

Խնդրում ենք, խորհեք այս հատվածների զգաստացնող նշանակության մասին: Անհատը նախ *պիտք է* անցնի մկրտության դռնով և ստանա Սուրբ Հոգու պարգևը, և հետո շարունակի առաջ շարժվել ուխտերի և արարողությունների արահետով, որը տանում է դեպի Փրկիչը և Նրա Քավության օրհնությունները (2 Նեփի 31): Քահանայության արարողություններն առանցքային դեր են կատարում, որպեսզի ամբողջությամբ գանք «Քրիստոսի մոտ և կատարելագործվենք նրանում» (տես Մորոնի 10.30–33): Առանց արարողությունների անհատը չի կարող ստանալ բոլոր օրհնությունները, որոնք հնարավոր են դարձվել Տիրոջ անսահման և հավերժական քաղաքացիության միջոցով (տես Ալվա 34.10–14), այսինքն՝ հենց աստվածայնության գործությունը:

Տիրոջ գործը մի փառահեղ գործ է՝ կենտրոնացած սրտերի, ուխտերի և քահանայության արարողությունների վրա:

Հետևանքներ

Այս աստվածային վարդապետությունը առաջարկում է երկու կարևոր հետևանքներ՝ Եկեղեցում կատարած մեր աշխատանքի համար:

Առաջինը, երբեմն մենք կարող ենք հաճախ պատշաճ կարևորություն չտալ փրկության ծրագրին և դրա հետ կապված օրենքներին և արարողակարգերին: Ես վախենում եմ, որ մեզանից շատերը կարող են բացառապես կենտրոնանալ Տիրոջ աշխատանքի առանձնակի կողմերի վրա այնպես, որ մենք չկարողանանք զգալ այս ընդգրկուն փրկության աշխատանքի ողջ գործությունը:

Մինչդեռ Տերը ցանկանում է ամեն բան միավորել Քրիստոսում և դարձնել մեկ, մենք կարող ենք հաճախ այնքան կենտրոնանալ մի որևէ բանի վրա, որ սահմանափակենք մեր հասկացողությունը և տեսլականը: Երբ դա ծայրահեղության է



*Ավետարանը
քարոզելը և մեր
մահացածներին
փնտրելը Աստծո
կողմից նշանակ-
ված երկու պար-
տականություններ
են, որոնք կապված
են մեր սրտերի և
քահանայության
արարողություն-
ների հետ:*

մոտ բերելու մեջ: Մորմոնի Գիրքը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, Քավչի աստվածայնության արժեքավոր հաստատող վկայություն աշխարհում, որն ավելի աշխարհիկ ու եսամոլ է դառնում: Սրտերը փոխվում են, երբ անհատները կարդում և ուսումնասիրում են Մորմոնի Գիրքը և աղոթում են անկեղծ միտումով, որպեսզի իմանան գրքի ճշմարիտ լինելու մասին:

Եղիայի հոգին «Մուրբ Հոգու հաստատումն է, որ վկայում է ընտանիքի աստվածային բնույթի մասին»:⁵ Մուրբ Հոգու այս առանձնահատուկ ազդեցությունը զորեղ վկայություն է բերում Հոր երջանկության ծրագրի մասին և մղում է մարդկանց փնտրել և փայփայել իրենց նախնիներին և ընտանիքի անդամներին՝ անցյալի և ներկայիս: Եղիայի հոգին ազդում է Եկեղեցու ներսում և դրանից դուրս գտնվող մարդկանց վրա և սրտերին մղում է դառնալ դեպի հայրերը:



Վեց տեսակցութ կազմում են այս հոդվածի մասը: Մուսջին տեսակցութը տեսնելու համար օգտագործեք այս (QR) կոդը կամ այցելեք lds.org/go/bednar1014:

Եկել է ժամանակը, որ մենք ավելի արդյունավետորեն օգտագործենք սրտերի հզոր փոփոխության ազդեցիկ համակցությունը, որը հնարավոր է դարձվել հիմնականում Մորմոնի Գրքի հոգևոր ուժի միջոցով և սրտերը դեպի հայրերը դարձնելով, որն իրականացել է Եղիայի հոգու միջոցով: Մեր անցյալի հետ կապ ստեղծելու փափագը կարող է նախապատրաստել անհատին հասկանալ Աստծո խոսքի արժեքը և ամրացնել նրա հավատքը: Միտքը հայրերին դառնալը անհատին առանձնակի ձևով օգնում է ընդդիմանալ հակառակորդի ազդեցությանը և ամրացնել դարձը:

Դիտեք այս սկզբունքը ցուցադրող երկրորդ տեսակցութը:

Սկզբունքներ

Ես այժմ ցանկանում եմ ներկայացնել չորս սկզբունքներ հոգևոր ուժի մասին,

որը սրտերի փոփոխության և դարձի արդյունք է:

1. **Սրտերը և դարձը:** Հայրերին դառնալը արթնացնում և նախապատրաստում է սիրտը հզոր փոփոխության համար: Այսպիսով, Եղիայի հոգին օգնում է դարձի գալ:

Դիտեք այս սկզբունքը ցուցադրող երրորդ տեսակցութը:

2. **Սրտերը և անդամներին պահպանելը:** Հայրերին դառնալը աջակցում և ամրացնում է սրտերը, որոնք զգացել են հզոր փոփոխություն: Այսպիսով, Եղիայի հոգին օգնում է պահպանել նորադարձներին:

Դիտեք այս սկզբունքը ցուցադրող չորրորդ տեսակցութը:

3. **Սրտերը և վերաակտիվացումը:** Հայրերին դառնալը փափկացնում է սիրտը, որը կարծրացել էր հզոր փոփոխություն ունենալուց հետո: Այսպիսով, Եղիայի հոգին վերաակտիվացման բանալին է հանդիսանում:

Դիտեք այս սկզբունքը ցուցադրող հինգերորդ տեսակցութը:

4. **Սրտերը և անվեհեր միսիոներները:** Միսիոները, ով ունեցել է սրտի հզոր փոփոխություն և դարձ, կլինի ավելի դարձի եկած, սրբագործված և անվեհեր ծառա:

Դիտեք այս սկզբունքը ցուցադրող վեցերորդ տեսակցութը:

Արագ ընդլայնվող և ավելի լավ նախապատրաստված միսիոներական ուժով մենք պարզապես չենք կարող մեր հույսը բացառապես դնել անցած քարոզչական հաջողությունների վրա, որ դրանք որոշեն մեր ապագա ուղին և մեթոդները: Տերն առաջարկում է ոգեշնչված տեխնոլոգիաներ և գործիքներ, որոնք մեզ թույլ են տալիս ավելի մեծ օգուտ քաղել միսիոներական աշխատանքի և տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքի միասնությունից այս տնտեսության մեջ, ի տարբերություն որևէ այլ

*Եղիայի հոգին «Սուրբ
Հոգու հաստատումն
է, որ վկայում է ըն-
տանիքի աստվածա-
յին բնության մասին»:*



ժամանակաշրջանի: Եվ պատահական չէ, որ այս նորա-
մուծություններն առաջ եկան հատկապես այն պահին,
երբ դրանց կարիքը մեծ էր ողջ երկրով մեկ միախոնե-
րական աշխատանքը բարելավելու համար: Տիրոջ աշխա-
տանքը մեկ փառահեղ աշխատանք է, կենտրոնացած
սրտերի վրա, որոնք փոխվում են սրբազան ուխտերի և
աստվածային զորության միջոցով, որն առաջ է գալիս
քահանայության արարողությունների միջոցով:

Ամփոփում և վկայություն

Տերը հայտարարել է. «Ես ի վիճակի եմ անել իմ սե-
փական գործը» (2 Նեփի 27.21) և «Ես կարագացնեմ
իմ աշխատանքն իր ժամանակին» (ՎեՌՖ 88.73): Մենք
վկաներն ենք այն բանի, թե ինչպես է Նա արագացնում
Իր աշխատանքը:

Մենք ապրում և ծառայում ենք ժամանակների լուո-
թյան տնտեսությունում: Հատկանշական տնտեսության
հավերժական կարևորությունը գիտակցելը, որում մենք
ապրում ենք, պետք է ազդի այն ամենի վրա, ինչ մենք
անում ենք և ձգտում ենք դառնալ: Փրկության աշխա-
տանքը, որը պետք է կատարվի այս վերջին օրերում,
փառահեղ է, հսկայական, միանգամայն անհրաժեշտ
և անհետաձգելի: Որքան երախտապարտ պետք է լինի
մեզանից յուրաքանչյուրը վերջին տնտեսության այս
յուրահատուկ ժամանակներում ապրելու օրհնություն-
ների և պարտականությունների համար: Որքան խո-
նարի մենք պետք է լինենք, իմանալով, որ «նրանից, ում
շատ տրվել է, շատ էլ պահանջվում է» (ՎեՌՖ 82.3):

Ավետարանը քարոզելը և մեր մահացածներին
փնտրելը մի մեծ աշխատանքի իրար լրացնող մա-
սեր են, սիրո աշխատանքի, որի նպատակն է փոխել,
դարձնել և մաքրագործել ճշմարտությունն ազնվորեն
փնտրողների սրտերը: Արհեստական սահմանափակ,

որը մենք շատ հաճախ դնում ենք միախոնե-
րական աշխատանքի և տաճարային ու ընտանեկան պատմու-
թյան աշխատանքի միջև, ջնջվում է. սա փրկության մեկ
մեծ աշխատանք է:⁶

Կարո՞ղ ենք մենք սկսել հասկանալ տաճարային
և ընտանեկան պատմության աշխատանքի դերը,
օգնելով հետաքրքրվողին կամ քիչ-ակտիվ անդա-
մին ձեռք բերելու ավելի խորը հասկացողություն
փրկության ծրագրի մասին: Մենք գիտակցո՞ւմ ենք,
որ նորադարձին պահելու ամենամեծ ազդեցություն-
ներից մեկը Եղիայի հոգին է: Կարո՞ղ ենք մենք ավելի
լիարժեքորեն գնահատել սրտերը դարձնող պահերի
կարևորությունը, որոնք կապված են ընտանեկան
պատմություններ կիսելու հետ, որպես անդամների և
միախոնե-րների կողմից ուսուցանելու համար մարդ-
կանց զոնելու միջոցներ: Կարո՞ղ ենք մենք օգնել
նրանց, ում ծառայում ենք, ավելի հաճախ զգալ աստ-
վածայնության զորությունները, արժանիորեն մաս-
նակցելով այնպիսի արարողությունների, ինչպիսին են
հաղորդությունը և մահացածների համար մկրտություն-
ներն ու հաստատումները:

Թող որ դուք պարզ տեսնեք, անսխալ լսեք և միշտ հի-
շեք ձեր ծառայության կարևորությունը սրտերը փոխելու,
դարձնելու և մաքրագործելու Տիրոջ աշխատանքում: ■

*Ելույթից, որը տրվել է նոր միախալի նախագահների սեմինարի
ժամանակ 2013թ. հունիսի 25-ին:*

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Եկեղեցու Նախագահների Ուսումնարանը. *Ջոզեֆ Սմիթ* (2007), 330:
2. Ուսումնարանը. *Ջոզեֆ Սմիթ*, 475:
3. Տես *Քարոզիչ Իմ Այնուպանը՝ Միախոնե-րական ծառայության
ողջույց* (2004), 1:
4. Ezra Taft Benson, "A New Witness for Christ," *Ensign*, Nov. 1984, 7.
5. Russell M. Nelson, "A New Harvest Time," *Ensign*, May 1998, 34.
6. Stu Spencer W. Kimball, "The Things of Eternity—Stand We in
Jeopardy?" *Ensign*, Jan. 1977, 3.



ՏՈՒՆԸ՝

սովորելու հիմնական վայր

Երբ Եկեղեցում սովորելը նպաստում է տանը սովորելուն, դուք դնում եք ավետարանով ապրելու ամուր հիմքը:


«Խնդրում եմ, անպայման կարդացեք հաջորդ շաբաթվա դասի առաջադրանքը»: Այս խոսքերը ծանոթ են ձեզ: Եկեղեցում այդ խոսքերով են հիմնականում ավարտում իրենց դասն ուսուցիչները:

Անշուշտ կարևոր է ձեր կիրակնօրյա դասերին պատրաստվելը, բայց արդյո՞ք երբեմն համարում եք, որ դուք հիմնականում ուսումնասիրում և խորհրդածում եք, որպեսզի լիովին պատրաստ լինեք կիրակնօրյա դասին:

Իրականում, պետք է հակառակը լինի:

Եկեղեցում ողջ «ուսուցումը, ծրագրերը և միջոցառումները [կենտրոնանում] են տան վրա և աջակցվում են Եկեղեցու կողմից»:¹ Դա նշանակում է, որ մեր Եկեղեցու ժողովները իրականում նպատակ ունեն աջակցել անհատական և ընտանեկան ուսումնառությունը: Նախագահող Եպիսկոպոս Գերի Ի. Սթիվենսոնն ուսուցանել է. «Ուսուցանելու և սովորելու հիմնական վայրը տունն է»:² Երբ ուսումնառությունն ու ուսուցումը կենտրոնանում են տանը, դա իր մեջ կրում է դարձի բերող զորություն:

Սա է 2014թ. ամենամյա օժանդակի ուսուցման ուղերձը, *Սովորել և ուսուցանել տանը և Եկեղեցում*, որը առկա է առցանց՝ annualtraining.lds.org կայքում: «Մեզանից ոչ ոք չի նվազեցնում եկեղեցում, ժողովատանը կատարվող ուսուցման դերը, - ասում է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը, - Մենք դա արել ենք մեր ողջ կյանքի ընթացքում, բայց ուզում ենք ուսումնական գործընթացն ընդգրկի մեր կյանքի ամեն օրը»:³ Եթե այդ սկզբունքը կիրառեք ձեր ընտանեկան կյանքում, կարող եք դնել «ուսման տան» հիմքը (Վևու 88.119), որը ձեր և ձեր ընտանիքի համար կստեղծի հոգևոր տանիք և պաշտպանություն:





ՍՈՎՈՐԵԼ ՏԱՆԸ

Գուցե անմիջապես արդյունք չտեսնենք, բայց երբ օգտվեք սովորելու և ուսուցանելու առօրյա սովորական թվացող պահերից, դա հզոր ազդեցություն կթողնի: Ահա, թե ինչպես են մի քանի ընտանիքներ ներկայացնում այդ ազդեցությունն իրենց կյանքում:

Սովորական պահեր

«Լինում են պահեր, երբ մենք կաշկանդվում ենք և չենք կարողանում ավետարանական թեմաների վերաբերյալ զրույցներ ունենալ: Ուսուցման ոչ պաշտոնական պահերը իրոք օրինել են մեզ ուսուցանել կարևոր դասեր

մեր երեխաներին: Նաև օրվա մեջ հանդիպում են ոչ այնքան պաշտոնական ուսուցման պահեր, որքան սովորական ուսուցման պահեր, այնպես որ մենք օգտվում ենք այդ հնարավորություններից կարևոր սկզբունքներ ուսուցանելով մեր

երեխաներին: Օրինակ, մթերք գնելիս ես սովորեցնում եմ ազնվության մասին: Երեխաներս ավելի արագ են սովորում սկզբունքները, երբ տեսնում են դրանց կիրառումը:

Մոնա Վիլսոն-Մեյս, Ֆիլիպիններ





Ամրապնդել կապը սեղանի շուրջ

«Որ ֆորմալ ուսուցման պահերը օգնել են ինձ ավելի լավ հարաբերություններ հաստատել իմ երեխաների հետ: Դպրոցից տուն գալով, խոհանոցի սեղանի շուրջ նստած ճաշելիս մենք քննարկում ենք այդ օրվա իրենց դպրոցական առօրյան: Հաճախ նրանք կիսվում են, ինչ է ասել ընկերը կամ ինչպես են ընդունել ինչ-որ մեկի խոսքը կամ արարքը: Այդ ժամանակ կարողանում եմ կիսել անհատական վկայությունը և քննարկել, ինչպես էր երեխաս զգացել իրեն նման իրավիճակում: Կարծում եմ ազատ քննարկումը ծավալելիս, երբ երեխաները հանգիստ են, անհրաժեշտության դեպքում նրանք առավել պատրաստ են քննարկելու կարևոր հարցերը, քանի որ վստահ են լինում, որ ծնողները կլսեն իրենց»:

Էլիսոն Ֆրոսթ, Հունաստան

Զրույց երթևեկելիս

«Ես ամեն առավոտ դուստրերիս ավտոբուսով տանում եմ դպրոց, և մենք առիթ ենք ունենում զրուցելու: Մի օր մենք նկատեցինք, որ ամուսիններ են վիճում: Դուստրերս անմիջապես նայեցին ինձ, որ իմ կարծիքն իմանային: Փոխարենը ես հարցրեցի իրենց կարծիքն այդ միջադեպի վերաբերյալ: Նրանք ասացին ինձ, որ իրենց կարծիքով տղամարդը երբեք չպետք է այդպես խոսի իր կնոջ հետ: Դրանից հետո մենք զրուցեցինք ամուսնության և հարաբերությունների մասին: Մեր 30-րոպե տևողությամբ ավտոբուսով երթևեկելը դարձավ շատ կրթող և վեհացնող փորձառություն»:

Մարիո Լորենս, Գվատեմալա






Հոգատարության շրջան

«Կինս և ես հասկանում ենք, որ երեխաներին ուսուցանելն առաջին հերթին ոչ թե դեկավարների, այլ մեր պատասխանատվությունն է, չնայած մենք երախտապարտ ենք այն ամենի համար, ինչ նրանք անում են, և հնարավորության չափով աջակցում ենք նրանց: Մեր ծուխը հրաշալի դեկավարներ ունի, ովքեր իրոք կենտրոնանում են երիտասարդների և երեխաների վրա, և իրենց ուժերի սահմանում անում են ամեն ինչ, որպեսզի օգնեն նրանց տեսնել իրենց ողջ ներուժը՝ հիմնվելով ծնողների ներդրած ջանքերի վրա: Մի քանի առիթներով հանդիպել եմ եպիսկոպոսին, միշտ զրուցում եմ երիտասարդների դեկավարների հետ հարցնելով իմ երեխաներից և նրանց առաջընթացից: Իմ երեխաների առաջընթացի մասին նրանց հետ իմ հաճախակի զրույցներն օգնում են մեզ բոլորիս հասկանալ, թե ինչպես կարելի է օգնել նրանցից յուրաքանչյուրին»:

Ջեյմս Լ. Առունուզյան, Հայրախալին Աֆրիկա





ՔՐԻՍՏՈՍԸ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ Է ԼԵՈՒՆ ՍՏՈՐ ԴՈՏԵՐՈՒՄ ԵՎ ՏՆԵՐՈՒՄ

«Փրկիչը Վարդա-

պետ էր: . . . Կարող ենք տեսնել, որ Նա իր ծառայության մեծ մասը նվիրում էր ուսուցանելուն: Բայց և այդ ուսուցումներից գրեթե ոչ մեկը չի մատուցվել եկեղեցական շենքում: Նա ուսուցանում էր այնտեղ, որտեղ մարդիկ էին: Դա մայրուղիներում էր, ճանապարհներին, լեռան ստորոտներում, ծովագրին և տներում»

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ, "Learning and Teaching in the Home and the Church—the Home" (2014 auxiliary training video), annualtraining.lds.org:

Ուժ՝ սուրբ գրություններում

«Սուրբ գրությունների ուսումնասիրությունը օգնում է ինձ սովորել Քրիստոսի և Նրա հատկանիշների մասին, որպեսզի կարողանամ Նրան նմանվել: Դա հնարավորություն է տալիս ինձ հետ ավելի շատ ունենալ Հոգին, որը ուղղորդում և ուսուցանում է ինձ ինչպես կարող եմ կիրառել իմ սովորածը, որպեսզի պատրաստ լինեմ դիմակայելու կյանքի դժվարություններին և սատանայի գայթակղություններին, որ թափվում են ինձ վրա: Առանց այս օրհնության, գիտեմ, որ կյանքում կկորցնեմ իմ ներուժը որպես Աստծո որդի»:

Նաթան Վուդվարդ, *Անգլիա*

ՍՈՎՈՐԵԼ ԵԿԵՂԵՑՈՒՄ՝

10 սկզբունքներ, որ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իմանա

Տանը սովորելու և ուսուցանելու ունակությունն ամրապնդելուց բացի, մենք կարող ենք ամրացնել եկեղեցու դասարանային փորձը: Ուսուցիչներ, կիրառեք այս 10 սկզբունքները, դրանք կխթանեն կյանքում ձեր աշակերտների դարձը:

1. Խորհրդակցեք ծնողների հետ, ում առաջնային դերն է ուսուցիչ լինելը, բացահայտելով դասարանի անդամների կարիքները և ապա ուսուցանեք ըստ այդ կարիքների:
2. Պատրաստվեք և ուսուցանեք Հոգով: Առանձնացրեք հարցերը և ուսումնական վարժությունները, որոնք կօգնեն Հոգով ուղղորդվող քննարկումներ ծավալել և հոգևոր սնուցում ապահովել դասարանի անդամների համար:
3. Ուսուցանեք մարդկանց, ոչ թե դասերը:
4. Կենտրոնացեք ավետարանի հիմնական վարդապետությունների վրա:
5. Խորապես ուսուցանեք մեկ կամ երկու հիմնական սկզբունք, քան փորձեք մատուցել ողջ դասի նյութը:
6. Հրավիրեք Հոգին՝ թույլ տալով բոլորին բերել իրենց մասնակցությունը (տես ՎեՌՈՒ 88.122):
7. Համոզվի՛ք կերպով կոչ արեք գործել, - ոչ թե գնալ տուն և կարդալ, այլ գնալ տուն և կիրառել սովորածը:
8. Բերեք ձեր վկայությունը տվյալ վարդապետության մասին՝ դասի վերջում կամ երբ Հոգին կհուշի:
9. Մպրեք ըստ ավետարանի, և «կարքի բերեք» ձեր սեփական տունը (տես ՎեՌՈՒ 93.43–44, 50):
10. Գտեք ուղիներ, ինչպես կարելի է ուսուցումը շարունակական դարձնել առօրյա կյանքում:

ՀՐՈՒՄՆԵՐ

1. *Ձեռնարկ 2 Սպասախորել Եկեղեցում*, (2010), 1.4:
2. Գարի Ի. Մթիվենսոն, "The Ward Council—We're All in This Together" (2014 auxiliary training video), annualtraining.lds.org:
3. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, "Learning and Teaching in the Home and the Church—the Home" (2014 auxiliary training video), annualtraining.lds.org:



Ջրերի

ԳԱԳԱԹՆԵՐԻ ԿՐԱ

*Ես աղերսում էի Երկնային Հորը
հեռացնել իմ անհանգստությունը
և հուսահատությունը, սակայն
ստանց այս փորձությունների
ես չէի կարող հասնել այն
«խոստումի երկրին», ուր Նա
առաջնորդում էր ինձ:*

Ջոն Կորներ

Քոլեջն ավարտելուց մոտ վեց ամիս անց ես սկսեցի ունենալ խուճապի նոպաներ, անհանգիստ պահեր և ընկճվածության ուժեղ զգացում: Ես գաղափար չունեի, թե որտեղից էին գալիս այս զգացողությունները, սակայն դրանք ուժեղ էին և ուժասպառ անող:

Ես դժվարանում էի կենտրոնացած մնալ: Աշխատանքի վայրում ցանկացած նոր առաջադրանք բերում էր այնպիսի անհանգստություն, որ ես չէի կարողանում հանգիստ նստել: Իմ միտքը սկսում էր վազել և սիրտս այնքան արագ էր աշխատում, որ կարծում էի, թե դուրս կթռչի իմ կրծքավանդակից: Մա տևում էր օրեր, և ամեն օր աշխատանքից տուն վերադառնալուց հետո ես հանգչում էի բազմոցի վրա: Մինչ ես կհասցնեի նկատել, երեկոն անցնում էր, և սկսվում էր հաջորդ աշխատանքային օրը:

Այս զգացմունքները շարունակվեցին ամիսներ, նույնիսկ երբ ես նոր աշխատանք գտա և փնտրեցի մասնագիտական օգնություն:

Ես ամեն առավոտ աշխատանքի գնալիս աղոթում էի, որ ուժ ունենայի հաղթահարելու այդ օրը և վերադառնալի տուն իմ կնոջ և դստեր մոտ: Ես չէի կարողանում տեսնել իմ պայքարի վերջը, և ես հաճախ պատրաստ էի լինում հուսահատվել: Շատ օրեր ես օգնություն էի աղերսում երկինքներից, մինչ աչքերս լցվում էին արցունքով: Ես աղոթում էի ավելի մեծ անկեղծությամբ, քան երբևէ նախկինում, աղաչելով Երկնային Հորը, որ օգնե՛ր ինձ հասկանալ այս փորձությունը և հեռացնել այն ինձանից:

Ես մոլորվում էի խավարի և հուսահատության մեջ, երբ չէի զգում Հոգին: Սակայն, երբ Հոգին ինձ վեր էր բարձրացնում հուսահատությունից, ես վստահություն

էի գտնում շարունակելու մինչև իմ հաջորդ աղոթքը: Ես սկսեցի ապավինել իմ Երկնային Հորը ավելի, քան պարզապես ճաշելիս կամ գիշերը մակերեսային աղոթք ասելով: Արդյունքում ես ավելի մոտեցա Նրան:

Գցված ջրերի վրա

Իմ անհանգստության և հուսահատության մեջ ես վերընթերցեցի հարեդացիների պատմությունը, երբ նրանք անցնում էին «մեծ ջրանդունդը» (Եթեր 2.25): Ես միայն կարող եմ պատկերացնել նրանց անհանգստության կանխագագացումը, երբ նրանք մտան իրենց բեռնանավերը: Նրանց ճամփորդությունը միգուցե վտանգավոր էր, սակայն նրանք գիտեին, որ իրենք գնում էին «մի ընտիր երկիր՝ բոլոր մյուս երկրներից առավել» (Եթեր 2.15):

Նրանց ճամփորդության մասին մենք կարդում ենք.

«Եվ եղավ այնպես, որ Տեր Աստված ստիպեց, որ մի կատաղի քամի փչի ջրերի երեսին՝ խոստացված երկրի ուղղությամբ. և այսպես, նրանք քշվում էին քամուց ծովի ջրերի վրայով:

Եվ եղավ այնպես, որ նրանք շատ անգամ թաղվեցին ծովի խորքերում, ալիքների լեռների պատճառով, որոնք փլուզվում էին նրանց վրա, և նաև ահռելի ու սոսկալի փոթորիկներից, որոնք առաջացել էին քամու կատաղությունից:

... Երբ նրանք շրջապատվում էին շատ ջրերով, նրանք աղաղակում էին առ Տերը, և նա կրկին դուրս էր բերում նրանց ջրերի գագաթների վրա:

Եվ եղավ այնպես, որ քամին երբեք չդադարեց փչել խոստացված երկրի ուղղությամբ, մինչ նրանք ջրերի վրա էին. և այսպես, նրանք առաջ էին քշվում քամուց» (Եթեր 6.5–8):

Այս հատվածները անձնական դարձան ինձ համար: Ես գգում էի ինձ իմ սեփական բեռնանավի մեջ, երբ անհանգստության քամիները հարվածում էին ինձ և ընկճվածության ալիքները բարձրանում էին ինձ վրա և ցած էին բերում հուսահատության խորքերը: Երբ ես «շրջապատվում էի» այդ ամենով և աղաղակում առ Տերը, ես ճեղքում հասնում էի ջրի մակերեսին, սակայն հետո նորից էի ընկղմվում:

Ես կրկին կարդացի 8-րդ հատվածը. «Քամին երբեք չդադարեց փչել *խոստացված երկրի ուղղությամբ*... և այսպես, նրանք առաջ էին մղվում քամուց» (շեշտադրումն ավելացված են): Ապա ես հանկարծակի հասկացա մի բան: Հենց քամին, որը ստիպում էր ալիքների սարերին ընկղմել բեռնանավերը, նաև օրհնում էր հարեդացիներին իրենց ճամփորդության ժամանակ: Ես աղերսում էի Երկնային Հորը, որ խաղաղեցներ քամին և ալիքները, սակայն առանց նրանց ես չէի կարողանա

հասնել այն «խոստումի երկրին», ուր Նա առաջնորդում էր ինձ:

Այս հատվածները փոխեցին կյանքի հանդեպ իմ վերաբերմունքը: Իմ անհանգստությունը և հուսահատությունը մեծացրել էին Երկնային Հոր հանդեպ իմ վստահությունը: Առանց քամու և ալիքների ես միգուցե երբեք չճանաչեի Աստծուն այնպես, ինչպես այժմ, և հարեդացիները միգուցե երբեք չհասնեին խոստումի երկիր:

Այժմ, այս փորձառությունից մի քանի տարի անց, անհանգստության իմ քամիներն այլևս չեն պոթկում և հուսալքության իմ ալիքները դադարել են ծածկել ինձ: Սակայն, եթե և երբ փոթորիկը վերադառնա, ես կկանչեմ առ Տերը և շնորհակալ կլինեմ, իմանալով, որ խաղաղ ծովերը չեն տանում բեռնանավերը խոստումի երկիր. փոթորկոտ ծովերն են տանում: ■

Հեղինակն ապրում է Յոտսպում, ՄԱՆ:



ԵՐԲԵՔ ՄԻ ԿՈՐՑԵՔ ՀԱՎԱՏԵՔ

«Ինչպե՞ս եք դուք լավագույնս արձագանքում, երբ դուք կամ ձեր սիրելիները բախվում են հոգեկան ու էմոցիոնալ խնդիրների: Բոլորից առավել երբեք մի կորցրեք հա-

վատքն առ ձեր Երկնային Հայրը, ով սիրում է ձեզ առավել, քան դուք կարող եք պատկերացնել: ...

Հավատարմորեն ձգտեք հետևել ժամանակով փորձված հոգևոր երեկոների ծրագրերին, որոնք Տիրոջ Հոգին ձեր կյանք են բերում: Խորհուրդ հարցրեք նրանցից, ովքեր կրում են ձեր հոգևոր բարեկեցության բանալիները: Խնդրեք և գնահատեք քահանայության օրհնությունները: Ամեն կիրակի ընդունեք հաղորդությունը և ամուր կառչեք Հիսուս Քրիստոսի Զավության խոստումներից: ...

... Կոտրված մտքերը կարող են բուժվել ճիշտ այնպես, ինչպես կոտրված ոսկորներն ու սրտերն են բուժվում: Մինչ Աստված աշխատում է դրանք վերականգնել, մյուսները կարող են օգնել՝ լինելով ողորմած, չդատապարտող և բարի»:

Երեց Զեֆրի Ռ. Չոլլանդ, Տասներկու Առաքյալների Քվորումից, «Ինչպես կոտրված անոթը», *Լիահոնա*, նոյեմբեր 2013, 40, 41:



ԴԱՐՁԸ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Զիլիում

*Առաջին մկրտությունները տեղի
են ունեցել 1956թ.: Այժմ Զիլիում
Եկեղեցին ունի 1 տաճար, 9 միսիա,
74 զից և մոտ 600 000 անդամ:*

Նեստոր Կուրբել

Եկեղեցու պատմության խորհրդատու, Հարավային Ամերիկայի հարավային տարածք

Իրենց պատմության 58 տարիների ընթացքում Եկեղեցու անդամները Զիլիում ցույց են տվել իրենց կյանքը հաջողությամբ դեպի մարգարենների նշած ուղղությանը փոխելու ունակություն: Այս ոգին նպաստել է այնտեղ Եկեղեցու արտասովոր աճին վերջին կես դարի ընթացքում: Այսօր Զիլին ունի մոտավորապես 600 000 անդամ՝ 30 չիլիացիներից յուրաքանչյուր մեկը:¹

Առաքյալն այցելում է Զիլի

1851թ. Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Փարլի Փ. Փրատն (1807–1857) այցելեց Վալփարաիսո՝ Եկեղեցի հիմնադրելու մտադրությամբ: Ինչևիցե, նա և նրա զուգընկերները չէին խոսում իսպաներեն, նրանք ունեին շատ քիչ ֆինանսական միջոցներ և երկիրն ուներ կրոնական ազատության պակաս, ուստի, նրանք չկարողացան հաստատել Եկեղեցին:



Ուսուցիչները և Նրանց չորրորդ դասարանի աշակերտները Եկեղեցու կողմից հովանավորվող դպրոցում՝ Քոլեգիո Ա. Դ. Փալմեր, մոտավորապես 1966թ.:

Երեց Փրատը խորհուրդ տվեց Նախագահ Բրիգամ Յանգին (1801–77)։ «Մորմոնի Գիրքը և որոշ մատչելի ամսագրեր պետք է թարգմանվեն իսպաներեն և տալագրվեն, և հետո պետք է բանալին պատվի դեպի այս ազգերը, մինչ կենդանի Քահանայությունը գուցակցվում է մի բանով, ինչը նրանք կարող են կարդալ, նույնիսկ այն գրառումները, որոնք ունեն Աստծո խոստումները, նախնիների աղոթքները և հավատքը, և Աստծո զորությունը և Հոգին՝ աշխատելու նրանց հետ Իսրայելի տունը վերականգնելու համար»։²

Եկեղեցին հիմնված է

Չնայած Երեց Փրատի կողմից գործադրված ջանքերին, ավելի քան 100 տարի անցավ, մինչև որ Եկեղեցին մշտապես հաստատվեց Չիլիում։ 1956թ. Երեցներ Ջոզեֆ Բենթլին և Վերլ Սլոեդը Արգենտինա Միսիայից ուղարկվեցին քարոզելու ավետարանը Չիլիում, որն այդ պահին վայելում էր ավելի մեծ կրոնական հանդուրժողականություն։ Սանտիագոյում այս միսիոներներն ունեցան ֆոթերինգհամ ընտանիքի աջակցությունը, ովքեր Պանամայից տեղափոխված Եկեղեցու անդամներ էին և հույս էին տածում, որ մի օր միսիոներներ կգան։

Առաջին մկրտությունները Չիլիում կատարվեցին 1956թ. նոյեմբերի 25-ին Սանտիագոյում գտնվող քաղաքի ակումբի լողավազանում։ Երեց Սլոեդը հիշում է. «Մենք զնացինք քաղաքի ակումբը նախքան արևածագը և ծառայություն ունեցանք աղոթքով և կարճ ելույթներով։ Ես ջուրը մտա Եղբայր Գարսիայի հետ. ես առաջինը նրան մկրտեցի, ապա ութ այլ մարդկանց նրանից հետո։ Մա շատ հատուկ իրադարձություն էր։ Այն, ինչ բոլորս էլ զգացինք, անմոռանալի էր։ . . . Այս անդամները դարձան Եկեղեցու ռաիվիրաները Չիլիում, և ես հավատում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը հավատարիմ մնաց մինչև մահ. Գարսիաները, Մալդանոները և Քույր Լանգարոթին»։³

Ղեկավարներ կանչելը

1959թ. փետրվարին Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Սպենսեր Վ. Քիմբալը այցելեց Չիլի և շեշտեց տեղում ղեկավարություն ստեղծելու անհրաժեշտությունը։ Տեղի առաջին ղեկավարներից էր Կարլոս Կիֆուենտեսը, ով միսիայի նախագահի՝ Ռոբերտ Բրոքսի խորհրդականն էր։ Երեց Ջուլիո Զարամիլյոն, ով ավելի ուշ դարձավ Տարածքային Յոթնաստունական



Նախագահ Գորդոն Բ. Հինքլին դիմում է 48 000
Վերջին Օրերի Սրբերին Չիլիում 1996թ. Սանտիագոյի
համաժողովի ժամանակ:

ուսուցիչներից մեկն էր և հետագայում Չիլիում աշխատեց Եկեղեցու Կրթական Համակարգում: Նա ասել է. «Տերն ընտրեց երիտասարդներին, ովքեր այդ ժամանակ այնտեղ էին, և նրանցից շատերը վերադարձած միսիոներներ են և հրաշալի ղեկավարներ, ովքեր ունեն լավ ընտանիքներ: . . . Ինձ համար սեմինարիան և ինստիտուտը փրկության միջոցներ են եղել մեր երկրում այդքան շատ պայքարի ժամանակներում, և ես երախտապարտ եմ, որ կանչվեցի աշխատելու կրթական համակարգում:»⁶

Առաջին ցիցը

1972թ. նոյեմբերի 19-ին Երեց Գորդոն Բ. Հինքլին (1910–2008), ով այդ ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումից էր, կազմավորեց Սանտիագո Չիլի Ցիցը, որի նախագահը դարձավ Կարլոս Կիֆուենտեր:

Ցցի նախապատրաստությունները ցույց տվեցին Չիլիի Սրբերի ելույթները և մարգարեներին հետևելու նրանց պատրաստակամությունը: Երեց Հինքլին գնացել էր Չիլի ամիսներ առաջ, որպեսզի կազմավորեր ցիցը: Սակայն, հարցազրույցներ ունենալուց հետո, դա հետաձգվեց: Այդ ժամանակ շատ մարդիկ ունեին

ֆինանսական խնդիրներ, և որոշ անդամներ դժվարանում էին ապրել տասանորդի օրենքով:

Երեց Հինքլին բացատրում էր. «Ես վերադարձա վեց ամիս անց, և մինչ ես հարցազրույցներ էի անցկացնում, ես տեսա, թե ինչպես էր մեծացել հավատքը. Նրանք կրկին ազնվորեն էին քայլում Տիրոջ առաջ, ցիցը կազմավորվեց, և այդ պահից սկսած նրանք աճել են ու բարգավաճել:»⁷

Ռազմավարներ սահմանների վրա

Այսօր Արիկայում՝ Չիլիի հյուսիսում գտնվող քաղաքում կա երկու ցից: Արիկայի առաջին նորադարձների՝ Գլադիս և Խուան Բենավիդեզների պատմությունը ռազմավարների հոգու և աստվածային ազդեցության օրինակ է հանդիսանում, երբ Եկեղեցին հաստատվում էր Չիլիում:

Եղբայր Բենավիդեզը ծանոթացավ Եկեղեցուն 1961թ., երբ քամին որոշ թերթեր էր քշել-բերել նրա մոտ. «Պարզվեց, դրանք *Reader's Digest Selections* ամսագրի «Մորմոններ» վերնագրով մեծ հոդվածի էջերն էին, որտեղ նկարագրվում էր նրանց կյանքը և համոզմունքները», - ասում է նա:

Կարճ ժամանակ անց նա վարակվեց լուրջ հիվանդությամբ, ստիպված լինելով բժշկական օգնության դիմել Մանտիագոյում: «Մինչ այնտեղ էի, ես այցելեցի իմ քույրիկին և իմացա, որ նա դարձել էր Եկեղեցու անդամ», - ասում է նա: «Նա հրավիրեց ինձ հատուկ համաժողովի: Երբ ես լսեցի բացիչ աղոթքը և մոտվի հետևեցի խոսքերին, ես մեծ ուրախություն զգացի իմ ողջ մարմնով մեկ և հասկացա, որ դա Սուրբ Հոգու ազդեցությունն էր: Համաժողովի վերջում միսիոներները տարան ինձ, որ սեղմեի Երեց Էզրա Թավոթ Բենսոնի (1899–1994)՝ այցով ներկա գտնվող իշխանության ձեռքը, ով այդ ժամանակ Տասներկուսի Քվորումից էր»:

հաճախակի գործադրվող բռնության և լրատվամիջոցների բացասական ազդեցության պատճառով:

1973թ. ֆինանսական և հասարակական ճգնաժամի պատճառով Բարձրացավ ռազմական հեղաշրջում և հիմնվեց բռնապետություն, որը տևեց մինչև 1990թ.: Չնայած Չիլիի այսօր բարգավաճող ժողովրդավարություն է վարում, այդ երկու տասնամյակները դժվար ժամանակներ էին անդամների համար: Խմբերը, որոնք ընդդիմանում էին ռազմական բռնապետությանը, հարձակվում էին աղոթատների և անդամների վրա, համարելով, որ Եկեղեցին ներկայացնում էր Միացյալ



«Երբ 12-ամյա երիտասարդ տղամարդ էի, ես ծանոթացա ավետարանի ուղերձին և անմիջապես իմացա, որ այն ճշմարիտ է: Անցել են քառասունվեց տարիներ, որոնց ընթացքում ես օրհնվել եմ ի շնորհիվ բազմաթիվ ղեկավարների նվիրված աշխատանքի, ովքեր արել են լավագույնը, որ կարող էին: Ծանոթանալով Նոր սերնդի հետ և նրանց հետ կիսվելով, ես ուրախ եմ ու վստահ, որ Տերը կշարունակի օրհնել այս երկիրը, մինչ տեսիլքն ավելի է մեծանում, որը մարգարեներն ունեցել են Չիլիի վերաբերյալ»:¹²

Երեց Ջորջ Ֆ. Ջեքսոն, Յոթանասուսի անդամ Չիլիից

1957. Եկեղեցին պաշտոնապես ճանաչվում է Չիլիում

1960. Կոմունիստները և ունենում ուժգին երկրաշարժ: Եկեղեցին ուղարկում է մարդասիրական օգնություն:

► 1961. Կազմավորվում է Չիլիի Միսիոնը՝ Մասնի Դեյթերթ Փայմերի նախագահությամբ:



1962. Մանտիագոյում փորում են առաջին ՀՕՍ համաքառայն տապալքի հողը:

Եղբայր Բենավիդեզը ետ վերադարձավ Արիկա և կիսվեց իր փորձառությամբ իր ընկերուհու՝ Գլադիս Ագուիլարի հետ, ով այժմ նրա կինն է: Մի քանի օր անց Գլադիսը տեսավ երկու միսիոներների, ովքեր անցնում էին իր տան կողքով: «Մենք արագ գնացինք որոնելու նրանց», - ասում է Եղբայր Բենավիդեզը: «1961թ. հուլիսի 1-ին մենք մկրտվեցինք իմ կնոջ ընտանիքի հետ միասին: Այսօր մենք ունենք երեխաներ և թոռներ Եկեղեցում: Ես շատ շնորհակալ եմ Տիրոջը այդ քամու համար, որն իմ ձեռքերի մեջ դրեց Եկեղեցու մասին տեղեկությունը»:⁸

Փորձության ժամանակաշրջան

1970թ. ընտրությունների ժամանակ Մալվադոր Ալլենդը դարձավ նախագահ և հաստատեց մարքսիստական կառավարություն: Եկեղեցու անդամները դժվարություններ ունեցան սննդի և դեղորայքի սակավության, միսիոներների հանդեպ

Նահանգների կառավարության շահերը: Երեց Այալան, ով այդ ժամանակաշրջանում ցցի նախագահն էր, ասել է. «Մենք կհանդիպենք Բարձրագույն Իշխանավորների հետ, և նրանք կասեն մեզ. «Թնդրում ենք, իմաստությամբ վարվեք, շատ աղոթեք, արեք ճիշտ բաներ, որպեսզի անդամները կարգ ու կանոն պահպանեն ծխական համայնքներում»»:⁹

Չնայած երկրի ֆինանսական դժվարություններին և քաղաքական հակամարտությանը, որ երկու մասի էր բաժանել Չիլիի հասարակությունը 1980-ականների սկզբին, Եկեղեցին սրընթաց աճում էր: 1970 և 1985 թվականների ընթացքում Չիլիի անդամների թիվը 15 728-ից հասավ 169 361-ի:

Մանտիագոյի Տաճարը

1980թ. Սրբերը օրհնվեցին հայտարարությամբ, որ տաճար էր կառուցվելու Մանտիագոյում, Չիլի:



Երբ Նախագահ Մպենսեր Վ. Քիմբալը նվիրագործեց տաճարը, նա ֆիզիկապես շատ թույլ էր, սակայն նրա ներկայությունն այնտեղ ցուցադրում էր նրա սերը Հարավային Ամերիկայի Մրբերի հանդեպ, ում հետ նա աշխատել էր 1959 թվականից: Քույր Ադրիանա Գուերա դե Մեփուլվեդան, ով այդ իրադարձության ժամանակ թարգմանում էր Քույր Քիմբալի համար, ասել է. «Երբ ես տեսա մարգարեին, հրեշտակային դեմքով այդ փոքրամարմին մարդուն, արցունքներ հոսեցին իմ աչքերից և ես չկարողացա բառեր գտնել նրան ասելու համար: Դա առաջին անգամն էր, որ ես կանգնել էի

կառաջնորդեր: Նա օգնում էր ուսուցանել նոր ղեկավարներին և կանխատեսում էր ծխերի և տասնյակ ցցերի վերակազմավորումը, դադարեցումը և միավորումը: Այս վերակազմավորումը և ուսուցումը անհրաժեշտ էր, քանի որ երկրում Եկեղեցին արագ աճում էր: Նրա ղեկավարությունն օգնեց ամրացնել միավորները և պատրաստել Եկեղեցին Չիլիում ապագայի համար:

Բացի այդ, Երեց Հովանոյը որոշ կարևոր կապեր ստեղծեց Չիլիում: Յոթնասունից Երեց Կարլ Բ. Փրատը՝ այդ Տարածքի Նախագահության խորհրդականը, նկարագրել է այդ կարևոր հարաբերություններից



1972. Մանտիագրյում տեղի է ունենում առաջին տարածքի համաժողովը Նախագահ Մպենսեր Վ. Քիմբալի և այլ Բարձրագույն Իշխանությունների ներկայությամբ:

1977. Մանտիագրյում տեղի է ունենում առաջին տարածքի համաժողովը Նախագահ Մպենսեր Վ. Քիմբալի և այլ Բարձրագույն Իշխանությունների ներկայությամբ:



◀ 1981. Մանտիագրյում է կիսնվում է միախորհրդանուն ուսուցանման կենտրոն:

◀ 1983. Նախագահ Գորդոն Բ. Հինքլին նվիրագործում է Մանտիագր Չիլի Տաճարը:



ապրող մարգարեի կողքին: Տիրոջ խոսնակին այստեղ երկրի վրա և իմ երկրում տեսնելը հրաշալի էր»:¹⁰

Տաճարը նվիրագործվեց 1983թ.-ին՝ դառնալով երկրորդը Հարավային Ամերիկայում և առաջինը՝ իսպանախոս պետությունում:

Երեց Ջեֆրի Ռ. Հովանոյը Չիլիում

2002թ. օգոստոսին Առաջին Նախագահությունը հանձնարարեց Տասներկու Առաքյալների Քվորումի երկու անդամների նախագահել Եկեղեցու երկու տարածքներում. Երեց Դավիթ Հ. Օուքսը նշանակվեց Ֆիլիպիններում, իսկ Երեց Ջեֆրի Ռ. Հովանոյը՝ Չիլիում: Երեց Հովանոյի ծառայությունը և ազդեցությունը Չիլիում եղած ժամանակ անսահման է, և դրա հետևանքները կմնան սերունդների մեջ:

Երեց Հովանոյը հիմնական շեշտը դնում էր օրինակ լինելու վրա, թե ինչպես առաջնորդել այնպես, ինչպես Տերը



Ի արձագանք 2010թ. երկրաշարժի՝ Չիլիի երիտասարդները և չափահասները, Մորմոնական Օգնող Ձեռքերը հավաքում են հիգիենայի պարագաների հավաքածուներ:

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՃԸ ՉԻԼԻՈՒՍ



ԵԿԵՂԵՑԻՆ ՉԻԼԻՈՒՍ

Ծխեր և ճյուղեր. 622

Ցցեր. 74

Միսիաներ. 9

Տաճարներ. 1 (ևս մեկը

հայտարարվել է)

Ընտանեկան պատմության

կենտրոններ. 99



◀ 1990. Երեց
Էդուարդո Այալան
Չիլիից կանչվում
է Յոթանասունի
Երկրորդ Քվորում:



◀ 2002. Երեց
Ջեֆրի Ռ. Հոլլանդը
Տասներկու Առա-
քյալների Քվորու-
մից կանչվում է
դրպես Չիլիի Տա-
րածքի Նախագահ:



▶ 2008. Երեց
Ջորջ Ֆ. Ջեֆա-
լուսը Չիլիից
կանչվում է
Յոթանաս-
ունի Առաջին
Քվորում:

2009. Հայտա-
րարվում է
Կոնսեպտոն
Չիլի Տաճարը:


մի քանիսը. «Երեց Հոլլանդը մտերմիկ հարաբերություն-
ներ ստեղծեց Ռիկարդո Լագոսի [Չիլիի նախագահի]
և նրա կնոջ հետ. նրանք մի շարք մարդասիրական
օգնության ծրագրեր կազմակերպեցին: Երեց Հոլլանդը
Չիլիում ծանոթացավ Առաքելական բարձր կոչում ունե-
ցող կաթոլիկ պաշտոնավարողի և այլ կարևոր անձնա-
վորությունների հետ:»¹¹

Վստահություն ապագայի հանդեպ

Երեց Փարլի Պ. Փրատի և Ջեֆրի Ռ. Հոլլանդի ջան-
քերը, առաջին միսիոներների զոհաբերությունները,
ովքեր եկան Մանտիագո, Կարլոս Կիֆուենտեսի
նման երեցների և Չիլիի այլ ռաիվիրանների նվիրվա-
ծությունը, միավորված հարյուր հազարավորների
հավատքի և նվիրվածության հետ, ովքեր միացան
Եկեղեցուն ավելի քան կես դարի ընթացքում, ամուր
հիմք կառուցեցին Չիլիի Եկեղեցու համար: Այսօր երկ-
րում կա տաճար (ևս մեկը հայտարարվել է), միսիո-
ներների ուսուցման կենտրոն, 9 միսիաներ և 74 ցցեր:
Ապագան անսահման հնարավորություններ է տալիս
հոգևոր աշխատանքի համար՝ հրավիրելու բոլորին
զալ դեպի Քրիստոսը: ■

ՀՂՈՒՆԵՐ

1. Stu Deseret News 2013 Church Almanac, 454:
2. *Autobiography of Parley P. Pratt*, ed. Scot Facer Proctor and Maurine Jensen Proctor (2000), 504.
3. Verle Allred, in Néstor Curbelo, *LDS in South America: Chile Sur*, vol. 1 (2008), 6.
4. Julio Jaramillo, in Néstor Curbelo, *LDS in South America: Chile*, vol. 1 (2006), 4–5.
5. Eduardo Adrian Lamartine Aguila, historic summary delivered to the author, Nov. 2013.
6. Eduardo Ayala, in Néstor Curbelo, *LDS in South America: Chile*, vol. 1 (2006), 44, 45.
7. Gordon B. Hinckley, in Rodolfo Acevedo A., *Alturas Sagradas: Templo de Santiago de Chile*, 100.
8. Néstor Curbelo, “Blossoming in the Desert,” *Church News*, Nov. 9, 1996, 8–9.
9. Gordon B. Hinckley, in Néstor Curbelo, *LDS in South America: Chile*, vol. 1 (2006), 33.
10. Adriana Guerra de Sepúlveda, in Néstor Curbelo, *LDS in South America: Chile* (2006), 16.
11. Carl B. Pratt, in Néstor Curbelo, *Colombia: investigación histórica*, vol. 1 (2010), 16.
12. Jorge F. Zaballos, in a letter sent to the author, Jan. 2014.



Քերոլ Տ. Մակրտչյանի
Երիտասարդ
Կանանց գերագույն
նախագահության
առաջին խորհրդական

ՀԱՄԵՍԱՌՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼՈՒ ՔԱԶՈՒԹՅՈՒՆ



Ի՞նչ կարող ենք մենք ուսուցանել մեր որդիներին և դուստրերին, որպեսզի օգնենք նրանց քաջություն ունենալու ընտրելու համեստությունը մի աշխարհում, որը ծաղրելու է նրանց իրենց առաքինի ընտրությունների համար:



Ինչո՞ւ է համեստությունն այդքան կարևոր: Ինչո՞ւ են եզրաշերտը, վզի բացվածքը կամ շապիկը կարևոր Տիրոջ համար: Ես հինգ դուստրերի և երկու որդիների մայր եմ, և ինչպես դուք կարող եք պատկերացնել, համեստության մասին հաճախ է խոսվել մեր տանը: Մակայն, տարիների ընթացքում ես սովորեցի, որ համեստությունը լավագույնս ուսուցանվում է վարդապետությունը ուսուցանելու և դրական օրինակ լինելու միջոցով: Վարդապետությունը կօգնի մեր երեխաներին հասկանալ, թե ինչու է համեստությունն այդքան կարևոր, և մեր օրինակը ցույց կտա համեստության օրինությունների երջանիկ եղանակները:

Ի՞նչ է համեստությունը:

Համեստությունը Աստծո կողմից տրված սկզբունք է, որը կարող է օգնել մեզ սովորել պատշաճորեն օգտագործել մեր մարմինները այս մահկանացու կյանքում: *Հավատքին Հավատարիմ* գրքույկում համեստությունը սահմանվում է որպես «հագուստով, հարդարանքով, լեզվի հեզությամբ և օրինականությամբ դրսևորվող վարք»:¹ Համեստությունը փառամոլ կամ պոռոտախոս չէ: Համեստ մարդիկ չեն օգտագործում իրենց մարմինները կամ իրենց վարքը աշխարհի գովասանքը փնտրելու համար կամ իրենց իսկ իրական կամ ենթադրվող հաջողությունների կամ ցանկալի վարքի վրա ուշադրություն գրավելու համար:

Խնդրում ենք, հիշեք, որ համեստության սկզբունքները, որոնցով կիսվում ենք այստեղ, վերաբերվում են տղամարդկանց և կանանց, որդիներին և դուստրերին, և հիշեք, որ ճիշտ ինչպես մենք ուսուցանում ենք և մեր օրինակով ցույց ենք տալիս համեստությունը, այնպես էլ մենք երբեք չենք դատապարտում նրանց, ովքեր ընտրում են կարճ կիսաշրջագծեստ կամ «փաժանագույն մագեր և բազմաթիվ շքեղ մատանիներ»:² Մենք միշտ կարեկցանքի և Քրիստոսանման սիրո օրինակ ենք

հանդիսանում, մնալով հավատարիմ Տիրոջ հաստատած չափանիշներին:

Ես վկայում եմ, որ ընտրությունները, որոնք մենք կատարում ենք համեստ տեսք և վարք ունենալու համար, զորեղ ուղերձ են հղում այն մասին, որ մենք հասկանում ենք մեր ինքնությունը որպես Աստծո որդիներ և դուստրեր և որ մենք ընտրել ենք կանգնելու սուրբ վայրերում:

Ես սիրում եմ այս սուրբ գրությունը. «Զգիտե՞ք որ դուք Աստծո տաճար եք և Աստծո Հոգին բնակվում է ձեզանում: . . . Աստծո տաճարը սուրբ է՝ որ դուք եք» (Ա Կորնթացիս Գ.16-17): Մեր մարմինները մեր հոգիների տաճարներն են: Այս մարմնեղեն տաճարում է, որ մենք հրավիրում ենք Սուրբ Հոգու ընկերակցությունը: Ես հավատում եմ, որ երբ մենք ընտրում ենք կրել համեստ հագուստ և համեստ վարք ենք ցուցաբերում, *մենք կրում և ապրում ենք մեր վկայությամբ* առ Աստված՝ Հավերժական Հայրը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը:

Ինչո՞ւ է համեստությունը կարևոր:

Մենք ապրում ենք բարու և չարի աշխարհում, և ֆիզիկական մարմինը կարող է օգտագործվել արդար կամ ամբարիշտ նպատակներով: Մակայն, մենք գիտենք, որ մեր թանկագին մարմինները պարզև են Աստծո կողմից՝ տրված մեզանից յուրաքանչյուրին: Դրանք սուրբ են: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է. «Փրկության ծրագիրը իմացողների և հասկացողների համար մարմինը պղծելը ապստամբության գործողություն է [տես Մովսիս 2.36–37] և որպես Աստծո որդիներ ու դուստրեր մեր ճշմարիտ ինքնության ուրացում»:³ Մենք ընտրում ենք հոգալ և պաշտպանել մեր մարմինները, որպեսզի կարողանանք գործիքներ լինել Աստծո ձեռքում՝ Նրա փառահեղ նպատակներն իրականացնելու համար (տես Ալմա 26.3): Եթե մենք ցանկանում ենք աջակցել Փրկչին և կատարել Նրա աշխատանքը, մենք պետք է

հարցնենք ինքներս մեզ. եթե Տերը կանգնած լիներ մեր կողքին, մենք մեզ հարմար կզգայի՞նք այն հագուստով, որը կրում ենք:

Համեստ հագուստը, արտաքին տեսքը, մտքերը և վարքը փաստում են, որ մենք հասկանում ենք ուխտերը, որոնք կապել ենք, որոնք օրհնում են մեզ, պահպանում են մեզ և զորություն են տալիս մեզ պատրաստվելիս՝ վերադառնալու Նրա ներկայություն: Երբ մենք մկրտվեցինք, մենք դուրս եկանք աշխարհից և ոտք դրեցինք Աստծո թագավորություն: Ամեն բան պետք է ուրիշ լինի մեզ համար: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է. «Ընտրելով լինել Նրա թագավորությունում՝ մենք առանձնացնում, ոչ թե մեկուսացնում ենք մեզ աշխարհից: Մեր հագուստը կլինի համեստ, մեր մտքերն՝ անբիծ, մեր լեզուն՝ մաքուր»:⁴

Համեստությունը սկզբունք է, որը կօգնի մեզ ապահով լինել ուխտի ճանապարհին, երբ մենք առաջ շարժվենք դեպի Աստծո ներկայությունը: Համեստ հագուստը, արտաքին տեսքը, միտքը և վարքը կօգնեն մեզ նախապատրաստվել սրբազան տաճարային ուխտերը կապելուն և պահելուն: Աղամին և Եվային օրհնելու և պաշտպանելու համար Աստված նրանց կաշվե հագուստ տվեց նախքան նրանց պարտեզից հանելը: Նման ձևով, Աստված մեզ տվել է ուխտյալ հագուստ մահկանացու կյանքում, որոնց խորհրդանիշն են մեր սուրբ տաճարային հագուստները:

Որո՞նք են համեստության օրհնությունները:

Ի՞նչ կարող ենք մենք ուսուցանել մեր որդիներին և դուստրերին, որպեսզի օգնենք նրանց քաջություն ունենալ ընտրելու համեստություն մի աշխարհում, որը կծաղրի և կարհամարհի նրանց իրենց մաքուր և առաքինի ընտրությունների համար: Արդյոք նրանք տեսնում են, որ մենք մեր մարմիններն օգտագործում ենք ուշադրություն գրավելու, թե՞ Աստծուն փառաբանելու համար:

Մտքով, խոսքով, արտաքին տեսքով և վարքով համեստ լինելն օգնում է մեզ ձեռք բերել երեք զորացնող և ազնվականական օրհնություններ:

1. Համեստությունը հրավիրում է Մուրբ Հոգու մշտական ընկերակցությունը: Երեց Հեյլսն ուսուցանել է. «Համեստությունը էական նշանակություն ունի Հոգուն արժանի լինելու համար»:⁵

Եկեք օգնենք մեր երեխաներին հասկանալ, որ նրանք չեն ցանկանա անել որևէ բան, որը կզրկի իրենց «Մուրբ Հոգու անասելի պարզկից» (Վեճ. 121.26): Օգնեք նրանց իմանալ, որ թանկագին և հզոր հոգևոր պարզկները զուգորդվում են Նրա սրբազան ընկերակցության հետ: Աստված խոստացել է. «Ես քեզ բաժին պիտի հանեմ իմ Հոգուց, որը կլուսավորի քո միտքը, որն ուրախությունով կլցնի քո հոգին. . . . դրանով դու կիմանաս բոլոր բաները, ինչ-որ կցանկանաս ինձանից,



որոնք վերաբերում են արդարության բաներին, հավատքով հավատալով ինձ, որ դու պիտի ստանաս» (Վեճ. 11.13-14): Գիտելիք, իմաստություն և վկայություն, երջանկություն, խաղաղություն և ուրախություն. սրանք են հրաշալի օրհնություններից մի քանիսը, որ մենք կարող ենք խոստանալ մեր զավակներին, երբ մենք հրավիրենք նրանց ապրել համեստորեն և արժանի լինել Մուրբ Հոգուն:

Համեստ հագուստի հետ կապված դժվարություններից մեկն այն է, որ նորաձևությունը և հասարակության կողմից ընդունված վարքագիծն անընդհատ փոխվում են: Տիրոջ չափանիշը երբեք չի փոխվում: Մովորեցրեք երիտասարդ տղամարդկանց և կանանց զգայուն լինել Հոգու հանդեպ, երբ նրանք ընտրություններ կատարեն, թե ինչ հագնել, ասել կամ անել: Երբ նրանք Հոգուն մոտ ապրեն, նրանք կարիք չեն ունենա լինելու այնպիսին, ինչպիսին աշխարհն է:

Մեր երեխաները ստացել են Մուրբ Հոգու պարզև, և նրանք գտնվում են ուխտի ճանապարհի վրա, որը տանում է դեպի տաճարը և կվերադարձնի նրանց Աստծո ներկայություն: Նրանք ունեն մեր կարիքը՝ իրենց հավաստիացնելու և օրհնակ լինելու նրանց համար, իմանալու, նրանք կառաջնորդվեն, կպաշտպանվեն, կմխիթարվեն և կմաքրագործվեն, եթե արժանի ապրեն Մուրբ Հոգուն:

2. Մենք կարող ենք ուսուցանել մեր որդիներին և դուստրերին, որ համեստ արտաքինը և վարքը օգնում են պաշտպանել մեզ աշխարհի կործանարար ազդեցություններից: Ամենախաբուսիկ զենքերից մեկը, որն օգտագործվում է մեր բոլորի դեմ, հասարակության կողմից ընդունված վերաբերմունքն է, որ բարոյականությունը հնաժողով է դարձել: Համեստությունը



Ուսուցանեք երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց զգայուն լինել շոգու հանդեպ, երբ նրանք ընտրություն են կատարում, թե ինչ հագնեն, ասեն կամ անեն: Երբ նրանք մոտ ապրեն շոգուն, նրանք կարիք չեն ունենա նմանվելու աշխարհին:

պաշտպանություն է նման չար ազդեցություններից և բարոյականության ու առաքինության պաշտպանը: Լսեք *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի այս խոսքերը. «Ամուսնությունից առաջ . . . մի արեք որևէ բան, . . . որը սեռական զգացումներ է առաջացնում»:⁶ Անհամեստ արտաքինը և վարքը հաճախ կառաջացնեն սեռական զգացումներ և կստիպեն անցնել սահմաններ և կիրավիբեն աճող գայթակղությանը զանց ամեն մաքրաբարոյության օրենքը:

Երեց Հեյլսն ուսուցանել է. «Համեստությունը գտնվում է մտքով և գործով մաքուր և բարոյական լինելու կենտրոնում: Այսպիսով, քանի որ այն առաջնորդում և ազդում է մեր մտքերի, վարքի և որոշումների վրա, համեստությունը գտնվում է մեր էության կենտրոնում»:⁷ Ուսուցանեք և համեստության օրինակ եղեք, որպեսզի օգնեք մեր երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց պատրաստ լինել պաշտպանելու իրենց մեջ եղած արարչական գործությունները: Օգնեք նրանց սուրբ մնալ և սիրո արտահայտությունը ամուսնու և կնոջ միջև պահել ամուսնության համար:

3. Համեստությունը մեզ թույլ է տալիս «կանգնելու որպես Աստծո վկաներ բոլոր ժամանակներում» (Մոսիա 18.9): Փրկիչն ուսուցանել է. «Բարձր պահեք ձեր լույսը, որպեսզի այն լույս տա աշխարհին: Ահա, ես եմ լույսը, որը դուք պետք է բարձր պահեք» (3 Նեփի 18.24): Մենք ունենք աստվածային հանձնարարագիր՝ լինելու փարոս աշխարհի համար, ցուցադրելու ավետաանով ապրելու ուրախությունը, ուսուցանելու արդարություն և կառուցելու Աստծո արքայությունը երկրի վրա: Մեզանից յուրաքանչյուրն արտացոլում է Քրիստոսի Լույսը, երբ համեստ է, մաքուր և պահում է պատվիրանները: Համեստությունը առ Փրկիչը և Հիսուս Քրիստոսի ավետարանը մեր ունեցած վկայության ապացույցն է:

Որքան գեղեցիկ և որքան օրհնված են նրանք, ովքեր առաջնորդվում են Սուրբ Հոգով, ովքեր պաշտպանում են իրենց աշխարհիկությունից, և ովքեր կանգնում են որպես Աստծո վկաներ աշխարհի առջև: Եվ օրհնված են նրանք, ովքեր օրինակ են հանդիսանում և ուսուցանում են համեստության վարդապետությունը Միոնի բոլոր որդիների և դուստրերի համար:

Քանի որ մենք ուխտ ենք կապել հետևելու Փրկչին և ցանկանում ենք մեր կյանքում ստանալ Նրա Քավության օրհնությունները, իսկապես կա միայն մեկ հանդերձանք, որը նշանակություն ունի: Մորոնիին գրել է. «Զարթոնիր և ելիր փոշուց, . . . այո, և հագիր *գեղեցիկ հանդերձանքդ*, ով Միոնի դուստր. . . որ Հավերժական Հոր ուխտերը . . . կատարվեն» (Մորոնի 10.31, նշումներն ավելացված են):

Գեղեցիկ հանդերձանքը արդարության գոտիներն են, որը կրում են նրանք, ովքեր պահել են իրենց ուխտերը: Մենք նախապատրաստում ենք մեր երեխաներին, որպեսզի հագնեն այս գեղեցիկ հանդերձանքը:

Ես վկայում եմ, որ փրկությունը Քրիստոսում է և որ նրանք, ովքեր պահել են իրենց ուխտերը «կունենան կատարյալ իմացություն իրենց վայելքի և իրենց արդարության, հանդերձավորված լինելով մաքրությանմբ, այո, նույնիսկ արդարության պարեգոտով» (2 Նեփի 9.14): ■

2013թ. մայիսի 2-ին *Բրիզալ Յանգի Համադարձված Կանանց համաժողովին ունեցած ելույթից:*

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Համառոտ համառոտում. *Ավետարանական վկայակոչում* (2004), 106:
2. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Իսրայել, Իսրայել, Աստված կանչում է», Եկեղեցու Կրթական Համակարգի հոգևոր հավաք, 9 սեպտ, 2012, cesdevotionals.lds.org:
3. Դեյվիդ Ա. Բեդնար, «Մենք հավատում ենք մաքրաբարո լինելուն», *Լիաինա*, մայիս 2013, 43:
4. Robert D. Hales, «The Covenant of Baptism: To Be in the Kingdom and of the Kingdom», *Liahona*, Jan. 2001, 8.
5. Robert D. Hales, «Modesty: Reverence for the Lord», *Liahona*, Aug. 2008, 18.
6. *Երիտասարդներին զորացնելու համար* (2011), 36:
7. Robert D. Hales, *Liahona*, Aug. 2008, 19.

ԻՄ ԱՂՈԹՔԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԾՈՎՈՒՄ

Երբ ես 17 տարեկան էի, մենք ապրում էինք մի կղզում հարավային Նորվեգիայում, որը կոչվում էր Անդաբելոյ: Հայրս դարձի էր եկել Եկեղեցում Անդաբելոյում, և ես մկրտվեցի այնտեղ օվկիանոսում:

Ես այդ ժամանակ ձկնորս էի և լավ փորձված էի նավակը վարելիս: Հայրս ինձ վրա դրեց ծովային տաքսիի ծառայության պարտականությունը, որն օգտագործվում էր տարածքի բնակիչների կողմից:

1941 թվականին, մի օր մենք զանգ ստացանք բժշկից Ֆլեքսեֆ-ջորդի հյուսիսիսային կողմից: Մի կին, որն ապրում էր նավակով մոտ երկու ժամ հեռավորության վրա, անհապաղ բժշկական օգնության կարիք ուներ: Բժիշկ Հոֆմանը հարցրեց, թե արդյոք կարո՞ղ էի տանել իրեն, որ տեսներ նրան,

բայց ծնողներս անհանգստացած էին փոթորիկի պատճառով, որը մոլեգնում էր Հյուսիսային ծովում: Մենք որոշեցինք ադոթել հարցնելով Երկնային Հորը, թե ինչ անեինք: Մենք ստացանք պատասխան, որ պետք է առաջ գնայինք:

Երբ ես արձակեցի *Թրիգը*, իմ 31-ոտնաչափ (10մ.) ձկնորսական նավակը դեպի ծովը, եղանակը վատ էր և ալիքները մեծ էին: Բժշկին վերցնելուց հետո, ես դուրս եկա ծովածոցի միջով դեպի բաց ծով: Մենք պետք է ճանապարհորդեինք դեպի մի համայնք, որը Լիստայի հենց հյուսիսային կողմում էր, որը տեղակայված էր Նորվեգիայի հարավային ժայռոտ ծովախորշի երկարությամբ— հայտնի իր փոթորկոտ եղանակով և նավաբեկություններով:

Ես վարում էի նավը փոթորիկի միջով, մինչև մենք հասանք ժայռոտ ծոցին, որը 40 ոտնաչափ (12մ) այն կողմում էր, որը տանում էր դեպի մեր նպատակակետը: Ալիքներն այնքան բարձր էին, որ ես չէի կարողանում վերահսկել նավակը ծովածոցի միջով, դրանք բշտում էին դեպի ծովածոցի ներսը և զարկվում էին ժայռերին:

«Ի՞նչ պիտի անենք», հարցրեց բժիշկը բքի միջից:

«Մենք պետք է ադոթենք դրա համար», պատասխանեցի ես:

Ես կանգ առա ու ադոթեցի, խնդրելով Երկնային Հորը ուղղություն տալ մեզ: Հենց որ ասացի՝ ամեն, մի հստակ պատասխան եկավ ինձ: Ես հանկարծ հիշեցի մի պատմություն, որը մի ծեր ձկնորս էր պատմել ինձ: Նա



ձկնորսությամբ էր զբաղվում այս նույն տարածքում մի ուժեղ փոթորիկի ընթացքում և չէր կարողանում հասնել ափ: Երբ նա սպասում էր փոթորիկին, նա նկատեց եկող ալիքների մի օրինաչափություն: Երեք շատ մեծ ալիքների ներհոսքից հետո, մի կարճ պահ հանգիստ էր հետևում, որը բավական էր նրան՝ ծովածոց մտնելու համար:

Ես շատ անգամներ էի ձկնորսությամբ զբաղվել այս տարածքում, բայց երբեք չէի նկատել ալիքային այդպիսի օրինաչափություն: Այնուամենայնիվ, ես նավակը բերեցի ծովածոցի դիմաց, որտեղ մենք սպասեցինք և հետևեցինք, թե ինչպես երեք մեծ ալիքներ ներս մտան: Իսկապես դրան հետևեց հանկարծակի հանգստություն: Ես առաջ թիավարեցի նավակը ջրի

Ալիքներն այնքան
բարձր էին, որ
ես չկարողացա
վերահսկել նավակը
ծովածոցի միջով:

հարթ մակերևույթի վրայով դեպի ծովախորշի ներսը և ապահով ափ դուրս բերեցի բժիշկ Հոֆմանին: Նա շտապեց հիվանդ կնոջ մոտ, մինչ ես սպասում էի նավակում՝ շնորհակալ լինելով Երկնային Հորը իմ աղոթքին պատասխանելու համար:

Երբ բժիշկը մեկ ժամ անց վերադարձավ, նա հայտարարեց. «Մենք փրկեցինք նրա կյանքը»:

Հանգստացած նորությունից և բարելավված եղանակից, ես վարեցի նավակը դեպի տուն առանց որևէ պատահարի:

Ես բերում եմ իմ վկայությունը, որ երբ մենք կարիք ենք ունենում օգնության, մենք պետք է աղոթենք: Ես գիտեմ, որ Երկնային Հայրը կպատասխանի: ■

Օլաֆ Թորլիֆ Ջենսեն, Յուտա, ԱՄՆ

ՆԱ ՍԻՐՈՒՄ Է ՁԵՋ

Ես նստած էի սելեստիալ սենյակի մի անկյունում՝ երգեհոնի կողքին Մեմֆիսի Թեննեսսի Տաճարի նվիրագործման ընթացքում: Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստը (1920–2007), Առաջին Նախագահության անդամ 1995 թվականից մինչև 2007 թվականը, եկել էր նվիրագործելու տաճարը: Նա և մի քանի ուրիշ առաջնորդներ նստած էին միկրոֆոնի ետևում: Տեղի եկեղեցական երգչախումբը խմբվեց և կանգնեց նրանց ետևում:

Մի երիտասարդ կնոջ, որին ես ուսուցանում եմ այցելությամբ, երգչախմբի անդամ էր: Ժողովի ընթացքում ես աղոթեցի, որ նա ստանար այն, ինչի համար նա եկել էր: Նա ինձ խոստովանեց, որ եկել էր տաճարի նվիրագործմանը այդ օրը, պարզելու իր դիրքը Տիրոջ հետ: Նա

գործել էր լուրջ մեղքեր անցյալում, և չնայած նա ապաշխարել էր, նա դեռևս պայքարում էր՝ լավ զգալու իրեն և նույնիսկ լավ զգալու երգչախմբում երգելու համար:

Ես նայեցի Նախագահ Ֆաուստին, զգալով, որ նա որպես Տիրոջ ներկայացուցիչ Առաջին Նախագահությունում, պետք է կարողանա ինչ որ բան անել: Բայց ինչպես ես կարող էի ասել նրան և ինչպես կարող էր նա անել ինչ որ բան: Ժողովից հետո նա խմբով հեռանալու էր սենյակից, ճիշտ ինչպես որ ներս էր մտել, և չէր լինելու նախաբաններ, ոչ մի ձեռքսեղմումներ և ոչ մի խոսքերի փոխանակում: Ես հասկանում էի, նա զբաղված էր և ճանապարհորդության պետք է նախապատրաստվեր, բայց ես, այնուամենայնիվ, աղոթում էի:

Նախագահ Ֆաուստը խորը մտքի մեջ նայեց ինձ մի պահ՝ նրա հոնքերի մկանները միմյանց էին միացած: Երբ ժողովը վերջացավ, մի երջանիկ արտահայտություն ողողեց նրա դեմքը լույսով:

Նա ինձ կրկին նայեց և հետո հանկարծ կանգնեց, շրջվեց և առաջ մեկնեց ձեռքն այնքան հեռու, որքան այն կզնար: Նա ուղիղ մատնացույց արեց իմ ընկերուհուն: Սպա նա ասաց հաստատապես և բարձրաձայն. «Տերը սիրում է ձեզ»:

Նախագահ Ֆաուստի ժեստը փոքրիկ էր և պարզ, սակայն այնքան հզոր, որ այն կարող էր գալ միայն նրա հետ Սուրբ Հոգու հաղորդակցությունից, որը ես չէի կարող: Այդ մի քանի խոսքն օրհնեց իմ ընկերուհուն և շարունակում է հաստատել իմ հավատքը, որ Տերը լավատեղյակ է մեր կյանքի մանրամասներին և «որ փոքրիկ և ասարակ բաներով տեղի են ունենում մեծ բաները» (Ավմա 37.6): ■

Ալիս Կիկտորիա Ուեսթոն-Շերվուդ, Արկանսաս, ԱՄՆ

ԵՍ ԼՍԵՑԻ ԵՐԵՄԱՆԵՐԻՆ

Կլինիկական ընկճախտը մի բան էր, որին ես երբեք չէի կամենա կրկին դիմակայել: Բայց դրանից 12 տարի առաջ ազատվելուց հետո, այն վերադարձավ:

Ես վախեցած էի և խելագարված: Ես խնդրում էի Երկնային Հորը և աղոթում ուժ ունենալու՝ իմ փորձությունը հաղթահարելու համար: Ես նաև խնդրում էի, որ իմ ընկճախտը չտևեր հինգ տարի, ինչպես դա տեղի էր ունեցել անցած անգամ:

Իմ ամուսինն ու ես ունենք երեք երեխա՝ երկու որդի և մեկ դուստր, ովքեր օրհնել են մեզ 13 թոռներով: Իմանալով այն հուսահատությունը, որ ես դիմակայեցի, դուստրս կազմակերպեց մեկօրյա ծոմ և աղոթք: Բոլոր թոռները 1-ից 10 տարեկան ուզում էին աղոթել տատիկի համար և երեքը, ովքեր մկրտվել էին, ցանկացան ծոմ պահել: Այնպիսի մխիթարություն էր իմանալը, որ ամուսինս, երեխաներս և թոռներս ծոմ էին պահելու և աղոթելու ինձ համար:

Բոլոր 1-ից 10 տարեկան թոռները ցանկացան աղոթել տատիկի համար, իսկ երեքը, ովքեր մկրտվել էին, ցանկացան ծոմ պահել:

Հաջորդ օրը, երբ ես արթնացա քնից, ընկճախտի զգացումն այնքան էլ ուժեղ չէր զգացվում: Հաջորդ օրն այն նույնիսկ ավելի ցրվեց: Միչև հինգերորդ օրը իմ ընկճախտը լիովին ցրվեց: Այդ երեկոյան, երբ ես մտածում էի, թե ինչպես պատահեց այս հրաշքը, մի ձայն դիպավ հոգուս և ասաց ինձ. «Ես լսեցի երեխաներին»: Երկնային Հայրը լսել էր նրանց իրենց անմեղության մեջ և պատասխանել նրանց խոնարհության, հավատքի և սիրո աղոթքներին:

Փրկիչն ուսուցանել է.

«Եթե դարձի չգաք և չլինիք երեխաների նման, չեք մտնիլ երկնքի արքայությունը:

Արդ ով որ իր անձը այս երեխայի նման խոնարհեցնե, նա է մեծ երկնքի արքայության մեջ» (Մատթեոս 18.3-4):

Ես գրեցի իմ թոռներին և շնորհակալություն հայտնեցի նրանց՝ ինձ

համար ծոմ պահելու և աղոթելու համար: Ես ասացի նրանց, թե որքան շատ էի նրանց սիրում: Ես նրանց ասացի, որ Երկնային Հայրը լսել է նրանց աղոթքները և պատասխանել իրենց աղոթքներին:

Երբ իմ թոռները աճում են ավետարանում, ես հուսով եմ, նրանք կհիշեն այն ժամանակը, երբ Երկնային Հայրն ասաց իրենց տատիկին. «Ես լսեցի երեխաներին»: Եվ ես հուսով եմ, այդ փորձառությունը կգորացնի նրանց վկայությունը և կօգնի նրանց ուժեղ մնալ ավետարանում: ■

Ջո Քրոմար, Կալիֆոռնիա, ԱՄՆ



ԲԱՐՁՐ ԳՐԱՎԶՈՒԹՅԱՄԲ ԹՈՒՅՆ

Երբ ես դուրս եկա դիմացի դռնից վերցնելու լրագիրը, ես տեսա մի անդուր տեսարան: Կարմրավուն գույնի այրող մրջյունները թումբ էին կազմել գիշերվա ընթացքում՝ բարձրանալով մարգագետնի և մայթի միջև գոյացած ճեղքի միջից:

Չնայած ամուսինս և ես Տեխասում, ԱՄՆ, երկար չէինք ապրել, ես գիտեի իմ ցավոտ փորձառությունից, որ մրջյունների այրող խայթոցի, ոչ թե գույնի պատճառով էին դրանք վաստակել իրենց մականունը: Ես քայլերս ուղղեցի դեպի տնակը, որտեղ մենք պահում էինք թունաքիմիկատները: Այնուհետև ես կարդացի պիտակի վրայի հրահանգները:

«Այս թունաքիմիկատը բարձր գրավչություն ունի այրող մրջյունների համար», - ասվում էր այնտեղ: «Նրանք կտանեն այն իրենց թումբը, կկերակրեն իրեն մայր մրջյունին և մրջնագաղութը կմահանա»: Պիտակը հրահանգում էր ինձ շաղ տալ մի քանի հատիկներ թմբի վրա և կողքերը: Մնացածը կանեին մրջյունները:

Ես թերահավատ էի: Այրող մրջյունները բավականին խելացի էին թվում ինձ, որոնք կարողանում են կառուցել բարձր թմբեր մեկ իսկ գիշերում: Ես կասկածում էի, թե նրանք կխաբվեին ծպտված թույնով, բայց ես այնուամենայնիվ շաղ տվեցի:

Մի քիչ անց ես տեսա, որ թումբը եռուզեռի մեջ էր: Ես հեռավորություն էի պահպանում, բայց կռացած նայում էի իրարանցմանը: Նրանք այնպես էին

խանդավառված, կարծես թե երկնքից հենց նոր մանանա էր տեղացել: Նրանք բարձրացնում էին սպիտակ հատիկները իրենց փոքրիկ չանչերով և միմյանց բախվելով իրենց շտապողականության մեջ՝ տանում թույնը իրենց թումբը:

Ես հետևում էի սարսափած զարմանքով: Նրանք պատրաստակամորեն տանում էին թույնը իրենց տուն: Ակնհայտորեն «բարձր գրավչություն» բառերը չափազանցված չէին: Ինչ որ ձևով թունաքիմիկատների ընկերությունը կարողացել էր ինչ որ վատ բանը՝ նույնիսկ մահացուն, չափազանց լավ երևացնել:

Ես երբեք չեմ տեսել ավելի զարմանալի օրինակ, թե ինչպես վատը կարող էր դարձվել լավ երևացող: Դա ստիպեց ինձ մտածել այն մասին, թե ինչպես է սատանան անում նույն բանը: Ես հանգստացա հասկանալով, որ չնայած նա կարող է շաղ տալ իր ծպտված թույնը իմ տան շուրջը, նա չի կարող այն ներս բերել, մինչև ես թույլ չտամ նրան: Այսպիսով ինչպե՞ս կարող եմ այն դուրս պահել:

Իմ սիրելի սուրբ գրության հատվածներից մեկը միտքս եկավ. «Քանզի ահա, Քրիստոսի Հոգին տրվում է ամեն մարդու, որպեսզի նա կարողանա բարին տարբերել չարից»: Այդ Հոգով, բացատրում է Մորմոնը, մենք կարող ենք «կատարյալ իմացությամբ իմանալ» թե արդյոք ինչ որ բան Աստծո՞ւց է, թե սատանայից (Մորմոնի 7.16):

Այդ դատապարտված մրջյուններին հետևելու փորձառությունը լցրեց ինձ երախտագիտությամբ,

որ ամուսինս և ես կարող ենք դատել և իմանալ անկասկած, արդյոք թույլ տալ ինչ որ բան մտնի մեր տուն: Մեր գործն էր ուսուցանել մեր երեխաներին հետևել Քրիստոսի Հոգուն, որպեսզի նրանք ևս կարողանային ճանաչել թույնը, երբ այն հանդիպեր իրենց:

Երբ ես կռացած նայում էի այդ միջատներին յուրաքանչյուր վերջին հատիկը իրենց թումբը տեղափոխելիս, ես երդվեցի անել այն ամենը, ինչ կարող էի՝ թույնը իմ տնից հեռու պահելու համար: ■

Ալիսոն Լ. Ռադոլ, Յուտա, ԱՄՆ

Պիտակը հրահանգում էր ինձ շաղ տալ որոշ հատիկներ թմբի վրա և մոտակայքում: Մրջյունները կանեին մնացածը:



Պաշտպանելով այն, ինչի մենք հավատում ենք

Մենք ապրում ենք մի աշխարհում որտեղ շատերը տեսնում են չարը որպես բարի և բարին որպես չար, և մենք պետք է պաշտպան կանգնենք բարուն: Հետևյալը վկայություններ են երիտասարդ չափահասներից, ովքեր պաշտպանում են այն, ինչին իրենք հավատում են: Նրանք չեն վիճում կամ բարկության մեջ արձագանքում կամ չարության: Նրանք ցույց են տալիս «ինչպես քաջություն, այնպես էլ քաղաքավարություն»¹ և, դրա արդյունքում զորացնում են ուրիշներին (տես 3 Նեփի 12.44–45):





ԵՂԲԱՅՐԱ ՏՐԱԺԱՐՎԵՑ ՇԱՄՊԱՆՆ ԽՄԵԼ

Ֆրանսիայում գինավորական ծառայությունը պարտադիր է: Իմ 20-ամյա փոքր եղբայրը՝ Լոյսը, որոշեց գնալ պահեստային սպաների դպրոց՝ դառնալու լեյտենանտ: Իր ուսման վերջում տեղի ունեցավ երդման արարողություն՝ նոր սպաների համար: Յուրաքանչյուրն իր հերթին պետք է արտասաներ գնդի կարգախոսը: Այնուհետև նա պետք է խմեր մի բաժակ շամպայն, որը վարդ էր պարունակում՝ կլանելով երկուսն էլ: Այս ավանդույթը սկսվել է Նապոլեոն Բոնապարտի ժամանակից և ոչ մի սպա այդ ժամանակից ի վեր չի հրաժարվել մասնակցել:

Լոյսն ասաց գնդապետին, որ իր կրոնական սկզբունքներն իրեն թույլ չեն տալիս խմել ալկոհոլ: Սառը լռություն հետևեց Լոյսի ազատման խնդրանքին: Գնդապետը կանգնեց: Փոխարենը ստիպելու Լոյսին խմել շամպայնը, նա շնորհավորեց նրան՝ չնայած ճնշմանը իր սկզբունքները պահելու համար, ասելով, որ նա հպարտ էր ողջունել այդ հավատարիմ մարդուն իր գնդում: Նրանք փոխարինեցին շամպայնը և Լոյսը մասնակցեց երդման արարողությանը:

Պիեռ Անթիան, Ֆրանսիա

ԵՍ ՏՐԱՎԻՐՎԵՑԻ ՄԻ ՎԱՅՐԵՆԻ ԵՐԵԿՈՒՅԹԻ

Քոլեջից հետո իմ քույր Գրեյսը և ես մի քանի ուրիշ Վերջին Օրերի Սրբերի հետ աշխատում էինք մի ընկերության համար: Մեր գործատուները Եկեղեցու անդամներ չէին: Երբ քույրս նշանվեց, մեր գործատուն անակնկալ հարսանյաց շնորհավորանքներ ծրագրեց նրա համար: Հուսով էի նա կհարգեր մեր չափանիշները, բայց փոխարենը նա պատվիրեց լիկյոր, պարոդ տղամարդ և մի խայտառակ տեսաֆիլմ:

Նախքան հարսանյաց շնորհավորանքները, ես զգացի Սուրբ Նոգու հուշումները իմ ներսում, որը քաջալերում էր ինձ հիշեցնել իմ բուսին մեր չափանիշների մասին: Ես վերցրեցի իմ Երիտասարդ Կանանց մեղալի ինքը և մտածեցի այն բոլոր ջանքերի և զոհաբերությունների մասին, որ ես կատարել էի, երբ ես Երիտասարդ Կանանց կազմակերպությունում էի՝ լրացնելու իմ անձնական առաջընթացի ծրագիրը: Ես աղոթեցի, որ այս անգամ ես մի քիչ ավելի բարձրահասակ կանգնեի: Ես գրեցի իմ մտահոգությունները իմ գործատուին, մտածելով, որ նա կվիրավորվեր: Այնուամենայնիվ, իմ մեծագույն ցանկությունն էր գոհացնել Երկնային Հորը:

Երբ երեկոյթը սկսվեց, իմ գործատուն չխոսեց ինձ հետ կամ նույնիսկ չժպտաց ինձ: Սակայն նա փոխել էր պարողին և տեսաֆիլմը:

Երեկոյթին հաջորդող օրերի ընթացքում, իմ տնօրենը չխոսեց և չծիծաղեց ինձ հետ, ինչպես նախքան երեկոյթն էր անում: Այնուամենայնիվ, ես ինձ հանգիստ էի զգում, որովհետև ես գիտեի, որ Աստված գոհ էր նրանից, ինչ ես արեցի: Մոտ մեկ շաբաթ անց, իմ փոխհարաբերությունները իմ տնօրենի հետ վերադարձան իրենց նորմալ ընթացքին: Ես գիտեմ Աստված փափկացրեց նրա սիրտը և օգնեց նրան հասկանալ, որ ես ապրում էի նրանով, ինչին հավատում էի:

Լեմի Լաբիթագ, Կազայան Վալի, Ֆիլիպիններ



ԵՍ ԼՍԵՑԻ ԳՈԵՇԻԿ ԽՈՍԵԼԱԶԵՎ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Երբ ես մոտ 18 տարեկան էի, ես կարի դասընթացներ անցա: Մի օր երեք աղջիկներ ինձանից մի քանի քայլ հեռու սկսեցին օգտագործել վիրավորական խոսելաձև: Ես չգիտեի, թե պետք է անտեսել ընդհարումից խուսափելու համար, թե պետք է կանգնելի՞ս պաշտպան իմ չափանիշների և խնդրի նրանց կանգ ամեն: Ի վերջո ես ասացի որքան հնարավոր էր քաղաքավարի. «Ներեցեք ինձ, բայց չէի՞ք հետևի ձեր խոսելաձևին»:

Աղջիկներից ամենախոշորը կատաղի նայվածք նետելով ինձ վրա ասաց. «Մենք կխոսենք ինչպես որ կկամենանք»:

Ես ասացի. «Բայց մի՞թե դուք իսկապես պետք է հայիոյեք:

Դա իսկապես վիրավորում է ինձ»:

Նա ասաց. «Ուրեմն ուղղակի մի լսիր»:

Ես սկսեցի վրդովվել և ասեցի. «Դժվար է չլսելը, երբ դուք այդքան բարձր եք խոսում»:

Նա ասաց. «Համակերպվեք դրա հետ»:

Ես հանձնվեցի: Ես նեղսրտված էի աղջիկների վրա, բայց ավելի շատ նեղսրտված էի իմ վրա: Ես չէի հավատում, որ թույլ էի տվել, որ իմ տոնը դառնար հակաճառողական: Աղջիկները դեռևս հայիոյում էին և այժմ մենք բոլորս բարկացած էինք:

Ես հանդարտվելուց հետո, տեսա, որ աղջիկները խնդիր ունեին իրենց կարի մեքենաների հետ: Ես գիտեի, թե ինչ էր պատահել, որովհետև նախկինում ունեցել էի այդ նույն խնդիրը: Այսպիսով ես ցույց տվեցի նրանց, թե ինչպես սարքելն այն: Ես տեսա, թե ինչպես ամենախոշոր աղջկա դեմքի արտահայտությունը փոխվեց: «Դեհ, -ասաց նա,- կներես»:

Ես չէի կարողանում հավատալ դրան, նա ներողություն էր խնդրում:

«Ես էլ եմ ցավում, -ասացի նրան,- Ես չպետք է այդպես բարկանայի»:

Ես ետ գնացի դեպի իմ կարի մեքենան և չլսեցի այլևս ոչ մի հայիոյական խոսք: Այդ փորձառությունն ուսուցանեց ինձ, որ մեր խոսքերը չէին կարող փոխել մյուսների վերաբերմունքը, բայց բարոյությունը և ծառայությունը հաճախ կարող են:

Քաթի Փայք, Յուտա, ԱՄՆ



ԵՍ ՊԱՇՏՊԱՆԵՑԻ ՄԻՍԻԱ ԾԱՌԱՅԵԼԸ

Ես միացա Եկեղեցուն, երբ 19 տարեկան էի, երեք որդիներից երկրորդը և միակ Վերջին Օրերի Սուրբը իմ ընտանիքում: Մկրտվելուց հետո, ոչ շատ անց, ես սկսեցի միսիա ծառայելու ցանկություն զգալ: Մեկ տարի անց, Հոգին ասաց ինձ ես պետք է գնամ: Ես խոսեցի մայրիկիս հետ, որը զգում էր, որ դա ճիշտ չէր, որ ես գնայի: Ես հետաձգեցի ևս մեկ տարի, բայց միսիա ծառայելու ցանկությունը երբեք չլքեց ինձ: Այդ տարվա ընթացքում ես ուսումնասիրեցի սուրբ գրությունները, փող խնայեցի, պատրաստեցի թղթերս, անցա բոլոր բժշկական քննությունները, և—մյուս բոլոր բաները լրացնելուց հետո— ես սպասեցի Տիրոջը: Ոչ շատ երկար անց, ես ստացա կանչ՝ ծառայելու Բրազիլիայի Կամպինաս Միսիայում:

Ծնողներս դեռևս դեմ էին: Ես ծոմ պահեցի և աղոթեցի բացեփառ, պատմելով Երկնային Հորը իմ երկյուղների մասին: Ես խնդրեցի Նրան փափկացնել իմ երկրային հոր սիրտը: Նա արեց: Ի զարմանս ինձ հայրս մասնակցեց իմ հրաժեշտի երեկոյթին, որն ընկերներս էին պատրաստել ինձ համար շաբաթ օրը՝ նախքան իմ մեկնելը: Եվ այդ երկուշաբթի հայրս ինձ տարավ օդանավակայան:

Իմ միսիայի ընթացքում ես զգում էի Աստծո սերը, երբ քարոզում էի ավետարանը: Մայրս չէր դադարում մայր լինելուց, և երբ ես տուն վերադարձա, նա առաջին մարդն էր, որ գրկեց ինձ:

Ես սովորեցի, որ միսիա ծառայելը շատ ավելին է, քան պարտականություն կատարելը, դա արտոնություն է և աճի և սովորելու սքանչելի ժամանակ:

Քլեիսոն Վելինգթոն Ամօրիմ Բրիթո, Պարաիբա, Բրազիլիա



ԵՍ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԵՑԻ ԱՍՏԾՈ ՄԱՍԻՆ

Որպես մեր երկրի լավագույն համալսարանի առաջին կուրսեցի, ես ճնշում էի զգում անելու իմ լավագույնը: Եկավ հալածանքը, և ես սկսեցի կասկածել ավետարանի հանդեպ իմ հավատքին, քանի որ իմ դասախոսներից շատերը մեկնաբանում էին այն, ինչ իրենք կոչում էին «իրականություն»: Իմ դասընկերներից շատերը ազդեցության տակ էին: Այս միջավայրը դժվար էր դարձնում պահել Քրիստոնեական արժեքները: Ես մտածեցի վերջ տալ, բայց որոշեցի, որ ավելի լավ էր մնալ: Ես մտածեցի, որ եթե կային միայն մի քանիսը, ովքեր որակավորված էին ընդունվելու այս համալսարանը, և այդ քչերի մեջ ընդամենը մի քանի Վերջին Օրերի Սրբեր էին, ապա ես պետք է մնայի և պաշտպանեի ճշմարտությունը:

Իմ կենսաբանության դասախոսը, մի ինքնակոչ աթեիստ, ուսուցանում էր գիտություն՝ Գերագույն Արարչի հանդեպ առանց որևէ հավատքի: Սակայն որքան ավելի շատ էի լսում, այնքան դա ավելի էր ամրացնում ինձ, որ կա Գերագույն մի Եակ՝ Աստված, մեր Հայրը, ով ստեղծել է բոլոր այս բաները: Մյուսները պնդում էին, որ այս գաղափարը ոչ մի նշանակություն չունի: Մեր քննարկումները դառնում էին ավելի լարված: Ես շատ էի ցանկանում բարձրացնել ձեռքս և բացատրել, որ հավատում եմ Աստծուն որպես Արարիչ:

Եկավ մեկնաբանություններ կատարելու ժամանակը: Իմ համալսարանում նորմալ էր համարվում ծափահարելը, գոչելը կամ սուլելը նրանց, ովքեր ներկայացնում էին իրենց գաղափարները: Ես համարձակորեն կանգնեցի և հստակորեն ասացի հակառակ կողմին. «Աստծուն հավատալը կարող է որևէ իմաստ չունենալ ձեզ համար այս պահին, բայց կգա օրը, երբ այն նշանակություն կունենա ձեզ համար այնպես հստակորեն, ինչպես այն ինձ համար ունի այժմ»:

Այդ ժամանակից ի վեր ես երբեք չեմ ստացել որևէ սուլոց, երբ ես պաշտպանել եմ իմ համոզմունքները: Այդ օրվակից սկսած ես առաջընթաց ապրեցի կրթական, հասարակական և հոգևոր ասպարեզներում: Ես սկսեցի ակտիվ դառնալ ուսանողական միջոցառումներում, և ես ընտրվեցի մի քանի համալսարանական պաշտոններում:

Ես հասկացա, որ ճշմարտության համար պաշտպան կանգնելը նույնիսկ մեկ անգամ մեծապես ազդում է մեր ապագա որոշումների վրա: Վինսեն Ա. Մոլեջան Կրտ., Մինդանաո, Ֆիլիպիններ

ՀՂՈՒՄ

1. Տես Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Աշակերտ լինելու գինը և օրհնությունները», *Հիստորիա*, Մայիս 2014, 6:

Իմ միահյուսված ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Այվի Նոչե

Միսիոներներն ուսուցանեցին իմ ընտանիքին Մորմոնի Գիրքը մեր տանը Մինգապուրում: Հայրս չմիացավ Եկեղեցուն, բայց մայրս միացավ: Նա ուսուցանեց մեզ Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին: Նույնիսկ որպես երեխա, ես հպարտորեն պատմում էի իմ ընկերներին, որ ես Վերջին Օրերի Մուրբ էի:

Ես միշտ վստահում էի մորս ուսուցումներին: Բայց, երբ ես դարձա երիտասարդ չափահաս, մի միսիոներ հարցրեց, թե քանի անգամ էի կարդացել Մորմոնի Գիրքը: Ինձ այս հարցը տվել էին նախկինում, բայց այս անգամ ես հասկացա, որ քանի որ ես չէի կարդացել Մորմոնի Գիրքը, ես չգիտեի թե արդյոք այն ճշմարիտ էր:

Անհերքելի փաստ

Ես այլևս չէի կարող խուսափել անհերքելի փաստից՝ Հիսուս

Ինձ համար Հիսուս Քրիստոսի ավետարանի և Մորմոնի Գրքի ճշմարտացիությունը միահյուսված են: Եթե ավետարանը ճշմարիտ է, ապա Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:

Քրիստոսի ավետարանի ճշմարտացիության և Մորմոնի Գրքի ճշմարտացիության միահյուսվածությունից: Եթե ավետարանը ճշմարիտ է, ապա Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Քանի որ ես չգիտեի, թե արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ էր, այժմ ես անվստահ էի զգում ամեն ինչի հանդեպ, որոնց հավատալով էի ես մեծացել:

Շփոթությունը լցվում էր միտքս և —«Արդյոք Մորմոնի Գիրքը ճշմարիտ է» հարցը— մնում էր իմ սրտում:

Իմ աճող փոխհարաբերությունը Փրկիչ Հիսուս Քրիստոսի հետ, նույնպես տանում էր ինձ դեպի ճշմարտության համար ցանկության: Այն օրը, երբ ես հասկացա, որ ես կարող էի իմանալ բավականաչափ Հիսուս Քրիստոսի մասին՝ առանց լռջորեն կարդալու Մորմոնի Գիրքը, այն օրն էր, երբ ես խորապես ցանկացա իմանալ, թե արդյոք այն ճշմարիտ էր:

Կանգված որպես ուսուցիչ

Ես աղոթեցի առաջնորդության համար: Այդ ժամանակարնթացքում, իմ ճյուղի նախագահը կանչեց ինձ ուսուցանելու Մորմոնի Գրքի մասին Ավետարանի վարդապետության դասարանում: Ես ընդունեցի կոչումը, որովհետև ես զգացի,

որ դա կարող էր լինել Տիրոջ պատասխանը՝ օգնելու ինձ իմանալ Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին և Փրկչին ավելի մոտենալու համար:

Ուսուցանելը դժվար էր: Առաջին մի քանի կիրակիներից հետո, ես գիտեի, որ ես երբեք արդյունավետ չեի լինի, մինչև չհավատայի Մորմոնի Գրքին:

Պատմությունները քողազրկվեցին գլուխ առ գլուխ

Ես սկսեցի ուսումնասիրել Մորմոնի Գիրքը ամեն շաբաթ և շուտով ուրախություն գտա իմ կարդալու ընթացքում: Մորմոնի Գրքի պատմությունները քողազրկվեցին գլուխ առ գլուխ և մոտեցրեցին ինձ Հիսուս Քրիստոսին:

Ես կարդացի Քրիստոսի ծննդյան պատմությունը, որը Նեփին տեսավ իր տեսիլքում.

«Եվ ես տեսա Նազարեթ քաղաքը և Նազարեթ քաղաքում ես մի կույս տեսա և նա չափազանց գեղեցիկ էր ու սպիտակ: . . .

Եվ նա ասաց ինձ. Նայի՛ր, կույսը, որին դու տեսնում ես, Աստծո Որդու մայրն է՝ մարմնական ձևով» (1 Նեփի 11.13, 18):

Ես կարդացի երջանկության ծրագրի մասին և իմացա, որ հավատքն առ Հիսուս Քրիստոս անհրաժեշտ է մեր փրկության համար: Ամուղեկն ուսուցանել է.

«Ես իրոք գիտեմ, որ Քրիստոսը պիտի գա մարդկանց զավակների մեջ, իր վրա վերցնելու իր ժողովրդի օրինազանցությունները, և որ նա պիտի քավի աշխարհի մեղքերը. Քանզի Տեր Աստված է ասել այս:

. . . «Քանզի Հավերժական Աստծո մեծ ծրագրի համաձայն, պետք է մի քավություն արվի, այլապես, ողջ մարդկությունն անխուսափելիորեն պիտի կորչի» (Ալմա 34.8–9):

Ես կարդացի Հիսուս Քրիստոսի մյուս ոչխարներին Նրա ծառայության մասին հնադարյան Ամերիկայում, և ես գիտեի, որ Նա է բոլոր ազգերի Աստվածը: Նա ասել է Նեփիացիներին. «Դուք եք նրանք, ում մասին ես ասացի. ուրիշ ոչխարներ ունեմ, որոնք այս փարալսից չեն. նրանց նույնպես ես պիտի բերեմ, և նրանք կլսեն իմ ձայնը. և կլինի մեկ հոտ և մեկ հովիվ» (3 Նեփի 15.21):

Իմ վկայությունը եկավ քիչ-քիչ

Երբ ես կարդում էի Մորմոնի Գիրքը, իմ հավատքը Հիսուս Քրիստոսի հանդեպ պայծառանում էր և իմ հասկացողությունը Նրա ծրագրի հանդեպ ընդլայնվում էր (տես Ալմա 32.28):

Ես վկայում եմ, որ Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է: Մուրբ Հոգին հայտնել է ինձ, որ

Ջոզեֆ Սմիթը ճշմարիտ մարգարե է, ով վերականգնեց Աստծո Եկեղեցին երկրի վրա և ով թարգմանեց Մորմոնի Գիրքը ոսկյա թիթեղներից: Մորմոնի Գիրքը վկայում է Հիսուս Քրիստոսի մասին և աշխատում է ձեռք ձեռքի Աստվածաշնչի հետ միասին: Միասին նրանք վկայում են, որ Հիսուս Քրիստոսն է իսկապես Աստծո Որդին, և որ Նա է *բոլոր* ազգերի Աստվածը, ոչ թե հենց մեկի: ■

Հեղինակն սպառում է Մինգասպուրում:



ՄԵՐ ԿՐՈՆԻ ՊՈՐՏԱՔԱՐԸ

«Ինչպես կամարն է փլուզվում, երբ պորտաքարը հանվում է, այն-

պես էլ ողջ Եկեղեցին կանգուն կմնա կամ կընկնի՝ կախված Մորմոնի Գրքի ճշմարիտ լինելուց: . . . Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, — և միլիոնավոր մարդիկ այսօր վկայում են, որ Հոգու հաստատում են ստացել, որ այն իսկապես ճշմարիտ է, — ապա մարդ պետք է ընդունի Վերականգնման մասին բոլոր պնդումները և դրան ուղեկցող մյուս հայտարարությունները»:

Նախագահ Էդրա Թաֆթ Բենսոն (1899–1994), Քարոզիչ Իմ Ավետարանը. Միսիոներական ծառայության ուղեցույց (2004), 104:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ:

Ազատ կամքի իմաստուն
օգտագործումը մեր ընտրու-
թյունները բաց է պահում և
բարելավում ճիշտ ընտրելու
մեր կարողությունը:

Մայքլ Ռ. Մորիս

Եկեղեցու ամսագրեր

Ես դեռ հիշում եմ, թե որքան մտա-
հոգված էի ես, երբ պատրաստ-
վում էի տեսնել իմ եպիսկոպոսին
միսիա ծառայելու կապակցությամբ:
Ես կասկածում էի, թե արդյո՞ք բա-
վականաչափ արժանի էի:
Մարգարե Ջոզեֆ Սմիթի
նման ես մեղավոր չէի «մեծ
ու չարամիտ մեղքերում»
(Ջոզեֆ Սմիթ—Պատմու-
թյուն 1.28), բայց ես միև-
նույն է հուզված էի:

Ես հուզված էի,
որովհետև ես չէի կա-
րողանում չմտածել իմ
ընկեր Դաննիի մա-
սին (անունը փոխված է):

Ամիսներ շարունակ Դաննին
խոսում էր այն մասին, թե որքան
անհամբեր էր սպասում միսիա
ծառայելուն: Բայց դա փոխվեց, երբ
հանդիպեց եպիսկոպոսի հետ:

Քանի որ Դաննին անարժան վար-
քագիծ էր դրսևորել մի քանի երիտա-
սարդ կանանց հանդեպ, ինչպես նա
հետազայում պատմեց ինձ, նա իրեն
որակագրկել էր՝ լիաժամկետ միսիա
ծառայելու համար: Նա այլևս ազատ
չէր ընտրելու միսիան:

Դաննին Նախագահ Բոյդ Ք.
Փաքերի՝ Տասներկու Առաքյալ-
ների Քվորումի Նախագահի
խոսքերով ընկել էր սատա-
նայի գայթակղության մեջ
«սխալ օգտագործելով [իր]



բարոյական ազատ կամքը»¹

Ճշմարիտ ազատությունը ինչպես *Երիտասարդներին Ձորացնելու համար* գրքով կոմ է ուսուցանվում, գալիս է, երբ մենք օգտագործում ենք մեր ազատ կամքը՝ ընտրելով հնազանդությունը: Ազատության կորուստը, ինչպես Դաննին իմացավ, գալիս է անհնազանդությունն ընտրելուց:

«Չնայած դուք ազատ եք ընտրել ձեր գործողությունների ուղղությունը, դուք ազատ չեք ընտրելու հետևանքները: Լինի բարու թե չարի համար, հետևանքները հետևում են, որպես բնական արդյունք այն ընտրությունների, որոնք դուք եք կատարում»:²

Գործակալներ մեզ համար

Քանի որ սուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք «ազատ ենք ընտրելու», «ազատ ենք գործելու» և ազատ ենք անելու բաներ «մեր» սեփական ազատ կամքով (2 Նեփի 2.27, 10.23, Վեդ 58.27, Հեղաման 14.30), մենք հաճախ ենք օգտագործում «ազատ կամք» արտահայտությունը:

Բայց դուք գիտե՞ի՞ք, որ «ազատ կամք» արտահայտությունը չի հայտնվում սուրբ գրություններում: Փոխարենը սուրբ գրություններն ուսուցանում են «որ ամեն մարդ կարողանա գործել վարդապետությամբ և սկզբունքով . . . համաձայն *բարոյական կամքի ազատության*, որը տվել էմ նրան, որպեսզի ամեն մարդ պատասխան տա իր իսկ մեղքերի համար» (Վեդ 101.78, շեշտադրումն ավելացված է):

Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոնը Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է. «*Ազատ կամք* բառակապակցությունը հայտնվում է [սուրբ գրություններում] կամ ինքնուրույն կամ էլ *բարոյական որոշիչով*: . . . Երբ մենք օգտագործում ենք *բարոյական կամքի ազատություն* արտահայտությունը, մենք համապատասխանաբար շեշտադրում

ենք պատասխանատվությունը, որն ազատ կամքի աստվածային պարզի հիմնական մասն է կազմում: Մենք բարոյական էականներ ենք և ինքնուրույն գործակալներ մեզ համար, ազատորեն ընտրելու, բայց նաև պատասխանատու՝ մեր ընտրությունների համար»:³

Նախագահ Փաքերն ավելացնում է. «Ազատ կամքը սահմանվում է սուրբ գրություններում որպես «բարոյական ազատ կամք, որը նշանակում է, որ մենք կարող ենք ընտրել բարու և չարի միջև»:⁴ Այս Աստվածատուր պարզեր նշանակում է մենք «ազատ ենք ընտրելու ազատություն և հավերժական կյանք, բոլոր մարդկանց մեծ Միջնորդի միջոցով, կամ ընտրել գերություն և մահ, համաձայն դևի գերությանն ու զորությանը» (2 Նեփի 2.27):

Ազատ կամքի դեմ սատանայի պատերազմը

Քանի որ բարոյական ազատ կամքը կարևոր դեր է կատարում փրկության ծրագրում, սատանան ձգտում էր կործանել այն՝ նախամահկանացու աշխարհում: Նա դուրս գցվեց իր ապստամբության համար և այժմ ձգտում է «խաբել և կուրացնել մարդկանց, և գերության տանել նրանց իր կամքով» (Մովսես 4.3–4):

Սատանան ուզում է ստիպել մեզ ընտրություններ կատարել, որոնք սահմանափակում են մեր ազատությունը, տանում են վատ սովորությունների և հակումների, և թողնում մեզ անուժ՝ դիմադրելու իր գայթակղություններին: Ավետարանի գեղեցկությունը նրանում է, որ այն մեզ տեղյակ է դարձնում մեր ընտրություններին և այդ ընտրությունների հետևանքներին: Ազատ կամքի իմաստուն օգտագործումը

մեր ընտրությունները բաց է պահում և բարելավում մեր ճշտորեն ընտրելու կարողությունը:

Փրկչի օրինակը

Երբ փրկության ծրագիրը ներկայացվեց Երկնային Մեծ Խորհրդում, Փրկիչը ցույց տվեց մեզ, ինչպես ճիշտ օգտագործել մեր բարոյական ազատ կամքը: Նա ասաց. «Հայր, Քո կամքը կատարվի, և փառքը քոնր լինի հավիտյան» (Մովսես 4.2): Քանի որ Նա հոժար էր կատարել Հոր կամքը այդ ժամանակ և հետագայում՝ Գեթսեմանի Պարտեզում և խաչվրա (տես Մատթեոս ԻԶ.39, Դուկաս ԻԲ.42), Հիսուսը վճարեց գինը մեր վատ ընտրությունների համար և մի ուղի ապահովեց մեզ համար՝ ներվելու ապաշխարության միջոցով:

Եթե մենք հետևենք Փրկչի օրինակին, փոխարենը ասելու՝ «Ես անում եմ այն, ինչ ուզում եմ», մենք կհայտարարենք. «Ես անում եմ այն, ինչ Հայրն է կամենում»:⁵ Օգտագործելով մեր բարոյական ազատ կամքը՝ այս ուղին կբերի մեզ ազատություն և երջանկություն:

Երբ ես գնացի տեսնելու իմ եպիսկոպոսին, իմ առաջին միսիոներական հարցազրույցի համար, ես երախտապարտ էի, որ կատարել էի ճիշտ ընտրություններ: Մի քանի ամիս անց ես ծառայում էի Տիրոջը Գվատեմալայում՝ ուրիշներին ուսուցանելով փրկության ծրագիրը և այն կենսական դերը, որ բարոյական ազատ կամքն է խաղում այդ ծրագրում: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Բոյդ Բ. Փաքեր, «Այս բաները ես գիտեմ», *Լիսինուս*, մայիս 2013, 8:
2. *Երիտասարդներին Ձորացնելու համար* (2011), 2:
3. Դ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Բարոյական ազատ կամք», *Ensign*, հունիս 2009, 47:
4. Բոյդ Բ. Փաքեր, «Այս բաները ես գիտեմ», 8:
5. Տես Վոլֆգանգ Հ. Փոլ, «Ազատ կամքի պարզեր» *Լիսինուս*, մայիս 2006, 35:



«Ես փորձում եմ վերահսկել իմ մտքերը, բայց այնքան շատ գայթակղություններ կան: Ինչպե՞ս կարող եմ ավելի մաքուր մտքեր ունենալ»:

Չեր մտքերը վերահսկելը դժվար է, բայց դա հնարավոր է և բերում է օրհնություններ. «Երբ դուք սովորում եք վերահսկել ձեր մտքերը, դուք կարող եք հաղթահարել սովորությունները, նույնիսկ այլասերող անձնական սովորություններ: Դուք կարող եք ձեռք բերել քաջություն, հաղթահարել վախը և ունենալ երջանիկ կյանք»:¹

Մտածեք նաև այս օրհնությունների մասին.

- Մաքուր մտքերը կօգնեն՝ քո «վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ» և «Մուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը» (Վևմ 121.45–46):
- Մաքուր մտքերը կօգնեն ձեզ ճանաչել ոգեշնչումը, որով հետև Մուրբ Հոգին խոսում է քո սրտի և մտքի հետ (տես Վևմ 8.2–3):
- Մաքուր մտքերը կօգնեն ձեզ հնազանդվել առաջին մեծ պատվիրանին՝ սիրել Աստծուն ողջ ձեր սրտով, հոգով և *մտքով* (տես Մատթեոս ԻԲ.37):

Կան շատ բաներ, որոնք դուք կարող եք անել՝ ավելի մաքուր մտքեր ունենալու համար, ինչպես դուք կտեսնեք այս էջերի գաղափարներից: Բայց հիմնական բաներից մեկը, որ դուք կարող եք անել և դա աստիճանական գործընթաց է՝ «բնական մարդուն» հաղթահարելն է: Բնական տղամարդը կամ կինը սիրում է անմաքուր մտքեր: Միայն ինչպես հաղթահարել այն. «Բնական մարդն Աստծո մի թշնամի է, և . . . կլինի հավիտյանս հավիտենից, մինչև նա չենթարկվի Մուրբ Հոգու հորդորներին և հանի բնական մարդուն ու դառնա սուրբ, Տեր Քրիստոսի Քավությանը, և դառնա ինչպես մի երեխա՝ ենթարկվող, հեզ, խոնարհ, համբերատար, սիրով լի» (Մոսիա 3.19):

Ո՞րն է այն բաներից մեկը, որ դուք կարող եք անել այսօր՝ հրավիրելու Փրկչի Քավությունը, այս փոփոխությունը ձեր կյանքում առաջ բերելու համար:

ՀՂՈՒՄ

1. Բոյդ Բ. Փաքեր, «Արժանավոր երաժշտություն, արժանավոր մտքեր» *Լիսինա*, ապր. 2008, 31:



Զանգվածային լրատվամիջոցներ և ընկերներ

Լավ սկզբնակետ է վեհացնող կինոֆիլմեր, երաժշտություն և

գրականություն ընտրելը: Ընտրեք ընկերներ, որոնց ընկերակցությամբ դուք կարող եք պահպանել արժանավոր գրույցներ և արդարակյաց գործողություններ: Քանի որ դուք ունեք մտածելու շատ ավելի լավ բաներ, դուք աստիճանաբար ավելի հեշտ կգտնեք վատ մտքերը թողնելը և դրանք ավելի քիչ հաճախականությամբ կզան:

Ամբեր Ս., 18 տարեկան, Բրիտանական Կոլումբիա, Կանադա

Աղոթք

Աղոթքը ինձ մոտեցնում է մեր Երկնային Հորը և օգնում ինձ կենտրոնանալ լավ մտքերի վրա: Ամենօրյա սուրբ գրությունների ուսումնասիրությունը գորացնում է իմ վստահությունը գայթակղությունները հաղթահարելիս, սուրբ գրություններում ես տեսնում եմ Քրիստոսի հավատարիմ աշակերտների օրինակներ: Վկայություն բերելը նույնպես օգնում է ինձ մտքերս մաքուր պահել:

Դաշա Մ., 17 տարեկան, Կիեվ, Ուկրաինա



Սուրբ գրություններ

Ամեն առավոտ սուրբ գրությունները կարդալն օգնում է: Հենց որ ես մի վատ միտք եմ ունենում, ես անմիջապես այն փոխարինում եմ ինչ

որ մի ավելի լավ բանով: Փոխարենը ուղղակի ասելու. «Ոչ, դա մի մտածիր» (որն անելը լավ բան է), փոխարինիր այն լավ մտքով: Հիշեք, դուք եք վերահսկում ձեր միտքը, ոչ թե սաստանան: Մենք Երկնային Հոր քաջարի որդիներն ու դուստրերն

ենք և գտնվում ենք անընդհատ մեզ բարելավելու միսիայում:

Նիք Կ., 16 տարեկան, Արկանզաս, ԱՄՆ



Լա՞վ, թե՞ ճիշտ:

Դուք միշտ չեք կարող վերահսկել, երբ որևէ միտք է գալիս, բայց դուք կարող եք վերահսկել, թե ինչ է այն ասում: Դուք կարող եք հարցնել. Արդյոք այս միտքը ինձ կտա՞ ինչ որ մի լավ բան: Արդյոք այն կօգնի՞ ինձ գնալ ճիշտ ուղղությամբ: Երբ ինչ որ մի գայթակղիչ միտք է հայտնվում, երգեք մի լավ երգ, մտածեք մի սիրելի հիշողության մասին կամ աղոթեք: Այդ բոլորը փոխարինում են վատ մտքերը ինչ որ մի լավ բանով:

Լիզա Փ., 17 տարեկան, Դանիա



Լեքիի օրինակը

1 Նեփի 15.27 հատվածում Նեփին պատմում է իր եղբայրներին և քույրերին, որ իրենց հայրը կենաց ծառի իր տեսիլքում շրջապատված էր աղտոտությամբ: Բայց Լեքին չէր նկատում աղտոտությունը, որովհետև «նրա միտքը կլանված [էր] ուրիշ բաներով»: Դա շարունակում է ճշմարիտ լինել մեզ համար այսօր: Եթե մենք կամենում ենք լցվել արդարակեցությամբ և առաքինությամբ, աղոթեք դրա համար և կենտրոնացեք արդար բաների վրա, ապա մեր մտքերն այնքան լցված կլինեն արդարակեցությամբ և առաքինությամբ, որ անմաքուր մտքերը ուժ չեն ունենա մնալու:

Հեթթի Վ., 16 տարեկան, Արիզոնա, ԱՄՆ

Օրհներգեր

Հիմները կարող են օգնել մեզ ունենալ ավելի մաքուր մտքեր: Լավ

երաժշտությունը բարձրացնում է ոգին: Երբ ես կարողանում եմ լսել օրհներգեր, դրանք բարձրացնում են ինձ ավելի հանգիստ և սելեստիալ ոլորտ: Դրանք օգնում են ինձ հիշել Երկնային Հոր սերը, որը Նա ունի մեզանից յուրաքանչյուրիս համար, և ավելի հեշտ է դառնում խուսափել գայթակղությունից:

Ամանդա Ա., 18 տարեկան, Անագոնաս, Բրազիլիա

Ընտանեկան սուրբ գրությունների ուսումնասիրություն

Երբ անմաքուր մտքեր են գալիս իմ միտքը, ես փորձում եմ հիշել սուրբ գրությունները, որոնք իմ ընտանիքը և ես կարդում էինք առավոտյան: Ամեն առավոտյան ժամը 6:00 իմ ընտանիքը կարդում է սուրբ գրությունները միասին: Դա վաղ է, բայց դա օրհնություն է և ինձ օգնում է ավելի ուժեղ զգալ օրվա ընթացքում:

Էլենա Վ., 16 տարեկան, Օվեյգարիա



Հաղորդություն

Հաղորդության աղոթքը նշում է, որ եթե մենք վերցնենք մեզ վրա Քրիստոսի անունը, պահենք Նրա պատվիրանները և միշտ հիշենք



ԱՏԱԾԵՔ ԱՅՍ ԲԱՆԵՐԸ

«Մահկանացու կյանքի այս երբեմն թանկարժեք ճանապարհորդության ընթացքում,

թող որ մենք Նույնպես հետևենք Պողոս Առաքյալի այդ խորհրդին, որը կօգնի պահել մեզ ապահով և հունի մեջ. «Այսուհետև, եղբարք, ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ սուրբ, ինչ որ սիրուն, ինչ որ բարի անուն, թե առաքինության է, եւ թե գովութիւն է, այն մտածեցեք» [Փիլիպպեցիս Դ.8]:

Նախագահ Թոմաս Ա. Մոնտն «Ետ նայելով և շարժվելով առաջ», Լիսինաս, մայիս 2008, 90:

Նրան, մենք միշտ կունենանք Նրա Հոգին մեզ հետ: Նրան հիշելով, մենք ջանք ենք գործադրում դուրս մղել երկրային մտքերը և կենտրոնանալ հավերժական մտքերի վրա: Երբ մենք հիշում ենք Նրան հետևողականորեն, մեր մտքերը, ցանկությունները և գործողությունները փոխվում են դեպի ավելի լավ:

ՄակՔեյ Մ., 18 տարեկան, Յուտա, ԱՄՆ

ՀԱՋՈՐԴ ՀԱՐՑԸ

«Երբ մայրս հիվանդ էր, մենք ծոմ պահեցինք և աղոթեցինք նրա համար, բայց նա միևնույն է մահացավ: Ինչպե՞ս կարող եմ խաղաղություն ունենալ դրա հետ»:

Չեր պատասխանը և, ցանկության դեպքում, բարձրորակ լուսանկարը ներկայացրեք մինչև նոյեմբերի 15, 2014, iaahona.lds.org -ում (սեղմեք "Submit Your Work"), է-փոստով iaahona@ldschurch.org-ում, կամ փոստով (տես հասցեն էջ 3-ում):

Հետևյալ տեղեկությունը և թույլտվությունը պետք է ներառված լինի ձեր է-փոստի կամ նամակի մեջ. (1) լրիվ անունը, (2) ծննդյան թիվը, (3) ծովի լամ ճյուղը, (4) ցիցը կամ շրջանը, (5) ձեր գրավոր թույլտվությունը և, եթե դուք 18 տարեկանից ցածր եք, ձեր ծնողի գրավոր թույլտվությունը (է-փոստն ընդունելի է) ձեր պատասխանը և լուսանկարը տպագրելու համար:

Պատասխանները կարող են խմբագրվել չափսերի կամ հստակության համար:



**ԿՐԱԿՆՈՐՅԱՆ
ԴԱՍԵՐ**

...Այս ամսվա թեման է՝
**Դառնալ ավելի
քրիստոսանման**

Ինչպե՞ս հարցեր տալ, որոնք կարևոր են

*Ճիշտ հարցեր տալը կարող է օգնել բացել մարդկանց
սրտերը ճշմարտության վկայության առջև:*

Դեյվիդ Ա. Էդվարդս
Եկեղեցու ամսագրեր

Դուք հնարավորություն ունեք ուսուցանել բոլոր ձեր շրջապատում գտնվողներին, լինի դա մեկ թոպեանոց գրույցի, եկեղեցու դասի ընթացքում, առցանց մեկնաբանություններում, թե ընկերոջ հետ խորը դեմ առ դեմ որևէ քննարկման ժամանակ:

Այսպիսով, ահա մի առաջարկ որևէ իրավիճակում արդյունավետ ուսուցման համար:

Լավ հարցերը տանում են դեպի լավ ուսուցման և բարեբախտաբար, լավ հարցեր ուղղելը մի բան է, որը դուք կարող եք ուսումնասիրել, գործածել և սովորել լավ անել: Ահա թե ինչպես:

Ուղղե՛ք հարցեր, որոնք կարևոր են

Հարցերը, որոնք կարևոր են, այն հարցերն են, որոնք ստիպում են ձեզ մտածել և խորապես զգալ, նրանք, որոնք տանում են ձեզ դեպի ճշմարտություն, վկայություն և փոփոխություն: Դրանք կարող են ընդգրկել մեծ ծավալով թեմաներ, բայց դրանք սովորաբար ունենում են մի քանի ընդհանուր բաներ.

(1) Դրանք սնոտիական չեն կամ պարզապես փաստացի (չնայած դրանք կարող են լինել փաստացի հարցերի հետևանքով), (2) դրանք որոշ կապ ունեն մեր ամենօրյա կյանքի հետ և (3) դրանք մեզ մարտահրավեր են նետում տալու ավելին, քան ուղղակի նախաձրագրավորված պատասխանը:

Հիշե՛ք, թե ինչու եք հարցեր տալիս

Հարցերը զբաղեցնում են մեզ՝ ներկայացնելով մի ճեղքվածք, որը մեր միտքն այդ պահին ուզում է լցնել: Առանձնապես, հարցեր ուղղելը, որոնք հուշում են անհատական մտածողություն, կարող է թույլ տալ տեղի ունենալու հետևյալ գործընթացը.

1. Մարդիկ կարող են հետաքրքրվել նրանով, ինչ դուք ասում եք:
2. Նրանք օգտագործում են մտածելու իրենց ազատ կամքը և արտահայտելու մի պատասխան:
3. Ազատ կամքի օգտագործումը թույլ է տալիս Մուրբ Հոգուն վկայելու նրանց՝ ճշմարտության մասին:¹

Մտքում ունենալով այս գործընթացը, դուք կստանաք զգացում, թե որ տեսակի հարցերին պատասխանել և որոնցից խուսափել:

Օրինակ. Փոխարենը ուղղակի հարցնելու. «Ինչո՞ւ է սուրբ գրությունները կարդալը կարևոր», դուք կարող եք հարցնել. «Ինչպե՞ս է սուրբ գրությունները կարդալը տարբերություն մտցրել ձեր կյանքում»:

Հիշե՛ք, որ դուք մարդկանց ուսուցանում եք, ոչ թե միայն դասեր

Եթե դուք գիտեք մարդկանց, ում դուք ուսուցանում եք և մտածում նրանց կարիքների մասին, դուք կրնա՞րեք հարցեր, որոնք ուղղված են նրանց օգնելուն, ոչ թե ուղղակի ընթացքում ստանալու որոշակի գաղափարներ:

Օրինակ. Փոխարենը ուղղակի հարցնելու. «Որո՞նք են ապաշխարության պրոցեսի քայլերը», դուք կարող եք հարցնել. «Ինչպե՞ս եք ճիշտ դարձնում այն բաները, երբ դուք իմանում եք, որ ինչ որ բան սխալ եք արել»:

Ուսումնասիրե՛ք և խորապես մտածե՛ք

Ավետարանն ուսուցանելու համար, ուսումնասիրեք սուրբ գրությունները և ժամանակակից մարգարեների և առաքյալների ուսմունքները և աղոթեք, որպեսզի Մուրբ Հոգին կարողանա լինի ձեզ հետ և նրանց հետ, ում դուք ուսուցանում եք (տես Վեճ 42.14, 50.21–22):

Նաև, եթե դուք կամենում եք մարդկանց հարցեր ուղղել, որոնք նրանց ստիպում են մտածել, դուք պետք է անեք այդ նույն մտորումը ինքներդ: Խորհե՛ք այն մասին, ինչ ուսումնասիրում եք: Դուք կպարզեք, որ ձեզ ամենախորը մտածել են տալիս այն հարցերը, որոնք դուք հարցնում եք ինքներդ ձեզ այդ ընթացքում: Ուշադրություն դարձրե՛ք այն հարցերի վրա, որոնք ձեզ ստիպում են խկապես մտածել: Սրանք այն հարցերն են, որոնք տանում են ավելի մեծ ներքմբռնման և վկայության, նույն տիպի հարցեր դուք կարող եք հարցնել, երբ դուք օգնում եք ուրիշներին սովորելու ավետարանի մասին:

Օրինակ. Փոխարենը հարցնելու. «Ինչպե՞ս ենք ձեռք բերում գթություն», դուք կարող եք հարցնել, «Ի՞նչ եք կարծում, Մորոնի 7.48 հատվածում, երբ այն ասում է աղոթե՛ք գթության համար «ձեր սրտի ողջ կորովով»:



Հնչտացրեք ավելի խորը հարցերը

Երբեմն լավագույնը հեշտացնելն է դեպի հարցեր, որոնք պահանջում են ավելի շատ միտք և մտորում, այնպես որ դուք պետք է տաք ներածական հարց, որը հեշտ է պատասխանել, իսկ այնուհետև հետևել մեկ կամ ավելի շատ հարցերով, որոնք տանում են ավելի խելամիտ պատասխանների: Միա մի քանի պարզ օրինակներ.

Ներածական հարց	Հետևող հարց
Քանի՞ տարեկան էր Ջոզեֆ Սմիթը, երբ նա գնաց սրբազան պուրակ:	Երբ եք դուք աղոթել Երկնային Հորը այնպիսի անկեղծ ցանկությամբ, ինչպիսին Ջոզեֆն ուներ:
Դուք հավատո՞ւմ եք Աստծուն:	Ի՞նչ դեր է խաղում Աստված ձեր կյանքում:
Ի՞նչ եք արել դուք վերջերս ուրիշներին ծառայելու համար:	Ինչպե՞ս է իմանալը, որ մենք բոլորս Աստծո զավակներն ենք, փոխում ձեր մտածելակերպը ծառայության վերաբերյալ:

Եթե դուք ձգտում եք ունենալ Սուրբ Հոգու առաջնորդությունը, երբ հարցեր եք տալիս, դուք ավելի հավանական է, որ հարցնեք ճիշտ հարցը ճիշտ ժամանակին: Դուք երբեք չգիտեք: Այն կարող է փոխել ինչ որ մեկի կյանքը: ■

ՀՂՈՒՄ

1. «Դուք պետք է գործադրեք ձեր ազատ կամքը լիազորելու Հոգուն ուսուցանել ձեզ» (Ռիչարդ Գ. Սքոթ, «Ձեռք բերել հոգևոր առաջնորդություն» *Leahman*, նոյ. 2009, 8):

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀԱՐՑԵՐ ՈՒՂԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Սպասեք պատասխաններին:
- Օգտագործեք հետևողական հարցեր՝ բռնկելու ավելի խորը մտածողություն:
- Խուսափեք հարցերից, որոնք ստեղծում են հակադրություն կամ խրախուսում վիճաբանություն:
- Հաճախակի ուղղեք հարցեր, որոնք առաջացնում են լուռ խորհրդածություն:

Ավելի շատ առաջարկների համար, տես *Ուսուցում, չկա ավելի մեծ կոչում*: Ռեսուրսային Ուղեցույց Ավետարանի ուսուցման համար (1999), 69–70:

ՄԻԱՑԵՔ ԶՐՈՒՅՑԻՆ

Ինչի՞ մասին պետք է խորհել կիրակի օրը

- Որևէ մեկը երբևէ ուղղե՞լ է ձեզ հարց, որը ձեզ ստիպել է իմանալ ավետարանի մասին ավելի շատ բան կամ ինչ որ ձևով փոխել է ձեր կյանքը:
- Ինչպե՞ս էր Փրկիչը օգտագործում հարցեր, երբ Նա ուսուցանում էր:

Ի՞նչ կարող ես դու անել:

- Երբ ուսումնասիրեք սուրբ գրություններն այս շաբաթ, գրի առեք ձեր մտածած հարցերի մի ցուցակ:
- Եկեղեցում որպես դասարանային քննարկման մաս հարց ուղղեք:



**Երեց
Ջենֆրի Ռ. Հովանյան**
Տասներկու
Առաքյալների
Զվորումից

ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ՈՒԺ ԵՎ ՀԱԶՈՂՈՒ- ԹՅՈՒՆ

Ձեզանից ոմանք գիտեն, թե ինչ են ուզում լինել և ուր են ուզում գնալ իրենց կյանքում, իսկ ոմանք չգիտեն: Ձեզանից ոմանք թվում է ունեն այնքան շատ օրհնություններ և այնքան շատ սքանչելի ընտրություններ իրենց առջև: Ձեզանից մյուսները զգում են որոշ ժամանակով և ինչ որ պատճառով ավելի քիչ բախտավոր և ավելի քիչ գրավիչ ուղիներով, որոնք անմիջապես հայտնվում են առջևում:

Բայց ով էլ դուք լինեք և որտեղ էլ որ դուք գտնվեք, երբ որոնում եք կյանքում ձեր ուղին, ես առաջարկում եմ ձեզ «ուղին, ճշմարտությունը և կյանքը» (Հովհաննես ԺԴ.6): Ուր որ էլ որ գնաք, ես խնդրում եմ «**եկեք դնալի Նա**» (տես Մատթեոս ԺԱ.28–30) որպես հրամայական առաջին քայլ այնտեղ հասնելու համար՝ գտնելով ձեր անձնական երջանկությունը և ուժն ու հաջողությունը:

Երբ Անդրեասը և Փիլիպպոսը առաջին անգամ լսեցին Քրիստոսին խոսելիս, նրանք այնքան հուզված էին այնքան ցնցված, որ նրանք **հետևեցին Նրան**, երբ նա հեռացավ ամբոխից: Հասկանալով, որ Իրեն հետևում էին, Քրիստոսը շրջվեց և հարցրեց այդ երկու տղամարդկանց. «Ի՞նչ եք որոնում» Հովհաննես Ա.38: Այլ թարգմանություններ մեկնաբանում են դա պարզորեն. «Ի՞նչ եք ուզում»:

Նրանք պատասխանեցին. «Ո՞րտեղ ես կենում» կամ «Որտե՞ղ ես ապրում»:

Եվ Քրիստոսն ասաց. «**Եկ նւ տես**»: Մի փոքր ժամանակ անց Նա պաշտոնապես կանչեց Պետրոսին և նոր առաքյալներից մյուսներին հրավերի նույն ոգով. «**Իմ նստե՛ից եկ**» (տես Մատթեոս Դ.19):

Ինձ թվում է, որ մեր կյանքի էությունը գտնվում է մինչև Փրկչի մահկանացու ծառայությունը բացող այս տեսարաններում այս երկու համառոտ հիմունքները: Մեկ հիմունքը մեզանից ամեն մեկին ուղղված հարցն է. «Ի՞նչ եք որոնում: Ի՞նչ եք ուզում»: Երկրորդը՝ Նրա պատասխանն է, թե ինչպես այն ստանալ: Ովքեր էլ որ մենք լինենք, և ինչպիսին էլ որ լինեն մեր խնդիրները, Նրա պատասխանը միշտ նույնն է հավերժ՝ **«Եկեք ինձ մոտ»**: Եկեք տեսեք, թե ինչ եմ անում և ինչպես եմ անցկացնում իմ ժամանակը: **Ինձանից սովորեք**, ինձ հետևեք, և ընթացքում ես կտամ պատասխաններ ձեր աղոթքներին և հանգիստ ձեր հոգիներին:

Իմ սիրելի երիտասարդ ընկերներ, ես չգիտեմ որևէ այլ ուղի ձեզ համար հաջողություն ունենալու կամ երջանիկ լինելու կամ ապահով լինելու համար: Ես չգիտեմ ձեր բեռները տանելու կամ որևէ այլ ուղի ձեզ համար գտնելու այն, ինչ Հակոբը կոչեց «այն երջանկությունը, որը պատրաստված էր սրբերի

համար» (2 Նեփի 9.43): Այդ պատճառով մենք **կատարում ենք հանդիսավոր ուխտեր**, որոնք հիմնված են Քրիստոսի քավող զոհաբերության վրա և այդ պատճառով մենք **վերցնում ենք մեզ վրա Նրա անունը**:

Հիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստծո Որդին: Սա նրա ճշմարիտ և կենդանի Եկեղեցին է: Նա կամենում է, որ մենք զանք դնալի Նա, Նրան հետևելու, **մխիթարվելու Նրա կողմից**: Ապա Նա կամենում է, որ մենք **մխիթարություն տանք ուրիշներին**: Թող որ մենք բավականաչափ հավատք ունենանք **ընդունելու Աստծո բարությունը** և Նրա Միածին Որդու ողորմածությունը: Թող որ մենք զանք դնալի Նա և Նրա ավետարանը և բժշկվենք: ■

Բրիգամ Յանգի Հասարակարանի հավաքույթից, որը տեղի է ունեցել 1997թ. մարտի 2-ին:

ԻՆՉՊԵՍ ԵՔ ԴՈՒՑ ԿԻՐԱՌԵԼ ՍԱ:

«Հիսուս Քրիստոսը կամենում է, որ մենք հետևենք Նրան: Մենք պետք է օգնենք մյուսներին և չմոռանանք, որ Նա երբեք, երբևէ չի մոռանա մեզ»:

Մեսիյա Ի., Ֆիլիպպիներ

«Դեպի Փրկիչը գալու համար, մենք պետք է ապրենք այնքան լավ, որքան կարող ենք, Նրա օրհնակով և թույլ տանք Նրան անընդհատ մեզ հետ լինել օրվա ամեն մի պահի»:

Ալլիսոն Լ., Արիզոնա, ՄՄՆ



—ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ—

ԵՍ ԱՆՈՒՄ ԵՄ ԴԱ:

Սկսելը կարող է հեշտ լինի և զվարճալի: Ողջ աշխարհում նրիտասարդությունը կատարում է ընտանեկան պատմություն և հաջողության հասնում:

Որտեղի՞ց սկսել: Գուցե դուք մտածում եք, որ ձեր ազգականներն արդեն արել են ողջ աշխատանքը, ինչ պետք է արվեր: Կամ միգուցե դուք նոր եք ընտանեկան պատմության համար և դա ձեզ թվում է ճնշող: Դուք դա սկսում եք՝ պահելով անձնական օրագիր, պատրաստելով անուններ տաճարի համար, կամ սովորելով ձեր կենդանի ազգականներից, *դուք* կարող եք մասնակցել ընտանեկան պատմությանը ուրախությամբ և իմաստալի ուղիներով:

Անձնական օրագիր պահելը՝ մեր օրհնությունները հիշելը

Օրագիր պահելը հեշտ գործ չէ: Մենք հաճախ ենք ասում, որ խիստ զբաղված ենք կամ խիստ հոգնած և որ մեր կյանքը բավականաչափ հետաքրքիր չէ գրի առնելու համար: Ես մի քանի տարի առաջ հասկացա, որ օրագիր պահելը դժվար չէր և ես կարող էի աճելով այն սկսելի սիրել:

Ես սկսեցի օրեկան գրելով մի բան: Դա նշանակություն չունեց, թե այն իսկապես երկար էր և հետաքրքրական, ես ուղղակի գրում էի ինչ իմ մտքում կար կամ ինչ որ պատահել էր այդ օրը: Դա արդեն օրհնել է իմ կյանքը:

Մի օր ինչ որ մեկն իմ ընտանիքում մաքառումների մեջ էր և չգիտեի, թե ինչ ասելի նրան, բայց այդ ժամանակ ինձ հուշվեց կարդալ նրա համար իմ օրագրից մի հատված: Ես կարողացա կիսվել իմ կողմից մի փոքրիկ մասով, որը ես գրի էի առել այդ փոքրիկ սև կազմով օրագրում և ես տեսա, թե ինչպես այն օգնեց լուսավորել նրա սիրտը:

Ես երաշխավորում եմ, որ եթե դուք սկսեք գրել օրը մեկ բան, դա կօրհնի ձեր կյանքը: Նշանակություն չունի, թե որքան փոքր է կամ որքան մեծ, ձեր կյանքում օրհնությունները գրի առնելը, կօգնի ձեզ հիշել դրանք:

Գևորգի Վ., Յոսուս, ԱՄՆ

Ուրախություն գտնելով Ընտանեկան պատմության աշխատանքում՝ նախնիներ որոնելը

Երբ ես մկրտվեցի, ես շատ բան լսեցի ընտանեկան պատմության մասին, բայց ես չգիտեի ինչպես անել այն կամ արդյոք կկարողանայի: Ես որոշեցի աղոթել դրա վերաբերյալ և ես զգացի, որ պետք է սկսեի աշխատել դրա վրա հենց այժմ: Ես զգում էի, որ իմ նախնիները անհանգստանում էին ինձ համար, որ ես սկսեի և որ նրանք կօգնեին ինձ գտնել անհրաժեշտ տեղեկությունները՝ արարողությունները կատարելու համար:

Ես սկսեցի ընտանեկան պատմության դասընթաց անցնելով և մի կարճ ժամանակ անց, ես կանչվեցի ընտանեկան պատմության խորհրդատու: Ես հուզված էի, որովհետև շատ բան չգիտեի այդ մասին, բայց ես ընդունեցի կոչումը:

Մի օր ես այցելեցի տատիկիս քրոջը, ով ուներ փաստաթղթեր իմ մեծ տատիկի վերաբերյալ: Նա չէր ուզում կիսվել շատ տեղեկություններով, որովհետև նրանք ավանդույթ ունեին չխոսել մահացած բարեկամների մասին: Նա ասաց, որ հաջորդ օրը մեծ տատիկիս մահվան տարեդարձն էր և նա պատրաստվում էր այրել փաստաթղթերը: Ես հարցրեցի, թե կարող էի առաջինը տեղեկություններ վերցնել դրանցից և նա ինձ թույլ տվեց: Այդ ժամանակ ես իմացա, որ Երկնային Հայրը կօգնե ինձ շարունակել իմ հետազոտությունը:

Երբ ես ծառայում էի տաճարի մոտ գտնվող ընտանեկան պատմության կենտրոնում, ես շարունակում էի հայտնաբերել ավելի շատ բան իմ ընտանիքի մասին: Ես իմացա որ իմ երկու մեծ տատիկների տատիկն ու պապիկը իտալացի էմիգրանտներ էին, ովքեր ազգաբնակիչներն էին Ման Պաուլոյում, Բրազիլիա: Իմ ընտանիքը կորցրել էր կապը ազգաբնակիչ ազգականների հետ, բայց ես գտա մի զարմիկի, ով գիրք էր գրում մեր ընտանիքի ծագումնաբանության մասին: Նա տվեց ինձ գիրքը, որի գրելը նրանից խլել էր ինը տարի: Նա ասաց, որ չգիտեր, թե ինչու պետք է գրեր այն, բայց զգում էր, որ այն օգնելու էր ինչ որ մեկին ապագայում: Ես գիտեի, որ դա Եղիայի հոգին էր ոգեշնչել նրան:

Իմ փորձառություններն ինձ ուսուցանեցին, որ մենք կատարում ենք սրբազան աշխատանք: Մեր նախնիները սպասում են մեր օգնությանը և մեր կողքին են՝ օգնելու մեզ:

Փաբլիել Դ., Բրազիլիա



Տաճարային աշխատանք կատարելը՝ Սրբազան արարողություններ

Ես նորադարձ եմ և Եկեղեցու միակ անդամը իմ ընտանիքում: Ես իմացա, որ սրբազան արարողություններից մեկը մահացածների համար մկրտությունն է: Ես գնացի տաճարային ուղևորության, և երբ լսում էի բազմությանը արարողությունների մասին խոսելիս, ես զգացի մի փոքրիկ հանդարտ ձայն, որն ինձ ասաց, որ ես գնամ ընտանեկան պատմության կենտրոն ներկայացնելու տաճարային արարողության խնդրագիր մայրիկիս համար, որը մահացել էր: Ես այնքան երջանիկ էի, երբ FamilySearch-ի հաշվետվությունը հետազայում հաստատեց, որ նրա տաճարային աշխատանքը կատարված էր: Դա զորացրեց իմ վկայությունը և ես գիտեմ, որ պատճառներից մեկը, թե ինչու ենք մենք այստեղ այս երկրի վրա օգնելն է մեր նախնիներին ստանալ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ավետարանը:

Մադոլին Ս., Ֆիլիպիններ

Հետևելով հուշումին՝ իմանալով կենդանի ազգականներից

Ավագ դպրոցն ավարտելուց հետո, ես տպավորված զգացի այցելել բոլոր իմ չորս տատիկ պապիկներին: Ես որոշ ազատ ժամանակ ունեի և ես հասկացա, որ ես կրկին չեի ունենա այս հնարավորությունը, այնպես որ ես անցկացրեցի մեկ շաբաթ իմ տատիկ, պապիկների յուրաքանչյուր զույգի հետ:

Ես ժամանակա անցկացնում էի քայլելով հին արկղերի միջով, կարդալով հին նամակներ, և





ՄԱՍՆԱԿՑԵԼ ԻՆՉ ՈՐ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՄԻ ԲԱՆԻ

«Դուք կարողացել եք ձեր իսկ նախնիների աշխատանքի մասին: Մի կողմ դրեք այն բաները ձեր կյանքում, որոնք իսկապես նշանակություն չունեն: Որոշեք անել որոշ բաներ, որոնք կունենան հավերժական հետևանքներ: . . .

Որտեղ էլ որ լինեք աշխարհում, աղոթքով, վճռականությամբ, ջանասիրությամբ և որոշ զոհաբերությամբ, դուք կարող եք կատարել հզոր ներդրում: Սկսեք այժմ: Ես խոստանում եմ, որ Տերը կօգնի ձեզ գտնել ուղին: Եվ դա կստիպի ձեզ սքանչելի զգալ:

Երեք Ռիչարդ Գ. Սթոք՝ Տասներկու Առաքյալների Զվարճիչ. «Մահացածների փրկագնելու ուրախությունը» *Liahona*, նոյ. 2012, 95:

նայելով հին նկարներ: Ես գրի առա իմ տատիկ, պապիկների կյանքի պատմությունները, քայլեցինք գերեզմանատներով և այցելեցինք, որտեղ որ իմ տատերն ու պապերն ու նրանց ազգականներն էին ապրել և աշխատել: Դա զվարճալի էր: Այնքան շատ բան իմացա իմ նախնիների, տատիկ, պապիկների, իմ ծնողների և իմ մասին: Ես հասկացա, որ ես չէի ունենա այն կյանքը, որ ես ունեմ, եթե դա չլիներ իմ նախնիները:

Իմ ուղևորությունից հետո ես վերադարձա իմ նախնիների մոտ 1 000 անուններով և կարողացա անել տաճարային աշխատանք նրանցից շատերի համար: Հետևելով Սուրբ Հոգու հուշումներին և իմ տատիկ, պապիկներին այցելելը լավագույն որոշումներից մեկն է, որ ես երբևէ ընդունել եմ:

Շենդի Փ., Կալիֆոռնիա, ՄՄՆ

Տանը զգալը՝ անուններ տանելը տաճար

Երբ ես հայրիկիս հարցրեցի ընտանեկան պատմության գաղափարների մասին, որպեսզի լրացնեի իմ Անձնական Առաջընթացի ծրագիրը, նա բացատրեց, որ գտել էր մի քանի ընտանեկան անուններ մի քանի տարի առաջ, բայց չէր կարողացել անունները պատրաստել տաճար տանելու համար ինքնուրույն, իր ժամանակի սղության պատճառով: Իմ օգնությունը կարող էր հնարավոր դարձնել ընտանիքի այս անդամների համար ստանալ տաճարային օրհնություններ:

Հաջորդ մի քանի ամիսների ընթացքում ես անցկացրեցի կիրակի կեսօրները և երեկոները անուններ մուտքագրելով համակարգչում և իմանալով ընտանեկան պատմություններ հայրիկիցս: Մենք նույնիսկ միկրոֆիշ պատվիրեցինք ավելի շատ տեղեկություններ գտնելու համար: Երբեմն, երբ դժվար էր լինում կարդալ հին ժապավեններ, ես լուռ աղոթք էի ասում և հետո վերցնում թուղթը պատկերները զանազանելու համար: Խավարից հայտնվում էին անունները:

Ի վերջո ես հավաքեցի մի մեծ հավաքածու ընտանեկան անունների և երիտասարդությունը մեր ծխում օգնեց ավարտել մկրտությունները: Ծնողներս և ծխի մյուս անդամները հետո տանում էին անուններով քարտերը՝ կատարելու տաճարային մյուս արարողությունները:

Թվում էր ընդամենը մի կարճ ժամանակ անցավ, մինչև ես գտա ինձ նախապատրաստվելիս տաճար գնալու իմ իսկ օժտման համար: Ես հուզված էի, բայց նաև լարված:

Երբ գնում էինք տաճար, հայրս բացատրեց, որ նա գտել էր ընտանեկան անունների քարտերից մի քանիսը, որոնք ես պատրաստել էի իմ Անձնական Առաջընթացի ծրագրի համար: Մի քանիսը սխալ տեղերում էին դրվել, այսպիսով նա բերել էր քարտեր մայրիկիս, իմ նշանածի, և իր համար, որպեսզի ավարտեք: Նա կիսվեց ինձ հետ նրանց անուններով, և ես հիշում էի նրանց իմ ծրագրից:

Երբ ես սրբազան ուխտեր կապեցի տաճարում, ես շրջապատված զգացի իմ սիրելիներով վարագույրի երկու կողմից էլ: Ես զգացի խորը խաղաղություն իմանալով, որ ես կարող էի հավերժորեն միավորված լինել ընտանիքիս հետ: ■

Հուլի Փ., Արիզոնա, ՄՄՆ



ԿԻՍՎԵՔ ԶԵՐ ՓՈՐՁՈՎ

Կիսվեք ձեր ընտանեկան պատմության փորձառություններով lds.org/youth/family-history/experiences-nid:

Ձեր կանքը եղել է սերունդների պատրաստելում:
Պարզեք, թե որտեղից է սկսվում ձեր պատմությունը:
Այցելեք FamilySearch.org-ը:



Միսիայում ծառայելու համար ինձ հետ
հարցազրույց անցկացնելուց հետո, իմ ցցի
նախագահն ասաց. «Տարօրինակ բաներ կպատահեն
քո կյանքում, փորձելով ստիպել քեզ փոխել միտքը»:

ՀԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ ԻՄ ՄԻՍԻԱՅԻՆ

Ալսենկիր դե Սոուզա

Ես 15 տարեկանում միացա Եկեղեցուն և չորս տարի անց ես ներկայացրեցի իմ միսիոներական դիմումը: Իմ ցցի նախագահի հետ հարցազրույցի ժամանակ, նա ինձ հաճոյախոսեց՝ Տիրոջը որպես լիաժամկետ միսիոներ ծառայելու իմ որոշման համար: Ապա այդ ոգեշնչված առաջնորդն ասաց մի բան, որը խորը տպավորություն թողեց ինձ վրա. «Եղբայր, այս ժամանակից սկսած, տարօրինակ բաներ կկատարվեն քո կյանքում՝ փորձելով ստիպել քեզ փոխել միտքը»:



Մինչ սպասում էի իմ միսիոներական կանչին, որպես պրակտիկանտ ես վերապատրաստվում էի Xerox-ում: Այդ աշխատանքը հնարավոր դարձրեց ինձ համար ձեռք բերել որոշ բաներ, որոնց կարիքը ես կունենայի միսիոներական դաշտում և մայրիկյիս տան ծախսերում օգնելու համար: Գործերը շատ լավ էին գնում:

Դժբախտաբար «տարօրինակ բաներ» սկսեցին պատահել: Առաջինը մայրս հարձակման ենթարկվեց և իր վնասվածքներից գրեթե մահվան շեմին հայտնվեց, բայց բարի Երկնային Հայրը հրաշքով խնայեց նրա կյանքը:

Այդ ժամանակ մայրս, երկու փոքր քույրերս և ես ապրում էինք վարձով տանը: Մենք ապրում էինք իմ եկամտով և մի փոքրիկ թոշակով, որ մայրս ստանում էր տարիներ առաջ հորս մահվան պատճառով:

Որոշ մարդիկ՝ ներառյալ Եկեղեցու անդամները, հարցնում էին. «Մի՞թե այնքան քաջություն կունենաս, որ թողնես մորդ այդ վիճակում և զնաս միսիա»: Այս հարցը կրկին և կրկին լսելով՝ կասկածներ առաջացան իմ սրտում:

Մի օր իմ ցցի նախագահը կանչեց և ասաց ինձ, որ իմ միսիայի կանչը եկել էր և խնդրեց, որ ես այդ երեկո





ԱՆՉՆԱՏՈՒՐ ՄԻ ԵՂԵՃ

«Ընդդիմությունը հայտնվում է գրեթե ամեն տեղ, որտեղ ինչ որ լավ

բան է տեղի ունենում: Դա կարող է պատահել, երբ փորձում եք ստանալ կրթություն: Այն կարող է հարվածել ձեզ ձեր նոր միսիոներական դաշտում լինելու առաջին ամսում: ...

Որևէ կարևոր որոշման ժամանակ պետք է կիրառել զգուշավորություն և խորհրդածել, բայց, եթե եղել է լուսավորում, զգուշացրեք նահանջել լավ բանից: Եթե դա ճիշտ էր, երբ աղոթեցիք դրա մասին և վստահեցիք դրան և ապրեցիք դրա համար, դա այժմ էլ է ճիշտ: Անձնատուր մի եղեք, երբ ճնշումը սաստկանում է»:

Երեց Զեֆրի Ռ. Շոլլանդ՝ Տասներկու Առաքյալների Զվարճումից. «Ուստի մի դնեք նետեք ձեր վստահությունը» *Լիսինա*, հունիս 2000, 38:



գնամ նրա գրասենյակը, որպեսզի նա տար Եկեղեցու վարչությունից եկած այդքան երկար սպասված ծրարը: Ես և հուզված էի և երջանիկ այդ նորությունից:

Նույն օրը իմ աշխատանքի տեղի տնօրենը խնդրեց, որ իր հետ խոսեմ նախքան նախաճաշը: Երբ մտա նրա գրասենյակ, ինձ ողջունեցին սիրալիր ձևով և մենք գրուցեցինք մի քանի բուպե իմ ուսուցման մասին և ինչ էի սովորել ընկերությունում:

Ապա կազմակերպությունում այդ զորավոր մարդն ասաց մի բան, որն այդ քաղաքում շատերի երազանքն էր.

«Դուք լավ աշխատանք եք կատարել այստեղ, որպես պրակտիկանտ, և մենք կամենում ենք աշխատանքի ընդունել ձեզ և պահել թիմում: Դուք ի՞նչ եք կարծում»:

Մա իմ կյանքի ամենադժվարին որոշումներից մեկն էր: Վայրկյանները թվում էին հավերժություն: Թվում էր, թե լսում էի մարդկանց ինձ հարցնելիս, թե արդյոք պատրաստվո՞ւմ էի լքել մորս առանց իմ ֆինանսական աջակցության և գնալու միսիոներական դաշտ:

Այնուամենայնիվ, ես հիշում էի այն բաները, որոնք ես սովորել էի սուրբ գրություններից և իմ

Եկեղեցու ղեկավարներից և մի շատ սրբազան ձևով ես գիտեի անխախտ համոզվածությամբ, որ Աստված ուզում էր, որ ես ծառայեի որպես Իր Եկեղեցու լիաժամկետ միսիոներ: Ես գիտեի, որ Նա հոգ կտաներ իմ ընտանիքին, որ ես կարող էի վստահել Նրան և որ ամեն ինչ լավ կլիներ:


Ես բացատրեցի իրավիճակը իմ տնօրենին և նրա պատասխանը դեռ արձագանքում է մտքումս. «Ես մտածեցի, որ դու համառ երիտասարդ ես, և ահա դու դեռ ես նետում քո կյանքի հնարավորությունը»:


Ես սրտանց շնորհակալություն հայտնեցի նրա առաջարկի համար և 28 օր հետո ես տեղեկացրեցի միսիոներական ուսուցման կենտրոն Ման Պառլոյում, Բրազիլիա:

Իմ միսիայի ժամանակ Տերն ապահովեց իմ ընտանիքի կարիքները Եկեղեցու ընկերների միջոցով և հրաշագործ ուղիներով: Մորս առողջությունը վերականգնվեց և նոր աշխատանքային հնարավորություններ առաջացան քույրերիս և նրա համար:

«Տարօրինակ բաներ» իսկապես պատահում են, երբ մենք որոշում ենք ծառայել Տիրոջը: Սակայն ես կկամենայի խոնարհաբար ավելացնել իմ վկայությունը հազարավոր ուրիշների վկայություններին, ովքեր ստանձնել են Աստծո ծառայությունը, որ միսիոներական ծառայությունը խորապես ազդել է իմ կյանքի վրա: ■

Հեղինակը ապրում է Մանասում, Բրազիլիա







ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ

«Միակ ամենակարևոր բանը, որը դուք կարող եք անել՝ ծառայելու կանչին նախապատրաստվելու համար՝ միսիոներ դառնալն է ձեր միսիա գնալուց շատ առաջ»:

Երեց Դեյվիդ Ա. Բեդար Տասներկու Առաքյալների Զվարճից «Դառնալ միսիոներ» *Liahona*, սոյ. 2005, 45:

ինչպես օրինակ սպիտակեղենը լվանալու, բյուջեին հետևելու և լավ ֆիզիկական վիճակում մնալու մասին:

«Ես հատկապես բավականություն ստացա այն գործնական ուսուցումից, որը սովորեցնում էր, թե ինչպես սկսել ավետարանական գրույցները», - ասում է Ինգեր Սոֆի Ջեյր, Օսլոյի ծխից: «Դա մի բան է, որ ես կարող եմ սկսել անել հենց հիմա»:

Ես բավականություն ստացա քննարկելով, թե ինչպես օգտագործել «*Քարոզիր Իմ Ավետարանը*», ասում է Կարլ Ֆրեդերիկ Օ.-ն Ֆրեդրիկսթադ Շլից: «Ես միշտ մտածում էի, որ միսիոներները սուրբ գրությունների իրենց իսկ ցուցակն ունենին սովորելու, բայց ես պարզեցի, որ այն ինչ ես արդեն անում եմ սեմինարիայում, կօգնի ինձ որպես միսիոներ և այդպես էլ կօգնի այն, ինչ ես արդեն ուսումնասիրում եմ *Քարոզիր Իմ Ավետարանում*»:

Շատ երիտասարդներ ասում են, որ ամենահիշարժան գործնական ուսուցումներից մեկը փորձառու ձեռքերի ներառումն էր սպիտակ վերնաշապիկները արդուկելիս: «Դա հիշեցրեց ինձ, որ կան շատ պրակտիկ հմտություններ, որոնց վրա կարող եմ աշխատել պատրաստվելու լիաժամկետ միսիայի համար», - ասում է Ջեքոբը:

«Ես սովորեցի, որ կան շատ բաներ, որոնք կարող եմ անել հենց հիմա լիաժամկետ միսիոներների հետ, ովքեր ծառայում են այստեղ, այնպես որ մենք բոլորս նույն թիմի

մասն ենք կազմում», - ասում է Մարա Ռ. -ն Սանդվիկա Շլից: «Անդամները ևս միսիոներներ են»:

Որպես հիշեցում, որ միսիոներները ծառայում են ողջ աշխարհով մեկ, հյուրասիրությանը հատկանշական էր բաղադրատոմսեր բոլոր ազգերի տեսականից: «Դա ինձ հիշեցրեց, որ ես պետք է փորձեմ նոր ուտելիքներ այժմ, որպեսզի սովորեմ փորձել բաներ, որոնք ես չեմ ուտում ողջ ժամանակ: Դա կօգնի ինձ ավելի արագ հարմարվել, եթե ես կանչվեմ մի տեղ, որտեղ նրանք ուտում են բաներ, որոնք ես սովոր չեմ», - ասում է Սայմոնը:

Պատրաստվելը


«Օրվա վերջում երիտասարդներից երկուսի և նոր վերադարձած միսիոներների վկայությունները լսելուց հետո, մենք երգեցինք «Կանչված ծառայելու» օրհներգը, - ասում է Լիս Անդրեա Օ.-ն, Ֆրեդրիկսթադ Շլից: «Ես զգում էի, որ եթե ես շարունակեմ երգել այս օրհներգը ողջ ժամանակ, ես կունենամ մշտական հիշեցում, որ երբ մենք միսիոներներ ենք, մենք ծառայում ենք Երկնային Հորը և Նա կօրհնի մեզ»:

Օրվա վերջում ցգի երիտասարդները հասկացան, որ ոչ միայն նրանք նախապատրաստվում էին լիաժամկետ միսիոներական փորձառության, այլ որ նրանք կարող են միսիոներական փորձառություն ունենալ հենց հիմա և մինչև իրենց մնացած կյանքի վերջը: ■

Հեղինակն ապրում է Օսլոյում, Նորվեգիա:

ԻՆՉՊԻՍԻՆ Ե ՄԻՍԻՈՆԵՐՍԿԱՆ ԿՅՈՒՆԸ

Ավելի շատ բան հայտնաբերեք միսիոներական ծառայության համար նախապատրաստվելու վերաբերյալ տեսաժապավեններից, այլ աղբյուրներից և հաճախակի տրվող հարցերի պատասխաններից youth.lds.org -ում: (սեղմեք "Missionary Preparation"):



ԾԱՌԱՅԵԼՈՎ այժմ՝ հետագայում ԾԱՌԱՅԵԼՈՒ համար

Միչ Բարբոսա և Մարիսաա Ուիդիսոն
Հիմնված է իրական պատմության վրա

«Ձեր բոլոր սրտովը Տիրոջը ծառայե՛ք» (Ս Թագավորաց ԺԲ.20):

«**Մ**րի վազքի մրցում կանենք մինչև եկեղեցի», - ասաց Մորմընը, մատնացույց անելով դեպի եկեղեցու ծայրածոլը, որը վեր էր խոյանում պալմաների ծառերից վեր: Ապա նա

վազեց, որքան կարող էր արագ՝ իր փոքր եղբայր Մորիանից առաջ մնալու համար:

Տղաներն իրենց ծնողների հետ արդեն քայլել էին մեկ մղոն իրենց տնից, բայց Մորմընն ու



Մորիանը դեռ վազքի մրցման մեջ էին, երբ նրանք հասան իրենց ծխի ժողովատան մետաղյա դարպասին: Նրանք կանգ առան՝ շունչները տեղը բերելու համար:

Մինչև նրանք կորոշեին, թե ով էր հաղթել, մի տղա կանչեց նրանց. «Ուզո՞ւմ եք *ֆուտբոլ* խաղալ»:

Մորմընը սիրում էր *ֆուտբոլը*, բայց նա և իր ընտանիքը պատրաստվում էին մաքրել ծխի շենքը, որպեսզի այն պատրաստ լիներ եկեղեցու համար հաջորդ օրը:

Մորմընը շարժեց գլուխը: «Ոչ այժմ, գուցե հետո», - կանչեց նա ի պատասխան:

Շուտով Մորմընն ու Մորիանը տքնաջան աշխատում էին: Մորմընը տեղափոխում էր աթոռները և ավելում հատակը իր հայրիկի հետ, մինչ Մորիանը սրբում էր հատակը իր մայրիկի հետ:

Հետո տղաները միասին լվացին զուգարանի հայելիները: «Ես չեի կարծում ինձ դուր կգար եկեղեցին մաքրելը, բայց դա զվարճալի է», - ասաց Մորիանը: «Ինչ կասես դու Մորմըն: Այդ





պատճառով էր, որ դու եկար, փոխարենը *ֆուտբոլ* խաղալու:

Մորմընը մտածեց իր հայրիկի մասին: Նա իրենց ծխի եպիսկոպոսն էր, բայց նա այնուամենայնիվ ժամանակ էր հատկացնում օգնելու ժողովատան մաքրմանը:

«Ես այստեղ եմ, որովհետև ես կամենում եմ նման լինել հայրիկին», - ասաց Մորմընը:

Ապա նա մտածեց իր ծխի միսիոներների մասին: Նրանք զբաղված էին դռները թակելով և կիսվելով Մորմոնի Գրքով ուրիշների հետ: Նրանք հրավիրում էին մարդկանց զալ եկեղեցի, այն շենքում, որը տղաները մաքրում էին:

«Ես այստեղ եմ, որովհետև մի օր ես կամենում եմ նաև միսիա գնալ» մտածեց Մորմընը: «Ես կարող եմ օգնել միսիոներներին եկեղեցին պատրաստելով»:

Մորմընը մտածեց վաղվա մասին, երբ նա և իր եղբայրը վեր կկենան առավոտյան ժամը 6:00-ին, կքայլեն դեպի եկեղեցի իրենց ճերմակ վերնաշապիկներով և փողկապներով և կպատրաստեն աթոռներն ու երգարանները երեխաների սենյակում:

«Ես այստեղ եմ, որովհետև ցանկանում եմ ծառայել Եկեղեցու կոչումում», մտածեց նա:

Մորմընը մտածեց այն մասին, որ շուտով ինքը սարկավագ էր լինելու: Նա կբաժաներ հաղորդությունը և կաներ ուրիշ շատ բաներ ծառայելու համար:

«Ես այստեղ եմ, որովհետև հաջորդ տարի ես կստանամ քահանայություն և ես ուզում եմ անել այն ամենը, ինչ կարող եմ՝ այժմ նախապատրաստվելու համար»:

Մորմընը արդեն արել էր ինչ որ բան քահանայությանը պատրաստվելու համար, նա վաստակել էր իր Հավատք առ Աստված Պարգևը:

Վերջում նա նայեց իր եղբոր արտացոլմանը հայելու մեջ և ժպտաց:

«Ես այստեղ եմ, որովհետև ես սիրում եմ Տիրոջը, - ասաց նա, - և որովհետև այժմ ծառայելը կօգնի ինձ պատրաստվել ծառայելու հետագայում»:

Հեղինակն սպորում է Յոսուպում, ԱՄՆ:

ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏՎԵԼ ՔԱԶԱՆԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Առաջարկներ Դեյվիդ Լ. Բեքինգ՝ Երիտասարդ Տղամարդկանց գերագույն նախագահից.

- Հրավիրեք Հոգուն ձեր կյանք և ընտրեք ընկերներ, ովքեր օգնում են ձեզ ընտրել ճիշտը: Ապրել *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկի չափանիշներով:
- Սովորեք, թե որոնք են լինելու սարկավագի ձեր պարտականությունները:

Կարդացեք քահանայության մասին *Կատարել իմ պարտականությունը Աստծո առջև և Հավատքին հավատարիմ* գրքույկներից: Հաճախեք քահանայության նախագնման ձեր ծխում կամ ճյուղում:

- Պատրաստվեք գնալ տաճար կատարելու մկրտություններ մահացածների համար:
- Ստացեք բավականություն մյուս երիտասարդների հետ զվարճալի միջոցառումներից և հավաքույթներից:
- Իմացեք, որ Երկնային Հայրը վստահում է ձեզ և ձեզ վրա հույս է դնում: Բացահայտեք, թե որքան շատ բան կարող եք անել Նրա օգնությամբ:

ՄԱԹԻԼԴԸ

պատաստվում է Երիտասարդ Կանանց խմբի համար

Ջենն Ուիլքս, Յուտա, ԱՄՆ

Մաթիլդը հուզված էր շուտով Երիտասարդ Կանանց խումբ գնալու կապակացությամբ, բայց նա լիովին համոզված չէր, թե ինչ սպասեր: Այսպիսով, նա խոսեց իր տատիկի հետ: Նրա տատիկը Քույր Բոննի Օսկարսոնն է՝ Երիտասարդ Կանանց գերագույն նախագահը:

Հարցրեք ձեր մայրիկին կամ տատիկին կամ կանանցից որևէ մեկին ձեր ծխում, թե ինչ են նրանք հիշում Երիտասարդ Կանանց մասին: Դուք հավանական է պարզեք որոշ զվարճալի բաներ:

ՆԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏ

Մաթիլդը իր տատիկին անվանում է «Մո», որը մոդեր, շվեդերեն մայր բառի կրճատված ձևն է:

Այն ժամանակ . . .



Երբ Քույր Օսկարսոնը Երիտասարդ Կանանց խմբում էր, նա վաստակում էր կրծքանշաններ՝ հասնելով տարբեր նվաճումների: Նա կարում

էր դրանք մի հատուկ կտորից ժապավենի վրա, մի ծաղիկի հետ, որը ներկայացնում է հավատարմությունը:





ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ՆԱՄԱՐ ՔՈՒՅՐ ՕՍԿԱՐՍՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

- Ջարգացրեք փոխհարաբերություն
Երկնային Նոր հետ աղոթելով և
կարդալով սուրբ գրությունները:
- Պարզեք Անձնական Առաջընթացի
ծրագրի մասին
- Կարդացեք սուրբ գրությունները,
Երիտասարդների Ջորացնելու
համար, և Լիառնան:
- Սկսեք սովորել Երիտասարդ Կա-
նանց թեման: Դուք այն կրկնելու
եք ամեն շաբաթ բոլոր երիտա-
սարդ կանանց հետ միասին:




Հավատք · Աստվածային էություն
Անձնական արժանավորություն
Գիտելիք · Ընտրություն և
պատասխանատվություն · Բարի Գործեր
Ազնվություն · և Առաքինություն

Մենք հավատում ենք, որ, ընդունելով և գործելով
ըստ այդ արժեքների, մենք պատրաստված
կլինենք ամրացնելու տունը և ընտանիքը,
պահելու և կապելու սրբազան ուխտերը,
ստանալու տաճարի արարողությունները
և վայելելու վեհացման օրհնությունները:

(Մոսիա 18:9)



... իսկ Այժմ



Այս վզնոցը կհիշեցի ձեզ լույս լինել
մյուսների համար և պաշտպանել
ճշմարտությունը և
արդարակեցությունը:

Դուք նաև կվաստակեք ժապավեն-
ներ՝ իրականացնելով Անձնական
Առաջընթացի ծրագրի փորձառու-
թյուններն ու նախագծերը:

Ապա դուք կստանաք Երիտասարդ
կանանց մեդալիոն:

ՆՈՐ ՍԿԻՋԲՆԵՐ

Մաթիլդը գնաց հատուկ
միջոցառման, որը կոչվում
էր Նոր Սկիզբներ: Նրանք
ունեցան հետաքրքիր դաս
և սովորեցին Անձնական
Առաջընթացի մասին:

Մաթիլդը նաև աշխա-
տում էր իր Հավատք առ
Աստված Պարզի վրա և սեր-
տում Հավատո Հանգանակը:

ՄԱԹԻԼԴԸ ԱՆՆԱՄԲԵՐ ՍՊԱՍՈՒՄ Է...

- Միջոցառումների
ամեն շաբաթ
- Սկսելու ճանաչել Երիտա-
սարդ Կանանց խմբի մյուս
աղջիկներին:
- Գնալու Երիտասարդ
Կանանց ճամբար:

ՀԱՏՈՒԿ ՇԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Մաթիլդը և նրա շատ զարմիկները Համաժողովների կենտրոնում
էին 2013թ. ապրիլի 6-ին: Բայց նրանք չգիտեին, թե ինչու էր տա-
տիլը հրավիրել նրանց բոլորին գալ գերագույն համաժողովի:
Նրանք զարմացած էին և հուզված, երբ նա հաստատվեց որպես
Երիտասարդ Կանանց կազմակերպության նախագահ:



Մեր պահն է շողալու

Համարձակ ♩. = 58-68

Խոսք՝ Յան Փինբորո
Երաժշտություն՝ Զենիա Բաի Փերի

Աղջիկներ

1. Տի - րո - ջը կը - հե - տե - վեմ _____ Ես - թե - րի պես հը - նում, _____ Քա -
2. Կը - ծա - ռա - յեմ զո - րու - թյամբ _____ Ես Ա - րի - սի նը - ման: _____ ճըշ -

Տղաներ

ջու - թյամբ և հա - վատ - քով կը - ծա - ռա - յեմ Երկ - նա - յին Հոր ծը - րագ - րում: _____ Մեր -
մար - տու - թյու - նը բո - լո - րին կը - պատ - մեմ: Հա - վատ քրս վառ կը - պա - հեմ: _____ Մո -

ձա - վո - րիս ես կօրհ - նեմ _____ Նե - փի - ի պես հը - նում, _____ Երկ -
րո - նին չը - հանձ - նը - վեց, _____ Մին - չև վերջ պալ - քա - րեց: _____ Նը -

Երգչախումբ

*Աղջիկներ
և տղաներ*

նա - յին Հոր ծը - րա - գի - րը կը - պատ - վեմ Եվ միշտ այն կը - պաշտ - պա - նեմ: _____
րա նը - ման ճըշ - մա - րիտ ես կը - լի - նեմ, Դրո - շըս բար - ձըր կը - պա - հեմ: _____ Պահն է

շո - դա - լու և պատ - րաստ - վե - լու: Խոսքն ենք սո - վո - րե: Պատ - րաստ ենք կիս - վե:

© 2013 by Jan Pinborough and Janice Kapp Perry

Բոլոր իրավունքները վերապահված են:

Այս երգը կարող է բազմացվել միայն առանձին դեպքերում ոչ
առևտրային նպատակներով եկեղեցում կամ տանն օգտագործելու համար:
Այս ծանուցումը պետք է ներառվի բոլոր օրինակներում:

ՀԱՏՈՒԿ ՎԿԱ



Երեց
Քվենթին Լ. Քուր

Տասերկու Առա-
քյալների Քվորումից
Տասերկու Առա-
քյալների Քվորումի
անդամները Հիստա-
րիկաբանական հաստի
վիճակներն են:

Ինչպե՞ս կարող ես օգնել ընտանեկան պատմության աշխատանքին

Երեց Քուրն առաջադրում
է Ընտանեկան Ծառի
համախմբող կազմակերպել:
Սիս թե ինչպես.

Հանձնարարեք բոլորին ձեր
ընտանիքից բերել ընտանեկան
պատմություններ, պատմվածքներ
և լուսանկարներ: Ներառեք հատուկ
բաներ, որոնք պատկանել են ձեր
տատիկ -պապիկներին և
ծնողներին:

Հետաքրքիր է սովորել
ընտանիքի անդամների կյանքի
մասին, թե որտեղից են նրանք եկել և
թե ինչպես են ապրել:

Պարզեք, թե ինչ տաճա-
րային արարողություններ դեռ
պետք է արվեն և նշանակումներ կա-
տարեք տաճարային աշխատանքի
համար:

Օգնեք սքան անել և
բեռնել այս պատմվածքները և
լուսանկարները Ընտանեկան Ծառում
FamilySearch.org-ում:



«Արևմտյանից ու ճյուղերից», Լիանոնա, մայիս 2014, 47:

«Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին»
 ուղերձը եկել է Աստծուց՝ իմ
 ընտանիքին օգնելու համար

Հատանիք

Հայտարարություն
աշխարհին

աշխարհում

**Հիտուս Քրիստոսի վերջին Օրերի Սբեթիկ Եկեղեցու Առաջին
Նախագահությունը և Տաններկու Առաքյալների Խորհուրդը**

Առաքյալներ Առաջին Հատման

Մենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրդրի Սրբերի Ազգության խաղաղությունը և Տառներկույն Առաքյալների խորհուրդը, պաշտոնապես հայտարարում ենք, որ տրամադրում և վերջ ամուսնությունը հաստատվել է իսկապատշաճ կերպով, որ ընտանիքի անվանապարտը դիրք ունի Արարչի ծրագրի համար:

Մարտիկների Լավագործ տարաբանակի և կանաչ, բոլորն արարվել են Աստուծո աստվածով: Յուրաքանչյուրը երկնակի մարմնի կոթորից փրկված հոգու աստվածով: Յուրաքանչյուրը երկնակի մարմնի, յուրաքանչյուրը ու ունի գեղություն որդիի կամ դուստրի և է, որովհետ արարվել, յուրաքանչյուրը ունի աստվածական բնույթ և ճակատագրով: Մեկն անսխառ հիմնական բնույթա-աստվածական բնույթ և ճակատագրով: Երկուսն էլ և աստվածական կանգնել և նպաստաբեր, փրկել է խառնակությունից, երկուսն էլ և աստվածական կանգնել և նպաստաբեր:

[illegible][illegible]

Սերը հայտարարում ենք, որ մեր հրահանգներն ընդհանրապես չեն կատարվում։ Մենք հաստատում ենք, որ ղեկավարվում են Աստուծո կողմից։ Մենք հաստատում ենք, որ իրենց և նրա կարողությունն Աստուծո հավերժական ծրագրով կենդանի են։

հոգ տանելու միակնոց և երեխաների ուսուցիչ
գոյությունն են» (Մադրաս 6ԳԵ.3): Ծառերի ստոր պարսպա-
կ' դաստիարակել երեխաներին սիրո և առաքինության

ապահովել նրանց կրթությանը, ապահով Աստուծոյ պատգամը տարածելու և ծառայել մեկը մյուսին, պանծել է, որ ապրին: Ամուսիններն ու նապաշտը բաղադրացիներ լինել, որոնք էլ, որ ապրին: Աստուծոյ առջև այս պարկածաբան մայրերն ու հայրերը հաշվետու էլ լինեն Աստուծոյ առջև համար: Երեւոյն իրականացան համար:

[illegible][illegible]

ապարտակամությունները կամայական
առջև: Դեռ ավելին, մենք զգուշացնում ենք, որ բնութագրվում
մանաստներին, համայնություններին և ազգերին կապառափի անկա
թյունները
միջի ստորը
թյունները, որոնց մասին կամայականությունները կեն հին ու նոր մ
թյունները, որոնց մասին կամայականությունները կեն հին ու նոր մ

Մեք դիմում ենք պատասխանատու լինելու համար ձեր համայնքի և ձեր քաղաքի անվտանգության, առողջապահության, մշակութային, սպորտային, կրթական, աշխատանքի, բնակարան-կոմունալ տնտեսության, ընտանիքի և սոցիալական ապահովության ոլորտներում իրականացվող աշխատանքներին:

Կոթմասնաբաժնի կապիտալի փոխանցումը կատարվել է Նախագահի Գործողության Բ. Հիմնարկի կողմից:

Էրին Անդերսոն և Ջին Բինգհամ

Երեխաները մեծ ուժ ունեն՝ ուժ ընտանիքներում՝ տաբերություն առաջ բերելու: Բոլոր ընտանիքները նույնը չեն, բայց յուրաքանչյուր ընտանիք կարևոր է Երկնային Հոր համար: Նա ուզում է, որ մեր ընտանիքները ուժեղ լինեն, այսպիսով՝ Նա տվել է մեզ «Ընտանիք» Հայտարարություն Աշխարհին» [փաստաթուղթը] օգնելու մեզ: Երկնային Հայրը գիտի որ **դուք** կարող եք օգնել ձեր ընտանիքին ուժեղ լինել:

Պոլ կարող եք մաս լինել հավերժական ընտանիքի, որը ձեր օգնության կարիքն ունի:
Պոլ կարող եք բերել երջանկություն, բարություն և սեր ձեր ընտանիք:

Դուք կարող եք լսել միմյանց, միասին աշխատել և խաղալ, ներել և օգնել միմյանց:

Դուք կարող եք կարդալ սուրբ գրությունները ձեր ընտանիքի հետ:

Դուք կարող եք լինել լավ օրինակ ձեր ընտանիքի համար, երբ դուք աղոթում եք և պահում պատվիրանները: ■

Հեղինակներն ստորում են Յոսոսյում, ԱՄՆ:

Մուրբ գրություն

- Հովհաննես ԺԵ.11

Մտքեր ընտանեկան
գրույցի համար

Երկաթային Հայրենիքի ուղում է բոլոր ընտանիքները ուժեղ լինեն և վերադառնան Նրա մոտ: Խոսքը այն մասին, թե ինչ կադող է անել ընտանիքի յուրաքանչյուր անդամը՝ ձեր ընտանիքին օգնելու ուժեղ լինել:

Ես կարող եմ գորացնել իմ ընտանիքը

Ես կարող եմ գորացնել իմ ընտանիքը

Ես կարող եմ գորացնել իմ ընտանիքը

Ես կարող եմ գորացնել իմ ընտանիքը

Ես կարող եմ գորացնել իմ ընտանիքը

Ես կարող եմ գորացնել իմ ընտանիքը

Ես կարող եմ գորացնել իմ ընտանիքը

Ես կարող եմ գորացնել իմ ընտանիքը

Դուք կարող եք:



Ձարդարեք մի մաքուր, դատարկ պահածոյի տուփ (դեպի արդարություն) պիտակով և որոշ լուսանկարներով կամ նկարներով: Լրացրեք թղթի շերտերի վրա մտքեր այն մասին, թե ինչպես կարող եք գորացնել ձեր ընտանիքը: Կտրեք բառաշերտերը և դրեք դրանք տուփի մեջ: Ամեն օր ընտրեք մի բառաշերտ տուփից և արեք ինչ այն ասում է: Երբ փորձեք ապրել ձեր գաղափարներով, դուք կարող եք տարբերություն առաջ բերել ձեր ընտանիքում:

ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ:



Ես Բարբարան եմ Չիլիից

Հատված հարցազրույցից՝
Էմի Ջեյն Լիվիթ

Բարբարան ապրում է Չիլիում՝ մի երկրում, որը Հարավային Ամերիկայի արևմտյան ափին է։ Այն երկար է և նեղ և ժայռավեճի ձև ունի։ Որոշ շրջաններ շոգ են և չոր (ինչպես օրինակ Ատակամա անապատը), իսկ որոշ շրջաններ էլ մերձարևադարձային և խոնավ են (ինչպես Ջատկի կղզին)։ Նա ապրում է Չիլիի մայրաքաղաք՝ Սանտյագոյում։ ■

Հեղինակն ապրում է
Յոստայում, ԱՄՆ։



Ես միակ Եկեղեցու անդամն եմ իմ դպրոցի դասարանում։ Սա ինձ հնարավորություններ է տալիս պատմել իմ ընկերներին Հիսուս Քրիստոսի և Մորմոնի Գրքի մասին։ Մի անգամ իմ լավագույն ընկերը խնդրեց ինձ ուսուցանել իրեն, թե ինչպես աղոթի։ Այսպիսով, ես արեցի դա։ Ապա մենք երկուսով աղոթք ասացինք դպրոցում նախաճաշի ժամանակ։



Ես ինը տարեկան եմ և ունեմ երկու փոքր եղբայր։ Ես փորձում եմ լավ ավագ քույր լինել և օգնել նրանց հոգ տանել և խաղեր խաղալ նրանց հետ։ Ես սիրում եմ երեխաներին հոգ տանել։ Ես ուզում եմ ուսուցիչ դառնալ, երբ մեծանամ։

2013թ. ես դարձա ութ տարեկան և մկրտվեցի և հաստատվեցի հայրիկիս կողմից։ Ես այնքան հուզված էի։ Դա հաստով փորձառություն էր, որը ես միշտ կհիշեմ։

* «Ողջուն, ընկերներ», իսպաներեն



Բարբարայի պայուսակը փաթեթավորված է նրա սիրելի բաներից մի քանիսով: Այդ բաներից որո՞նք դուք կփաթեթավորեիք ձեր պայուսակում:



ՄԵՐ ԷԶԸ




Մի օր, մկրտվելուց քիչ առաջ, ես տատիկիս տանն էի, երբ նա գնաց նկուղ ինչ որ բան վերցնելու: Նա սայթաքեց և վայր ընկավ և չկարողացավ վեր կենալ: Նա կանչեց ինձ, բայց ես հեռու-տացույց էի նայում և չլսեցի նրա կանչը: Մոտ 10 րոպե հետո ես ցածրաձայն լսեցի անունս «Թոմ»: Գնացի նրան որոնելու և նրան հատակին պառկած գտա: Ես բավականաչափ ուժեղ չէի նրան բարձրացնելու համար, այսպիսով վազեցի հարևանի տուն: Նա եկավ և օգնեց տատիկին ոտքի կանգնել:

Տատիկն ասաց ինձ. «Թոմ, դա Սուրբ Հոգին էր, որ դու լսեցիր: Ես քեզանից շատ հեռու էի, որպեսզի ինձ լսեիր»:

Ես գիտեի, որ դա Սուրբ Հոգին էր, ով շշնջաց ինձ: Այժմ ես մկրտված եմ և ուրախ եմ ունենալով Սուրբ Հոգու պարգևը:

Թոմ Ռ., 8 տարեկան, Գերմանիա



Լիու Կ., 7 տարեկան, Էկվադոր



Նատալիա Ա., 10 տարեկան, Կոլումբիա

Օլիվիա Ի., 8 տարեկան, Ռումինիայից, սիրում է օգնել իր մայրիկին մաքրելու տունը: Նրա մայրն ուսուցանում է իրեն և նրա 13 ընկերներին, և երբ նրանք ընդմիջում են անում, նա սիրում է ձևացնել, որ նա է ուսուցիչը: Նա սիրում է գնալ ուղևորությունների իր ծնողների հետ և ժամանակ անցկացնել իր տատիկի ու պապիկի հետ: Երբ նա մկրտվեց, նա շատ մոտիկ զգաց Երկնային Հորը, և նա երախտապարտ է, որ կարող է ունենալ Սուրբ Հոգին՝ օգնելու իրեն որոշումներ կայացնել: Նրա Երեխաների խմբի սիրելի երգն է. «Հետևիր Մարգարեին» (Մանկական երգարան, 110):



Թիերրի Մ., 7 տարեկան, Բրազիլիայից, սիրում է հաճախել Երեխաների խումբ և երգել օրհներգեր: Նա գիտի, որ տաճարը Տիրոջ տունն է:



Դուք կարող եք ներկայացնել ձեր նկարչությունը, լուսանկարը կամ փորձառությունը առցանց liahona@lds.org-ում, է-փոստով liahona@lds.org հասցեով "Our Page" թեմատիկ գծում կամ փոստով.

Liahona, Our Page
50 E. North Temple St., Rm.2420
Salt Lake City, UT 84150-0024, USA

Յուրաքանչյուր ներկայացում պետք է ներառի երեխայի լրիվ անունը, սեռը և տարիքը (3 -ից 11 տարեկան) գումարած ծնողների անունը, ծովափ կամ ճյուղը, ցիցը կամ շրջանը և ծնողների գրավոր թույլտվությունը՝ օգտագործելու երեխայի լուսանկարը և ներկայացումը (Էփոստն ընդունելի է): Խմբագրման արդյունքում նյութերի ծավալը կարող է կրճատվել և բովանդակությունը պարզեցվել:



Երեց Աղրիան Օգոա
Յոթանասունից

Վեր նայեք



«Ուրեմն արթուն կացեք, ես
սամեն ժամանակ աղոթք արեք»
(Ղուկաս ԲԱ.36):

Երբ ես ութ տարեկան էի, իմ
երկու զարմիկները և ես ու-
ղարկվեցինք մոտակա քաղաքը
մթերքներ բերելու: Ետ նայելով
ես զարմանում եմ, թե որքան մեծ
վստահություն էին տաժում տա-
տիկս և իմ հորաքույրը մեր հան-
դեպ: Առավոտյան երկինքները
պայծառ էին և մաքուր, երբ մենք
մեկնեցինք մեր երեք ձիերով:

Տափաստանի մեջտեղում մենք
որոշեցինք իջնել մեր ձիերից
և գնդակախաղ խաղալ: Մենք
այնքան տարված էինք մեր խա-
ղով, որ վեր չնայեցինք՝ տեսնելու
երկինքը ծածկող մութ ամպերը:
Մինչև մենք կհասկանայինք,

որ փոթորիկ էր սկսվում, մենք
նույնիսկ ժամանակ չունեցանք
նստել մեր ձիերը: Ուժեղ անձրևը և
կարկուտը մեզ այնպես ուժգնորեն
զարկեց, որ ձիերին թամբից ազա-
տելն ու թամբի տակ ծածկվելն
այն ամենն էր ինչ մենք կարող
էինք անել: Այդ ընթացքում մեր
ձիերը փախուստի դիմեցին:

Առանց ձիերի, թաց և մրսած
մենք սկսեցինք քայլել, որքան
կարող էինք արագ, դեպի մո-
տակա քաղաքը: Արդեն ուշ էր,
երբ մենք մի տուն գտանք և թա-
կեցինք դուռը: Այդտեղի ընտա-
նիքը չորացրեց մեզ, կերակրեց
համեղ լոբու բուրիտոներով, ապա
անկողնում պառկեցրին մի հողե
հատակով սենյակում:

Զարմիկներս և ես արթնացանք

առավոտյան պայծառ արևից և
գեղեցիկ երկնքից: Մի մարդ թա-
կեց դուռը, որոնելով երեք կորած
տղաների: Ես երբեք չեմ մոռանա,
թե ինչ տեսա տուն տանող մեր ճա-
նապարհին՝ մարդկանց մի ամբոխ,
ովքեր մեզ որոնել էին ողջ գիշեր:
Նրանց բոլորի առջևից իմ սիրելի
տատիկս, հորեղբայրս ու հորա-
քույրս էին: Նրանք գրկեցին մեզ և
արտասովեցին՝ երջանիկ, որ գտել
են իրենց կորած երեխաներին:

Մեր սիրառատ երկնային
Հայրը լավ տեղյակ է մեզանից:
Նա անհամբեր սպասում է մեր
տունդարձին: Մեր շուրջ բոլորը
հոգևոր փոթորիկների նշաններ
կան: Եկեք վեր նայեք և պատ-
րաստվե՛ք՝ գորացնելով մեր
վկայություններն ամեն օր: ■

Ընտանեկան մի թիմ



Ավելի հեշտ է հաղթել, երբ բոլորը աշխատում են միասին:

Շերելի Հարդի

Հիմնված է իրական պատմության վրա

«Երբ մենք օգնում ենք, մենք երջանիկ ենք»
(Մանկական երգարան, 198):

Ամմոնը հառաչեց, երբ նա և հայրիկը թողեցին ֆուտբոլի խաղը: «Ես չեմ հասկանում», - ասաց նա: «Մենք այնքան շատ լավ խաղացողներ ունենք: Ինչո՞ւ չենք կարողանում գոլ խփել»:

Հայրիկը լավ ֆուտբոլ խաղացող էր: Գուցե նա կարողանար օգնել:

«Կարծում եմ, դուք կարիք ունեք սովորելու

աշխատել որպես թիմ», - ասաց հայրիկը: «Դուք բոլորդ ուզում եք գոլ խփել, այնպես չէ՞»:

«Այո», ասաց Ամմոնը: «Բայց մենք չենք կարող բոլորս լինել այն մեկը, ով գոլ կխփի: Դու այդ ի նկատի ունե՞ս»:

Հայրիկը գլխով արեց: «Դուք չեք կարող ինքնուրույն գոլ խփել: Առաջինը պաշտպանները պետք է վերցնեն գնդակը մյուս թիմից, ճի՞շտ է»:

Ամմոնը ծիծաղեց: «Բավականին դժվար է գոլ խփել, եթե դու

գնդակ չունես»:

«Ճիշտ է», - ասաց հայրիկը: «Ապա պաշտպանները տալիս են այն ինչ որ մեկին, ով կարող է գոլ խփել: Ոչ ոք չի կարող դա մենակ անել»:

«Կռահում եմ», - ասաց Ամմոնը:

Երբ նրանք տուն հասան, մայրիկը երեխային գրկած ճաշ էր պատրաստում: «Ինչպե՞ս էր խաղը», - հարցրեց նա:

«Մենք նորից պարտվեցինք», - ասաց Ամմոնը: «Բայց հաջորդ



անգամ մենք ավելի լավ
կխաղանք»:

«Դա լավ մոտեցում
է», - ասաց մայրիկը:

«Ես սոված մեռնում
եմ», գոռաց Միգելը,
երբ նա, Սամուելը և
Լուկասը ներս վազեցին:

«Տղաներ, կարո՞ղ
եք օգնել սեղան
պատրաստել և հավաքել
խաղալիքները», -
հարցրեց մայրիկը:

Բոլոր չորս տղաները
հառաչեցին:

«Բայց ես չեմ խաղացել
խաղալիքներով», - ասաց
Սամուելը:

«Դա մի հավերժություն

կտևի», - գոչեց Միգելը:

Հայրիկը ծիծաղեց:
«Կարծում եմ մեր
ընտանիքն ունի նույն
խնդիրը, ինչ Ամմոնի
թիմը»:

«Ի՞նչ է դա», - հարցրեց
Սամուելը:

«Մենք միասին չենք
աշխատում», - ասաց
Ամմոնը: «Մենք բոլորս
ուզում ենք ճաշ ուտելու
գուր խփել: Բայց մենք
ամեն ինչ թողնում ենք
մայրիկի վրա»:

«Ճիշտ է», - ասաց
հայրիկը: «Ինչպե՞ս
կարող ենք աշխատել
որպես թիմ»:

Ամմոնը մի գաղափար
ունեց: «Ի՞նչ կասեք,
եթե Սամուելը և
ես դնենք սեղանը:
Մյուս տղաները
կարող են հավաքել
խաղալիքները»:

«Հիանալի միտք է»:

Շուտով ճաշը
պատաստ էր: Ամմոնը
ծալեց թևերը աղոթքի
համար: Նա ուրախ
էր, որ իր ընտանիքն
աշխատեց որպես թիմ:
Նա հույս ուներ, որ իր
ֆուտբոլի թիմը կարող
էր անել նույնը: ■

*Հեղինակն ստորում է Ալբերտայում,
Կանադա:*



**Երեց
Մ. Ռասսել Բալլարդ**
Տասներկու
Առաքյալների
Թվորումից

ԽԱԲԿԱՆՔՆԵՐ

Աշունը առանձնապես ոգևորող ժամանակ է ձկնորսների համար, քանի որ սա այն ժամանակն է, երբ կարմրախայտն անհազ սովից դրդվում է լավ սնվելու, որպեսզի իր մարմինն ամրացնի վրա հասնող ձմռան սակավ ուտելիքի դեմ:

Ձկնորսի նպատակն է հմուտ խաբկանքի միջոցով որսալ կարմրախայտին: Գիտակ ձկնորսն ուսումնասիրում է կարմրախայտի պահվածքը, եղանակը, ջրի ընթացքը, միջատները, որոնցով սնվում է կարմրախայտը, և թե երբ են բազմանում այդ միջատները: Հաճախ նա անձամբ է պատրաստում օգտագործվող խայծը: Նա տեղյակ է, որ փոքր կարթին կցված այդ արհեստական միջատը պետք է կատարյալ խաբկանք լինի, եթե ոչ՝ կարմրախայտը կնկատի անգամ ամենափոքր արատը և կանտեսի կեղծ ճանճին:

Որքա՞ն ոգևորիչ է տեսնել ինչպես է կարմրախայտը կտրում ջրի հոսանքը, կուլ տալիս թռչող միջատը, ապա դիմադրում, մինչև որ ուժասպառ է լինում և հանձնվում: Մրցակցությունը ընթանում է ձկնորսի գիտելիքի ու հմտության և ազնվահոգի կարմրախայտի միջև:

Արհեստական խայծեր օգտագործելով ու խաբելով ձուկ որսալը նման է նրան, թե ինչպես է Լյուցիֆերը հաճախ գայթակղում, խաբում և փորձում ծուղակը գցել մեզ:



Ինչպես ձկնորսը, որը գիտի, որ կարմրախայտը դրդվում է սովից, Լյուցիֆերը գիտի մեր «ախորժակը» կամ թուլությունները և մեզ փորձում է արհեստական խայծերով, որոնք, եթե կուլ տանք, մեզ կարող են դուրս հանել կյանքի հոսանքից՝ գցելով իր անողորմ ազդեցության տակ: Եվ ի տարբերություն ձկնորսի, որը ձուկը որսալուց հետո այն անվնաս բաց է թողնում ջրի մեջ, Լյուցիֆերը կամավոր ձևով մեզ բաց չի թողնի: Նրա նպատակն է իր զոհերին դարձնել իր պես թշվառ:

Հիմնական մեթոդներից մեկը, որ նա օգտագործում է մեր դեմ՝ նրա ունակությունն է ստել և խաբել՝ համոզելու մեզ որ չարը բարի է և բարին չար: Հենց սկզբից ի վեր մեծ Խորհրդում Երկնքում, սատանան «փնտրեց կործանել

մարդու կամքի ազատությունը, որը ես՝ Տեր Աստվածս, տվել էի նրան» (Մովսես 4.3):

Այսօր էլ մարդու Աստվածատուր կամքի ազատության համար ճակատամարտը շարունակվում է: Սատանան և նրա ծառաներն ունեն իրենց խայծերը մեր ողջ շուրջ բոլորը, հույս ունենալով, որ մենք կտատանվենք և կուլ կտանք նրա ճանճերը, որպեսզի նա կարողանա փաթաթել մեզ իր կեղծ միջոցներով:

Եղբայրներ և քույրեր, թող որ բոլորս իրազեկ լինենք արհեստական թռչող միջատներից, որոնք մեզ են մատուցվում մարդկանց

հակառակորդ ձկնորսի՝ Լյուցիֆերի կողմից: Թող որ մենք իմաստություն և հոգևոր խորաթափանցություն ունենանք՝ զանազանելու և մերժելու նրա բազմաթիվ վտանգավոր առաջարկները:

Եվ ձեր բոլորի համար, ուլքեր որևէ տեսակի կախվածության զոհ են դարձել, հույս կա, որովհետև Աստված սիրում է Իր բոլոր զավակներին, և Տեր Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ բոլոր բաները հնարավոր է դարձնում: ■

«Օ, այն չարի խորամանկ ծրագիրը», Լիահոնա, *կոյ. 2010, 108-110:*

ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ



Արդյոք ես պիտե՞ր եմ այսօր:

«Չնայած մենք հարգում ենք այն պիտոներներին, ովքեր քայլեցին Սուրբ Լեյքի դաշտավայրի տափաստաններով, կան մեծ քանակությամբ ապրող պիտոներներ այսօր: Նրանք չեն հրում ձեռնասալյեր, բայց նրանք ճիշտ նույնն են այնքան շատ ուղիներով. նրանք լսել են Տիրոջ ձայնը Մորմոնի Գրքի միջոցով և իրենց անձնական աղոթքների միջոցով: Հավատքով և ապաշխարությամբ նրանք մտել են մկրտության ջրերը և հաստատունորեն դրել իրենց ոտքերը ավետարանի հարուստ հողի վրա: Որպես Քրիստոսի աշակերտներ, նրանք հոժարակամ են զոհաբերել նրա համար այն, ինչն արդար է և ճշմարիտ: Եվ Սուրբ Հոգու պարգևով նրանք անսասան են մնում դեպի հավերժական կյանք իրենց ուղղությունում»:

Երեց Նիլ L. Ասդերսեն՝ Տասներկու Սուաբյալների Քվորումից, «Եկեք Նրա մոտ», *Լիառնա*, մայիս 2009, 80:

Նաև այս համարում

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՆՆԵՐԻ ՆԱՄԱՐ



Էջ 44

Պաշտպանելով այն, ինչի մենք հավատում ենք

Հինգ երիտասարդ չափահասներ պատմում
են, թե ինչպես են պաշտպանել իրենց
հավատքը ընդդիմության դեմ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԱՄԱՐ

Ինչպե՞ս հարցեր տալ, որոնք կարևոր են

Հարցերը կարող են ուսուցանման հզոր գոր-
ծիքներ լինել, եթե ճիշտ ձևակերպեք դրանք:
Այս հոդվածը կտվորեցնի ձեզ դա անել:



Էջ 54

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԱՄԱՐ



Էջ 68

Բարի գալուստ Երիտասարդ Կանանց Միություն

Քույր Բոննի Լ. Օսկարսոնը և նրա թոռնուհին՝
Մաթիլդը պատմում են, թե ինչ է ձեզ սպասվում
Երիտասարդ Կանանց Միությունում: